Հակոբ Արբակի Սանասարյան

ՄԱՀՎԱՆ ԹԱՎՇՅԱ ԹԱԿԱՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՌ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ

Երեւան
ՆՏ Հոլդինգ
2016

ՀՏԴ 26 / 27 : 2 - 23
ԳՄԴ 86.3
Ս 190

Ս 190 Սանասարյան Հ. Ա.
Մահվան թավշյա թակարդ/ Հ. Սանասարյան - Երևան: ՆՏ Հոլդինգ, 2016. - 220 էջ:

Վերլուծականը նվիրված է հուդայական և քրիստոնեական կրոնների հետևորդների աշխարհընկալումներում Աստվածաշնչի կարգավորիչ դերին: Աստվածաշունչը կրոնական պարտադրանքով հուդայականներին (հրեաներին) հաշտեցնում է աշխարհի տիրակալի, իսկ քրիստոնյա ժողովուրդներին՝ ծառայի կարգավիճակի հետ: Փաստերի համադրմամբ ցույց է տրվում, որ հուդայականությունը (հրեաների կրոնը) և քրիստոնեությունը նույն նպատակն են հետապնդում և նաև այն, որ այդ երկու կրոններն իրականում միասնական են և մեկ կրոն են ներկայացնում: Սույն գրքում հրեաների և քրիստոնյաների կրոնների միասնությունը անվանվում է Ընդհանուր հուդայականություն:

ՀՏԴ 26 / 27 : 2 - 23
ԳՄԴ 86.3

ISBN 978-9939-870-06-9

© Հ. Սանասարյան, 2016
© ՆՏ Հոլդինգ, 2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աստվածաշնչի ընթերցումն այն համոզմունքն է ձևավորում, որ էկոլոգիական և, ընդհանրապես, ցանկացած ոլորտի խնդիրներով հետաքրքրվողների համար վաղ թե ուշ առաջնահերթ է դառնալու հավատքի և, գլխավորապես, կրոնի վրա լուրջ ուշադրություն դարձնելը: Զարմանալի է, որ կրոնը էկոլոգիական խնդիրների շարքում չի դասվում, այն դեպքում, երբ կրոնը ահռելի դեր է կատարում մարդու մտածելակերպի և աշխարհայացքի ձևավորման գործում, կանխորոշում է բնությունից օգտվելու ձևերն ու մեթոդները, մշակութային դրսևորումները և, ընդհանրապես, աշխարհընկալումը: Կրոնը, մարդու և հասարակության հոգեկանի և նրա գործունեության վրա իր ազդեցության ուժով թերևս համեմատելի լինի Երկրագնդի տեկտոնիկ երևույթին: Ինչպես Երկրագնդի կարողությունների ամենահզոր դրսևորումը տեկտոնիկան է, որը փոխում է Երկրագնդի ձևը՝ նոր լեռնաշխարհներ ու փոսորակներ ստեղծելով տեղափոխում է ծովերն ու օվկիանոսները, այնպես էլ կրոնը մարդու (հասարակության) հոգեկանի և գործելակերպի վրա ազդող ամենահզոր գործոնն է: Պատահական չէ, որ հաճախ է կրկնվում այն ասույթը, թե կրոն ընտրողը միաժամանակ ընտրում է և իր ճակատագիրը:

Իհարկե, ճիշտ կլիներ, եթե մարդկությունը ապրեր առանց սնոտիապաշտության, այսինքն՝ մարդիկ ապավինեին միայն իրենց բանականությանը, սակայն հազարամյակներ շարունակ ժողովուրդները ստեղծել են իրենց նպատակներին համահունչ աստվածներ և կառավարվել նրանց անունների հետ կապված գաղափարախոսություններով, իսկ դրանք, բարեբախտաբար, հիմնականում վերաբերել են բնապաշտությանը:

Բացարձակորեն այլ է հատուկ նպատակներով ստեղծված և այլազգիներին պարտադրած կրոնների հարցը: Այդպիսիներից առանձնապես մեծ վտանգ են ներկայացնում այն կրոնները, որոնք, ի հակադրություն բնապաշտությանը, երկրորդական են համարում իրական աշխարհն ու իրական կյանքը, քարոզում են խոնարհում, հեզություն, հնազանդություն, ստրկություն, աղքատություն, ցմահ կուսություն, պարտադրում են չհակառակվել թշնամուն, փառաբանում են մահը և մարդկանց նպատակները, երազանքներն ու իղձերը կապում են

անդրշիրիմում՝ մեռնելուց հետո բարեկեցիկ կյանքով «ապրելու» հետ:

Այս խնդրին անդրադառնալն ինձ համար պարտադրանք դարձավ այն բանից հետո, երբ Աստվածաշնչի ընթերցումը ինձ բերեց այն համոզման, որ այդ գիրքը մարդկությունը բաժանում է երկու մասի. հրեաներին՝ եբրայեցիներին տալիս է լիարժեք կյանքով ապրելու և, ի վերջո, աշխարհին տիրանալու իրավունք, իսկ քրիստոնյաներին՝ հրեաների համար օտար ժողովուրդներին՝ ծառայի կարգավիճակ: Նաև հասկանալի դարձավ, որ Հին և Նոր կտակարանները բացարձակորեն նույն նպատակն են հետապնդում և միտված են նույն ծրագրի իրականացմանը: Ճիշտ է, հուդայականությունը՝ հրեականությունը (Հին կտակարան) և քրիստոնեությունը (Նոր կտակարան) միմյանցից անկախ և նույնիսկ հակասական կրոններ են ներկայացվում, սակայն այդ երկու կրոնների միասնությունը և նույն կրոն լինելն ու նույն նպատակին ծառայելը որևէ կասկած չի հարուցում: Հրեական կրոնի՝ հուդայականության և քրիստոնեության միաձույլ կրոնը կարելի է անվանել Ընդհանուր հուդայականություն, սակայն նշված կրոնների աստվածաբանները խնդիրը բացարձակորեն այլ կերպ են ներկայացնում:

Աստվածաշունչը՝ Հին կտակարանը կարդալիս միշտ փնտրել եմ աստծու կերպարը, այն աստծո, որը կա հավատացյալների ընկալումներում, սակայն այդտեղ բացակայում է բարություն ու արդարություն խորհրդանշող Աստծո կերպարը: Աստվածաշնչում առկա աստվածն աստված չէ, այն արյունարբու դև է, որը իր հետևորդ ժողովրդին շարունակաբար դիվային հատկություններ է ներարկում:

Նախապես նպատակս էր՝ մի հոդվածով անհամաձայնությունս հայտնել այն թյուրըմբռնման կամ կեղծիքի առումով, որ իբր հայերն ու եբրայեցիները (հրեաները) նույն հոգեկերտվածքն ու նպատակներն ունեն: Այդ հոդվածը մնաց անավարտ, սակայն այն առիթ դարձավ սույն գրքի ի հայտ գալուն:

Գրքում օգտագործված աստվածաշնչյան քաղվածքները վերցրել եմ հետևյալ հրատարակությունից՝ «Աստուածաշունչ, գիրք Հին եւ Նոր կտակարաններու», եբրայական եւ յունական բնագիրերէն թարգմանուած, Աստուածաշունչի միացեալ ընկերութիւններ, Պէյրութ, 1985:

Գրքում բոլոր ընդգծումները իմն են՝ Հ.Ս.:

ՆԱԽԱԲԱՆ

«Գարուն» ամսագրում հրապարակած (2001 թ., թիվ 9) «Համակարգված դավադրություն» վերլուծությունն ունեցավ մի շարք արձագանքներ, իսկ դրանց շարժառիթներից մեկն էլ այն էր, որ այնտեղ Աստվածաշնչից մեջբերումներ կան: Ընդդիմախոսներից մեկը, ով հայտնի է որպես բնապահպան և քրիստոնեության մոլեռանդ ջատագով, հեռախոսազրույցում ինձ խորհուրդներ տվեց և մեղադրեց մի շարք հարցերում. «Որպեսզի դու կարողանաս ըմբռնել Աստվածաշնչի մեջ աստծո խոսքով գրված ճշմարտությունները, նախ. պետք է հավատացյալ դառնաս: Այդ դեպքում քո մեջ կմտնի սուրբ հոգին և նրա զորությամբ դու արդեն կկարողանաս հասկանալ Աստվածաշնչում գրված ճշմարտությունները, իսկ այժմ ինչքան ուզում ես կարդա, միևնույն է՝ դու քո կարդացածից ոչինչ չես հասկանա: Աստվածաշնչից դու ընտրովի մեջբերումներ ես անում և դրանք որակում որպես անարդարության ու դաժանության դրսևորումներ: Քո արածն անպատվություն է ոչ միայն Աստվածաշնչի, այլև մեր նախնիների հանդեպ: Եթե քո ասածի մեջ ճշմարտության նշույլ լիներ, ապա դա կնկատեին ու իրենց խոսքը կասեին, օրինակ, Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, իսկ նրանք, ինչպես հայտնի է, Աստվածաշունչն անվերապահորեն ընդունել են որպես աստծո խոսք և այնտեղ գրվածները՝ բացարձակ ճշմարտություն»:

Չարձագանքելով զուտ կրոնական դոգմաներից բխող մեղադրանքներին՝ փորձեմ տեսակետս արտահայտել այն համոզմունքի կամ առանձին դեպքերում նպատակայնորեն արծարծվող մտայնության առումով, որ մեր ազգային մեծերն, իբր, անվերապահորեն են ընդունել աստվածաշնչյան գաղափարները:

Այդպես չէ: Գրչության ծալքերում ծվարած և զրույցներից մեզ հասած տեղեկություններն ասում են, որ հայ մտավորականներից շատերը տեսել, զգացել ու գիտակցել են Աստվածաշնչում ամփոփված և որպես կրոնական դոգմաներ մատուցվող գաղափարախոսության օտարածին և խիստ վտանգավոր լինելը:

Աստվածաշնչի դեմ ընդվզման օրինակ կարող է ծառայել Պատմահոր հետևյալ միտքը. «Եվ այս հայտնի է ամենքին, թե դժվարագյուտ և տաժանելի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր ժամանակները, մանավանդ որոշելը նախարարական ցեղերի սերումը Նոյի երեք որդիներից: Մանավանդ որ **Ս. գիրքը յուրայիններից զատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներինը լքեց, իբրև արհամարհելի և իր կողմից նշանակվելու անարժան** (ազգերի)» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990 թ., էջ 14): Պատմահայրը դժվար թե ծանոթ չլիներ նաև իրենից 350-400 տարի առաջ ապրած Փիլոն Եբրայացու (Ալեքսանդրացու) ազգայնամոլական, մարդկանց հուսահատության բերող մտքերին, առավել ևս, որ այդ հեղինակի գրվածքը պատահականորեն թե հատուկ ուշադրություն գրավելու նպատակով ընտրվել է հայ թարգմանչական առաջին գրքերի շարքում. «Յուրաքանչյուր ազգ կթողնի իր ուրույն ճանապարհը, և, դեն նետելով իր նախնիների սովորույթները, կդառնա միայն մեր օրենքները պատվելուն, երբ վերջիններիս փայլի պայծառությունը ուղեկցվի ազգային բարգավաճումով, այն կխամրեցնի մյուսների լույսը, ինչպես ծագող արեգակը խամրեցնում է աստղերին» (Հայոց լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004 թ., 8 էջ): Թեև Եբրայացու ասածը, դժբախտաբար, իրականություն է դարձել. հարյուրավոր ժողովուրդներ մոռացել են իրենց սրբությունները և հրեականին են խոնարհվում, սակայն պետք է նկատի ունենալ, որ սիոնիստները նոստրադամուսներ հորինելու և իրենց ուզածին պատմական ճշմարտության շապիկ հագցնելու հարցում փորձառու վարպետներ են:

Աստվածաշնչի, նույնն է թե հուդայական և քրիստոնեական կրոնների դոգմաների նկատմամբ Խորենացու ընդվզումները հավանաբար լուրջ բնույթ են կրել, այլապես ինչով բացատրել Խորենացու նկատմամբ Հայոց եկեղեցու առաջնորդների անմար ատելությունը: Ասածի վառ ապացույց կարող է լինել հետևյալը. Ղազար Փարպեցին (442 թ. - VI դարի սկիզբ) իր հովանավոր Վահան Մամիկոնյանին վտարանդիությունից հղած նամակում, նկարագրելով եկեղեցու չարանենգ սպասավորների կողմից իրեն պատճառած տառապանքներն ու թշվառությունները, նաև որոշ տեղեկություն է հայտնում Մովսես Խորենացու (410 թ. - V դարի

վերջ) կրած հալածանքների մասին: Փարպեցին գրում է. «(Հայոց եկեղեցու քահանայության գլխավորները) նախանձից դրդված, ինձ վրա բարդեցին բազում բանսարկություններ՝ պնդելով, թե Ղազարն ասում է՝ պոռնկությունը մեղք չէ... Արդ ո՞ր անհավատը, էլ չե՛մ ասում՝ քրիստոնյան, այդպիսի բան կանցկացնի իր մտքով, հետո էլ ուրիշների մոտ կշշնջա այսպիսի խոսքեր. ո՞ր անմիտը, ո՞ր տգետը, ո՞ր հրեան, ո՞ր այլաղանդը... Իմ մասին նաև ասում են՝ «Աղանդավոր է»: Եվ այս շտապում են բոլորին հայտնել, տկարամիտներին էլ հավատացնել ու ցույց տալ, թե իմ մեջ եղած շնորհքի վարդապետությունը թերի է: Ես գրի անցկացնելու համար նույնիսկ հույժ աղտեղի բան եմ համարում անունն այն աղանդի, որով հանդգնում են ինձ բամբասել... Ասում են նաև, թե «Ուր որ պիղծ ու չարագործ մարդ կա, Ղազարը նրա մոտ է լինում և ինքը սիրում է նմաններին»... Այն օրից, ինչ որ, տե՛ր, ինձ տարար վանքը, **մինչև հալածվելուս օրը** վանքի եկամուտներից կամ երախայրիքներից մի դրամ անգամ իմ անձի վրա չեմ ծախսել... Եվ ինձ մերկ ու անարգված հանեցին՝ զրկելով մանկությունից ի վեր իմ բոլոր վաստակածներից. ինձ չտվին նույնիսկ հունարեն գրքերս, որոնք այնտեղ թափված են իբրև ցեցերի կերակուր... Այժմ շրջում են իմ ունեցվածքով պճնված և ինձ էլ ծաղրի են ենթարկում... Իսկ ուրիշ առաքելանման մարդիկ ինչո՞ւ այսպիսի և սրանից էլ ավել տառապանքներ կրեցին այս աշխարհում և խստագույն վշտով վախճանվեցին: **Երանելի փիլիսոփա Մովսեսը**, որ արդարև, մինչդեռ ապրում էր իր մարմնական կյանքը, արդեն երկնային զորականներին էր քաղաքակից, չէ՞ որ **տեղիցտեղ հալածվեց հայոց այդ աբեղաների ձեռքով**: Չէ՞ որ **նրա լուսավորող ու տգիտահալած գրքերը անգիտությունից փաթաղիկես** (ասորերեն նշանակում է՝ մոլորված, խանգարված) **էին համարում** նրանք և **էլի ուրիշ բաներով խայտառակեցին**: Սակայն հետո այլոց տված ամոթանքից՝ մի խաբեական եպիսկոպոսություն մահադեղի պես խմեցրին այս սրբին և խեղդեցին: Եվ թե նա **վախճանի ժամին ի՜նչ ահավոր նզովքի գիր է թողել քահանայության գլխավորների վրա**, գիտեմ, որ դուք լավ տեղյակ եք... (Նա իր կյանքը) անչափ անհանգիստ աշխատությունների և գիշեր-ցերեկ Հայոց աշխարհը լուսավորող վաստակի վրա դրեց: **Նրա ոսկորները գերեզմանից հանել տվին և գետը թափեցին**: Հրեշտականման այն Տերին նույն այդ անհանգիստ **հալածանքներով մահու հասցրին և դեռ հիմա**

էլ անհագ քինախնդրությամբ մեռածի հետ են կռիվ տալիս» (Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982 թ., էջ 457-485):

Այստեղից նաև կարելի է ենթադրել, ավելի ճիշտ, պարզորոշ երևում է, որ Խորենացուն՝ իր կենդանության օրոք հռչակ բերող գործերը մեզ չեն հասել, ոչնչացվել են (նրա լուսավորող ու տգիտահալած գրքերը խանգարված էին համարում): Խորենացու նկատմամբ անհանդուրժողականությամբ ու ատելությամբ լցված, նրա շիրիմը պղծող, ոսկորները գետը թափող եկեղեցականներն ու նրանց ժառանգորդները ինչպե՞ս կարող էին հանդուրժել ու պահպանել Խորենացու՝ մարդկանց լուսավորող ու տգիտահալած գրքերը: Իսկ Փարպեցու «Թուղթ Վահան Մամիկոնյանին» աշխատությունը կրակի չի մատնվել և մեզ է հասել, հավանաբար այն բարեբախտությամբ, որ իշխանական արխիվները կամ նշված գործը եկեղեցուն մատչելի չի եղել:

Հռչակավոր մաթեմատիկոս, աստղագետ, տիեզերագետ, տոմարագետ, Հայաստանում ճշգրիտ գիտությունների հիմնադիր Անանիա Շիրակացին (605-685 թթ.) նույնպես հալածվել է Հայոց եկեղեցու կողմից և, ըստ պահպանված ավանդույթի, իր կյանքի վերջին տարիներին ապաստանել է Վենետիկում: Հանճարեղ գիտնականի մահվանից հետո էլ հալածվել է նրա ստեղծագործությունը: Շիրակացուց ավելի քան 400 տարի հետո՝ Գրիգոր Մագիստրոսն իր ժամանակի կաթողիկոսին գրած նամակում ամոթաբեր է համարել Շիրակացու ստեղծագործություններն արգելանքի տակ պահելը: Այստեղ հարց է առաջանում, թե այդ ո՞ր ստեղծագործությունները կարող էին արգելանքի տակ հայտնվել: Վստահորեն կարելի է ասել՝ Աստվածաշնչի տառին ու ոգուն չհամապատասխանողները:

Բացի Աստվածաշնչի դեմ առկա ակնառու փաստերից, կան նաև ստեղծագործություններ, որոնց մեջ դավանաբանական անհամաձայնությունները քողարկված են ենթատեքստում: Օրինակ, Նարեկացու՝ «անիրավ չէ աստված, որպեսզի մեկի մեղքի պատճառով մյուսին պատժի» արտահայտությունը տրամաբանորեն հերքում, ի չիք է դարձնում Աստվածաշնչում նկարագրված նախճիրները, երբ հրեշավոր դաժանությամբ ոչնչացվում են բուսականությունը, կենդանիները, ազգերն ու նրանց ստեղծած մշակույթը: Իսկ նրա «**Երանի այն**

ժողովրդին՝ որ իր աստծուն է պաշտում» ազգաբաղձ ուղերձը ուղղակի շշմեցուցիչ է, այն առումով, երբ նրա գլխավոր ստեղծագործությունը հայ մարդուն քրիստոնեական կրոնին կապված-կառչած ու հավատարիմ լինելուն է նվիրված («Արա՛ այնպես, որ զօրեղացած կրկնակի չափով բուրումն այս գրքիս խոստովանութեան ազդի շատերին, նման համասփյուռ, ամենատարած տանն աշխարհալիր եւ լինի նրանց յիշատակի պէս անմոռանալի... Որպէս խստագոյն դատախազ՝ համառոտ մէջբերումներ անելով մարգարէական գրուածքներից, ոչ թէ նրանց հետ պարելով ուրախ, այլ **լծակցելով նրանց ողբերին, ուր կան հառաչներ, հեծութեան ձայներ**, ցասկոտ բողոքներ, խորտակիչ նախատինքներ, սաստիկ լաց ու կոծ» (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 2015, էջ 154-155):

Ինչպես տեսնում ենք, մեր մեծերից շատերն ընդվզել են աստվածաշնչյան որոշ դոգմաների դեմ, ինչից կարելի է ենթադրել, որ նրանց համար Աստվածաշունչը չի համարվել բարություն ու արդարություն ամփոփող բացարձակ ճշմարտությունների շտեմարան, ինչպես ներկայացվում է: Նաև մեզանից դարեր առաջ ապրած մեր մեծերից շատերը կարող էին և ուշադրություն չդարձնել Աստվածաշնչում առկա վտանգավոր ու կործանարար զարգացումների համար հիմք հանդիսացող գաղափարների վրա՝ դրանք ընդունելով որպես լոկ առասպելներ, այսինքն՝ ճիշտ այնպես, ինչպես կան, իսկ դրանց իրականացմանն ուղղված ցանկացած նկրտում՝ որպես մանկամիտ բաղձանք կամ բորբոքված երևակայության դրսևորում: Պետք է նաև նկատի ունենալ, որ նրանց ապրած ժամանակներում չեն եղել այսօրվա գիտատեխնիկական կարողությունները և համաշխարհային մակարդակով կատարվող գերարագ գործընթացները և դրանք մարդուն հասանելի դարձնելու օպերատիվ միջոցները, հետևաբար և նրանք, ինչքան էլ որ օժտված լինեին կյանքի խորը ընկալմամբ, միևնույն է՝ չէին կարող տեսնել համաշխարհային զարգացումներն այն մակարդակով, ինչպես դա տեսանելի է մեր ժամանակներում: Օրինակ, անցյալի մեր մեծերի ապրած ժամանակներում տեղեկություններ հավաքելու, վերլուծելու և իրականությանը մոտ եզրահանգման գալու հնարավորություններն այսօրվա նորագույն տեխնոլոգիաների դարաշրջանի համեմատությամբ՝ հազարավոր անգամներ ավելի դժվար հասանելի են եղել:

Եվ ապա՝ կյանքի զարգացման գործընթացներն այնքան դանդաղ են եղել, որ մեկ անհատի կյանքի ընթացքում կատարվող իրադարձություններն ու համամոլորակային փոփոխություններն այսօրվա համեմատությամբ կարելի է աննշան համարել: Հազարավոր, նույնիսկ հարյուրավոր տարիներ առաջ, ո՞ւմ մտքով կարող էր անցնել, որ արհեստական երկրաշարժով հնարավոր է բնակավայրերն իրենց բնակիչներով ոչնչացնել, նպատակայնորեն ազդել կլիմայի վրա, ցամաքում ու ծովում կործանարար փոթորիկներ առաջացնել, իրականացնել հոգեբանական պատերազմ, և դրանք էլ կատարվեին, հիմնականում, մեկ կազմակերպության դրդմամբ ու աջակցությամբ: Ինչպես նաև. նրանցից ո՞վ կհավատար, որ նույն գաղափարական ուղղվածքով փոքրաթիվ մարդկանց՝ մեկ կազմակերպության ձեռքում հնարավոր կլինի հավաքել համաշխարհային կապիտալի, բնական պաշարների ու նյութատեխնիկական հարստությունների հիմնական զանգվածները և մասնակիորեն՝ համաշխարհային քաղաքականության վարման լծակները:

Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն, որ վերը նշված ժամանակներում համաշխարհային տիրապետության ձգտող ուժն իր կազմակերպչական կարողությամբ ու ֆինանսա-տնտեսական և այլ միջոցներով հազարավոր անգամներ զիջել է այսօրվանին, հետևաբար և՝ նրա ձգտումները կարող էին միայն մարդկանց հեգնանքը հարուցել:

Բացի նշվածներից, մեր ժամանակներում հնարավորինս մանրազնին ուսումնասիրվել ու գույքագրվել են համաշ-խարհային բնական պաշարները, երկրների տնտեսական, մշակութային, մարդուժի հարստությունները, սոցիալական ու ժողովրդագրական իրավիճակները, նույնիսկ էթնոսների հոգեբանությունն ու նրանց նպատակները: Ճիշտ է, դրանք արվում են հատուկ նպատակով և հասու են պատվիրատուին, այդուհանդերձ, դրանց ամփոփ հաշվետվություններն այլևայլ ճանապարհներով հասնում են նաև հասարակությանը:

Դժբախտաբար, գիտատեխնիկական նվաճումները համաշխարհային տիրապետման ձգտող ուժին լայն հնարավորություններ են տվել իր մարդակուլ նպատակներն աննախադեպ արագությամբ իրականացնելու համար, քանի որ նա իր ֆինանսատեխնիկական ու կազմակերպչական

ունակություններով կարողանում է դրանք իր նպատակին ծառայեցնել, և իր ճանապարհին չունենալով որևէ լուրջ խոչընդոտ՝ գիտության նվաճումներին զուգընթաց հզորանում է: Այստեղ նաև պետք է ասվի, որ եթե գոնե մեկ-երկու տասնյակ երկրներ համախմբվեն և հենց այդ նույն գիտատեխնիկական նվաճումների լույսի տակ լրջորեն վերլուծեն նշված մահասփյուռ ուժի արմատները, նպատակը, անցած ճանապարհն ու այսօրվա գործունեությունը և արդյունքում ձևավորված եզրահանգումները տեղեկատվական միջոցներով հասանելի դարձնեն համաշխարհային հանրությանը, այսինքն՝ կարողանան այդ ուժին լիովին բացահայտել, ապա այդ ուժի չեզոքացումն ու կործանումը որևէ դժվարություն չի ներկայացնի:

Պետք է նաև նկատի ունենալ, որ հիշյալ ժամանակներում մարդն ավելի սնոտիապաշտ է եղել, իսկ եկեղեցին, պետական ու հասարակական կյանքում՝ անսահման իշխանություն է ունեցել, հետևաբար՝ մարդուն կրոնական դոգմաների ճզմիչ ուժի տակ պահելու միջոցները շատ ավելի զորեղ ու ազդու են եղել, քան այսօր է: Նաև՝ արդյոք նշված պայմաններում հնարավո՞ր էր, որ Աստվածաշնչի վերաբերյալ քննադատական խոսք ասողը կամ նրա որևէ դոգման վերլուծողը հանգիստ կյանք ունենար կամ, ընդհանրապես, կյանք ունենար, և նրա արտահայտած մտքերն էլ գրավոր աղբյուրներում պահպանվեին ու հարյուրամյակներ անց մեզ հասնեին, երբ եկեղեցական հայրերի ձեռքումն են եղել նաև գրչության արտադրանքը և սրա պահպանությունը (Եկեղեցու ճաշակին չհամապատասխանող և մեզ հասած ստեղծագործություններն արդեն իսկ ցույց են տալիս, որ Հայոց եկեղեցում մշտապես եղել են նաև Հայոց կյանքը կարևորող հոգևորականներ): Նման գաղափարներ արտահայտողներին, անկախ նրանց կրոնական և աշխարհիկ բարձրագույն դիրքից կամ գիտության ու մշակույթի բնագավառներում մեծագույն վաստակից, միևնույն է՝ դատապարտել են (ցավոք, այսօրվա զարգացումները մեզ համար այդպիսի ապագա են ուրվագծում): Պաշտոնական կրոնի դոգմաներին հակասող ստեղծագործությունները մեզ են հասնել, առ հիմնականը, պատահականորեն կամ, ինչպես ընդունված է ասել՝ «տեղեկատվական հոսքի»՝ ծածկագրերի կամ աստվածաշնչյան դոգմաները կասկածի տակ դնողներին դատապարտող քննադատականների միջոցով: Չէ՞ որ քրիստոնեությունը

պետական կրոն դառնալուց հետո, օրինակ, Հայաստանում ամեն ինչ՝ օրենսդրությունն ու ամբողջ իրավական դաշտը, ներքին ու արտաքին քաղաքականությունը, դիվանագիտությունը, դատարանը, հարկային համակարգը, բանակը, գիտությունը, դպրոցը, մշակույթը, անվանակոչումը, մարդու մտածելակերպը և այլն, դժբախտաբար, ենթարկվել են կրոնի իշխանությանը, և դրանցից դուրս ամեն ինչ համարվել է սրբապղծություն ու դավաճանություն և անողոքաբար դատապարտվել, հալածվել ու ոչնչացվել է: Մտովի տեղափոխվելով այդ ժամանակները և վերլուծելով հավանական իրավիճակը, կարելի է նաև չբացառել, որ առանձին հանճարների ու իրատես հայրենասեր-նվիրյալների անունները կա՛մ մեզ չեն հասել, կա՛մ էլ մատուցվում են հակառակ բովանդակությամբ: Վերջինիս վառ օրինակն է մեծ դիվանագետ ու բոցաշունչ հայրենասեր Վասակ Սյունին: Բացի այդ, հայ ժողովրդի առանձին ոխերիմ թշնամիներ ներկայացվում են որպես հայ ժողովրդի բարերար և իղձերի արտահայտիչներ, օրինակ, լուսավորիչ հորջորջվող պարթև Գրիգորը: Եկեղեցու գերակայության պայմաններում կերտվող Հայոց պատմագրությունը մոռացել է իր բուն առաքելությունը և ամենևին չի խոսում հազար յոթ հարյուր տարի առաջ պարթև Գրիգորի գլխավորությամբ իրականացված Հայոց առաջին ցեղասպանության մասին, երբ նա հայոց բանակի գլխավոր հրամանատար և երկրի հոգևոր առաջնորդ դառնալով, հենց այդ բանակով կոտորեց ու արտաքսեց հայ ժողովրդին, ոչնչացրեց նրա կերտած հազարամյա մշակույթը:

Ոչ միայն Հայաստանում, այլև քրիստոնեական կրոնի գերակայություն ունեցող մյուս երկրներում, բանական մարդը պարտադրված է եղել կրոնական աղոթքներով ու երկիմաստ արտահայտություններով քողարկել իր միտքն ու զգացմունքը: Այդ պայմաններում ապրուստից ու կյանքից չզրկվելու համար ձեռնարկված հնարամտություններից է հետևյալ ողբերգական օրինակը. «Ֆրանսիացի մաթեմատիկոս Բլեզ Պասկալն իր կյանքի վերջին տարիներին դառնալով ճգնակյաց կրոնավոր, հասկացել է, որ չի կարելի քննադատական միտքը հաշտեցնել Աստվածաշնչի հետ, և պատրաստել է մի հմայիլ, որը կրել է հագուստի աստառի տակ: Դա մի թղթի կտոր է եղել՝ հետևյալ բառերով. «Աբրահամի աստված, Իսահակի աստված, Հակոբի աստված, բայց ոչ փիլիսոփաների ու գիտնականների աստված»

(Մ. Շախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմը, Երևան, 1979 թ., էջ 143): Ինչպես տեսնում ենք, անգամ հանճարը հանուն գոյատևման՝ ստիպված է եղել առերևույթ սնոտիապաշտ ներկայանալ:

Աստվածաշնչի որոշ «գիտակներ» փորձում էին ինձ համոզել, որ առանց ուսուցիչ-մեկնաբանի Աստվածաշունչ կարդալն անօգուտ է և նույնիսկ՝ անթույլատրելի: Նրանք, մոլորեցնող բացատրություններ տալով, փորձում էին հիմնավորել, որ քարոզիչների օգնությամբ Աստվածաշունչ ուսումնասիրողն իբր հեշտությամբ կհամոզվի, որ, օրինակ, հրեա ժողովրդի հետ մեկտեղ աստծո ընտրյալ է նաև հայ ժողովուրդը: Նման անհեթեթ ու մոլորեցնող մտավարժանքներով նրանք նաև ձգտում էին ինձ համոզել, որ իբր հայ ժողովուրդն իր պատմությամբ, աշխարհընկալմամբ ու հոգեբանությամբ հրեաներին ամենամոտ ժողովուրդն է և ազգային միաբանության ու բարգավաճման հասնելու համար պետք է հետևի հրեաների օրինակին, այսինքն՝ ամբողջովին սփռվի աշխարհով մեկ՝ հարյուրավոր տարիներ հետո նորից վերամիավորվելու նպատակով, և այլ ցնդաբանություններ: Կործանարար այս քարոզչությունն արվել է լայն ընդգրկումով և այսօր էլ շարունակվում է: Հայերի ու հրեաների նմանության, ոչնչով չհիմնավորված, իրականությունից բացարձակորեն հեռու և հայերիս համար խիստ վտանգավոր տեսակետը միայն հակահայ կողմը չէ, որ տարածում է: Դժբախտաբար, նպատակայնորեն հորինված այդ սուտն ու կեղծիքը այլևայլ միջոցներով ամրագրվել է հայ մարդու մտապատկերում և, այսպես ասած, դրվել է նրա շուրթերին և դարձել է նրա «թամբած ձին»: Մենք՝ հայերս, առիթը բաց չենք թողնում այդ տեսակետը սփռել ուր հնարավոր է՝ նույնիսկ պաշտոնական ելույթներում: Նշված կեղծիքը հայ մարդու մեջ ամրագրվել է դարեր շարունակ հետևողականորեն իրականացվող «ուղեղների լվացման» միջոցով: Այժմ էլ գիտությամբ զբաղվող, հայոց անուն-ազգանուն կրող որոշ մարդիկ, արդեն գիտության անունից են հայտարարում, թե հայը և հաբիրունը-իսրայելցին-եբրայեցին-հրեան իբր նույն ծագումնաբանական արմատներն ունեն և աշխարհագրական նույն վայրումն են ձևավորվել: Սիոնիզմի (սիոնիզմը՝ Ընդհանուր հուդայականությունը՝ հրեաների կրոնի և քրիստոնեության միասնությունը տարբեր

ժամանակաշրջաններում այլևայլ անուններով է հանդես եկել) նպատակներից ելնող այս սուտը շրջանառության մեջ դնողներից առայժմ ո՛չ գիտական հիմնավորում են պահանջում և ո՛չ էլ նրանց մասին քննադատական որևէ խոսք է ասվում: Ամենևին չպետք է զարմանալ, եթե սրանք էլ Հայաստանի պետական պարգևներ ստանան, ինչպես, օրինակ, այդպիսի պարգևների արդեն «արժանացել» են ամերիկյան հակահայ հայագետներից մի քանիսը:

Ինչ վերաբերում է Հայաստանը դատարկելու, հայերիս այլևայլ երկրներում սփռելու դիվային հորդորներին, ապա այդ քարոզչության հովանավոր ուժը, հավանաբար, հույսեր է փայփայում, որ դյուրահավատ, անցած պատմական ուղուց դասեր չքաղող, սեփական հավատքից օտարված և հստակ նպատակ չունեցող հայ ժողովուրդը երբևէ կարող է հավատալ նաև այս խաբկանքին, և այդ դեպքում արդեն կանխորոշված կլինի հայ ժողովրդի ինքնառչնչացումը (այս խնդրում նշված ուժին, թերևս լավատեսությամբ է տոգորում հարյուրամյակներ առաջ կատարվածը... երբ հայ ժողովուրդը պարտադրաբար սկսեց հետևել իրեն դեպի կործանումը տանող կրոնական ուսմունքին և այսօր էլ հլու-հնազանդորեն շարունակում է կրել այդ լուծը): Բարեբախտաբար, այսօր արդեն շատերն են հասկանում, որ էթնիկ ինքնության պահպանման, աշխարհածավալ նկրտումների և այլ հարցում հրեաներին չի կարելի համեմատել մյուս ազգերի, մանավանդ՝ հայերիս հետ, և եթե ցանկացած այլ ազգ փորձի ընդօրինակել հրեաներին, այսինքն՝ չունենալ պետականություն և գոյատևել միայն աշխարհով մեկ ցրվելով, ապա դժվար թե կարողանա անգամ մի քանի հարյուրամյակ պահպանել իր ինքնությունը: Որպես օրինակ կարող է ծառայել այն ողբերգական փաստը, որ ժամանակին հայոց հոծ համայնքներ ունեցած աշխարհի շատ վայրերում այժմ հայ ազգաբնակչության փոխարեն միայն տապանաքարեր ու աղոթավայրերի (քրիստոնեական) ավերակներ են մնացել, իսկ հայ մարդը լուծվել է տեղացիներին՝ ուծացվել, փաստորեն՝ մահացել: Նրանք, ովքեր մատնանշում են, որ տեսեք, թե Հայաստանից դուրս ինչքան հայեր կան, ապա թող ցույց տան թեկուզ մի հայի, որի արմատները երկու-երեք հարյուր տարի առաջ է կտրվել իր բնօրրանից, և այժմ էլ խոսում ու մտածում է հայերեն և իրեն հայ է զգում (քրիստոնեական

կրոնի հետևորդ երկրներում հայերիս ուծացումն անհամեմատ արագ է ընթանում, քան մահմեդական և այլ կրոնների հետևորդ երկրներում):

Հրեաների՝ եբրայեցիների ազգային միասնականությանը և, որպես դրա արդյունք, նրանց ձեռք բերած հաջողությունները մատնացույց անողները, թերևս փորձեն նախ իմանալ, թե ի՞նչն է հրեաների գործունեության ճկունության ու շարունակական հաջողությունների գրավականը, և թե ինչո՞ւ առանձին ուսումնասիրողներ հրեաներին համեմատում են հալած մետաղի հետ, երբ այն տարբեր կաղապարներում ընդունում է դրանց ձևերը, սակայն իր հատկությամբ մնում է նույն մետաղը: Այս խնդրում վճռորոշը, թերևս այն է, որ նրանք հազարավոր տարիներ է, ինչ ունեն իրենց սեփական կրոնը, նպատակը և դրան համապատասխան հստակ ծրագիրը, իսկ բացահայտ, ինչպես նաև ծածուկ կառույցները, տարբեր երկրներում գոյություն ունեցող հրեական համայնքներին հաղորդակից են դարձնում նշված ծրագրին և, ընդհանրապես, հրեական կյանքին: Նաև այն, որ ով իրեն հրեա է համարում, ճիշտ կլինի ասել՝ թալմուդական հրեա է, ենթարկվում է հուդայականության-սիոնիզմի ծրագրով նախանշված կանոններին (ռուսական գրականության մեջ թալմուդական հրեան անվանվում է «ժիդ», իսկ թալմուդի հետ առնչություն չունեցողը՝ «եվրեյ»: Կարծում եմ, ճիշտ են վարվում հայ այն հեղինակները, որոնք նույն իմաստով օգտագործում են «ջհուդ» և «հրեա» բառերը): Հրեաներին նաև հաջողվել է իրենց ազգային ծրագիրը կրոնական դոգմա դարձնել և այն պարտադրել մյուս ժողովուրդներին (այս մասին կխոսվի հետագա շարադրանքում):

Նորից պետք է ասեմ, որ ամբողջովին հորինված ու սուտ է այն տեսակետը, թե, իբր, մենք՝ հայերս, հրեաների հետ միևնույն հոգեբանությունը, ճակատագիրն ու կենսակերպն ունենք: Ամենևին այդպես չէ: Հակառակը, դյուրությամբ կարելի է ցույց տալ, որ նշված խնդիրներում հրեաների հետ ամենաանհամեմատելին թերևս մենք ենք՝ հայերս, քան ինձ հայտնի որևէ այլ ժողովուրդ: Շատ եմ ցանկանում իմանալ, թե որո՞նք են այդ ընդհանրությունները: Հայերիս և հրեաների (հաբիրուների, եբրայեցիների, իսրայելցիների) հավատքին, անցած ուղուն ու ժամանակակից իրավիճակին ծանոթ ցանկացած անձ գիտի, որ նշված տեսակետը հիմնազուրկ է:

Մնում է միայն պարզել, թե ի՞նչ նպատակ է հետապնդում այս հորինված քարոզչությունը:

Ուսումնասիրողները ցույց են տվել, որ, թե՛ Հին և թե՛ Նոր կտակարանները (Աստվածաշունչը) հրեաներն են գրել. նրանք Հին կտակարանը դարձրել են իրենց՝ հուդայական կրոնի, իսկ Նոր կտակարանը՝ քրիստոնեական կրոնի սուրբ գիրք: Հրեաների կրոնը՝ հուդայականությունը և քրիստոնեությունը ձևավորել ու ձևավորում են իրենց հետևորդ ժողովուրդների աշխարհընկալումը և կանխորոշում նրանց ապագան: Ինչպես արդեն ասվել է, հուդայականությունը իրականում այս երկու կրոնների միասնությունն է (Ընդհանուր հուդայականություն), սակայն շփոթ չառաջացնելու նպատակով, հետագա շարադրանքում՝ հուդայականությունը և քրիստոնեությունը կօգտագործվեն այն իմաստով, ինչպես առայժմ դրանք ընկալվում են:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Հին և Նոր կտակարանները հայերեն թարգմանելիս, պատահականորեն թե ինչ-ինչ պատճառով ու նպատակով, «բիբլիան» թարգմանել են «աստվածաշունչ», այսինքն՝ աստծո խոսքով գրված: Հրեականության ծրագիրը և դրան հասնելու մեխանիզմներն աստվածաշունչ անվամբ ներկայացնելով ավելի հեշտ ու դյուրին են դարձրել այդտեղ ամփոփված մահաբեր գաղափարները մարդկանց մտքում ամրագրելու գործը, քանզի այդ գրքի ճակատին գրվածն արդեն քարոզում է, որ իբր գործ ունենք աստծո խոսքի հետ, իսկ աստծո խոսք ասելով, սովորաբար մարդիկ հասկանում են որպես բարություն ու արդարություն:

Նպատակս է, Աստվածաշնչից մեջբերումներ կատարելով ցույց տալ, թե հրեաների համար ինչ արժեք է ներկայացնում Աստվածաշունչը և ուրիշ ժողովուրդների համեմատությամբ նրանց ինչ գերակայություններ է տալիս, ինչպես նաև այն, թե այդ գիրքն ինչ արժեք ունի քրիստոնյա ժողովուրդների համար և հրեաների համեմատությամբ, նրանց ինչ գերակայություններ է տալիս:

Ահա այս ժողովուրդը մատակ
առիւծի պէս պիտի ելլէ ու առիւծի
պէս պիտի բարձրանայ ու պիտի
չպառկի մինչեւ որ որսը չուտէ ու
սպանուածներուն արիւնը չխմէ
(Թուոց 23:24)
Ձեր ոտքի ամէն կոխած տեղը ձերը պիտի ըլլայ
(Բ Օրինաց 11:24)

ՀՈՒԴԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ Աստվածաշնչի, հրեաներն աշխարհի մյուս ժողովուրդների նկատմամբ ունեն բազում առավելություններ ու գերակայություններ: Բերեմ դրանցից մի քանիսը.

1. Հրեան գոտեմարտել է աստծու հետ ու հաղթել է նրան, իսկ պարտված աստվածն էլ օրհնել է հրեային ու նրան կոչել՝ Իսրայել, որպես աստծուն և մարդկանց հաղթողի՝

*«Յակոբ միանակ մնաց ու մարդ մը կգոտեմարտէր անոր հետ մինչեւ արշալոյս Եւ երբ մարդը տեսաւ թէ անոր չյաղթեց, անոր զիստին ամոլաջիլին դպաւ եւ անոր հետ գոտեմարտած ատենը Յակոբին զստին ամոլաջիլը խախտեցաւ: Եւ մարդը ըսաւ. «**Թո՛ղ տուր զիս, քանզի արշալոյսը երեւցաւ**»: Յակոբը ըսաւ. «**Չեմ թողուր քեզ, մինչև որ զիս չօրհնես**»: Անիկա ըսաւ իրեն. «**Ի՞նչ է անունդ**»: Ան ալ ըսաւ. «Յակոբ է»: Անիկա ըսաւ. «**Ալ անգամ մըն ալ քու անունդ Յակոբ չըսուի, հապա Իսրայէլ. վասն զի Աստուծոյ հետ ու մարդոց հետ մարտնչեցար եւ յաղթեցիր**»* (Ծննդոց 32:24-28):

Մեջբերումից պարզ երևում է, որ «ամենակարող» Եհովան բացի ֆիզիկական ուժով Հակոբին զիջելուց, նաև չի հասկացել, որ գոտեմարտում է իր հարազատ թոռան հետ, ով էլ, հենց իր նախկինում տված խոստում-երդումի, պետք է սերի, այսպես ասած, ընտրյալ ու սուրբ ժողովրդին, այսինքն՝ հաբիրուներին-եբրայեցիներին-իսրայելցիներին-հրեաներին: Սակայն եբրայեցի Հակոբը, ի տարբերություն իր «ամենակարող» (իրականում՝ թույլ, ոչ հեռատես ու անտաղանդ) աստված պապի, հասկացել

ու վստահորեն իմացել է, թե ո՛ւմ հետ է գոտեմարտում՝ «Չեմ թողուր քեզ, մինչև որ զիս չօրհնես»: Սրանից հետևում է, որ հրեա հեղինակները Հակոբին նաև աննկարագրելի պայծառատեսություն են պարգևել: Հակոբը երբևէ չէր տեսել աստծուն, իսկ նշված հանդիպումն էլ եղել է գիշերվա մթության մեջ, այդուհանդերձ, նա գլխի է ընկել, թե ում հետ է գոտեմարտում: Ստացվում է, որ հրեան նաև իր կռահողական կարողությամբ ու վերլուծական մտքով գերազանցել է Եհովա աստծուն, ով ըստ հուդայաքրիստոնեական աստվածաբանության, տեսնում է ու գիտի, թե տիեզերքի ամբողջ համակարգում ի՞նչ կա և այդտեղ ի՞նչ է կատարվում և ի՞նչ է կատարվելու:

Հավատացյալի կամ դյուրահավատի համար աստծուն հաղթելը որևէ գնահատանքից վեր է այն պարզ պատճառով, որ մարդը ծնկի է բերել մեկին, ով իբր ոչնչից ստեղծել է Արեգակը, Լուսինը, աստղերը և, ընդհանրապես, տիեզերքը, այդ թվում՝ Երկիրն իր օդով, հողով, ջրով, բուսակենդանական աշխարհով, լույսը բաժանել է խավարից, ցամաքը՝ ջրից, իսկ երբեմն էլ հանուն հրեաների ազգային շահերի՝ կասեցրել է Արևի ու Լուսնի ընթացքը, սակայն հրեայի հանդեպ դառնում է անճարակ: Եվ այդ պարտությունն էլ սովորական պարտություն չէ. երբ Եհովան տեսնում է, որ Հակոբին արդար գոտեմարտում չի կարողանում հաղթել, դիմում է նենգության՝ վնասում է Հակոբի «զիստին ամոլաջիլը». սակայն անգամ այս ստորությունն էլ նրան պարտությունից չի փրկում: Այսինքն, աստվածը ֆիզիկական ուժով, բանիմացությամբ, ըմբռնողությամբ և ազնվությամբ կտրականապես զիջում է հրեա Հակոբին:

Ինչպես տեսնում ենք, սիոնիստ հեղինակները՝ հանուն հրեաների փառաբանման, վարկաբեկել են իրենց ազգային և քրիստոնյաների աստված (քրիստոնյա հավատացյալներին չվիրավորելու համար, ասենք՝ քրիստոնյաների աստծո հայր) Եհովային, մի բան, որը կարծես թե հարվածում է նաև սիոնիստական նպատակներին: Հայտնի է, որ աշխարհը հրեաներին պատկանելու սիոնիստական ծրագրի արմատավորման ու իրականացման համար, իրենց Եհովա աստծո ամենակարող ու սարսափազդու լինելը պետք է գերակայի բոլոր խնդիրներում, և մարդիկ աստծու անունը լսելիս կամ նրան հիշելիս պետք է սարսափեն ու տագնապ ապրեն (այստեղ իրական հավատացյալների հետ բռունցք են կազմում նաև ոչ

դատարկապաշտ, սակայն շահ հետապնդող սիոնիստները, որոնք արտաքուստ ձևացնում են, թե հավատում են Եհովային ու նրանից սարսափում): Եվ ամենևին պատահական չէ, որ Իսրայել պետության կայանալուց ընդամենը չորս տարի անց այդ երկրում հաստատվեց մի կարգ, ըստ որի՝ Եհովա աստծուն, և ընդհանրապես, հուդայականությունը չընդունողը չի կարող Իսրայելի քաղաքացի համարվել. «1952 թվականին ընդունված օրենքի համաձայն Իսրայելի քաղաքացիություն չի շնորհվում այն հրեաներին, որոնք ոչ թե հուդայականություն են դավանում, այլ մեկ ուրիշ հավատ, **կամ էլ աստծուն չեն հավատում**: Երկրում սինագոգի ու ռաբբիության հսկողությունը համապարփակ է: Տարբեր հրահանգներով ու արգելքներով նրանք կարգավորում են հավատացյալների կյանքի բոլոր կողմերը: Օրինակ, արգելված է հրեաների ամուսնությունը ոչ հրեուհիների հետ: Կինը չի կարող ամուսնալուծվել, այդ իրավունքը տրված է միայն տղամարդուն: Իզուր չէ, որ Իսրայելի կոմունիստական կուսակցության 17-րդ համագումարը երկրի վիճակը բնութագրեց որպես կրոնական բռնություն» (Աթեիզմ և կրոն, Երևան, 1988 թ., էջ 49):

Հասկանալի է, եթե չլիներ նաև կույր հավատը, այն հավատը, որ իբր գոյություն ունի Եհովա աստված, և նա էլ Պաղեստինը նվիրել է հրեաներին, ապա ուրիշ ի՞նչ իրական մի գաղափար կարող էր նեցուկ դառնալ այն հրեաներին, որոնք ավելի քան կես դար առաջ՝ պատերազմի պայմաններում կարողացան իրենց մեջ ուժ ու համարձակություն գտնել և Պաղեստինի նաև անապատ տարածքներում իրենց համար բնակարաններ կառուցել (Ճիշտ է, սա Իսրայել պետության ծրագիրն է, սակայն առանց հավատքի գործոնի, կյանքին սպառնացող ակնհայտ վտանգի պայմաններում դժվար թե այդ ծրագիրն իրականանար): Եվ արդյո՞ք նաև կրոնական նախապաշարմունքը և դրա շնորհիվ ձևավորված վստահությունն ու համոզվածությունը չէ պատճառն այն բանի, որ այժմ, երբ Իսրայելը զավթած տարածքների մի մասը իր իսկական տիրոջը՝ Պաղեստինին վերադարձնելու նպատակով քանդում է որոշ վերաբնակների տներ, ապա դրանց տերերը կսկիծով են ընդունում կատարվածը: Հարկավ, կարելի է ենթադրել, որ այստեղ գործում է նաև պետական մակարդակով խնդրի թատերականացումը: Այսուհանդերձ, նրանցից ոմանք, հավանաբար, անկեղծորեն հավատում են, որ Եհովա

աստծո կողմից իբրև իրենց պարգևած «ժառանգությունից» հրաժարվելը նշանակում է չկատարել նրա կամքը և պղծել նրա անունը: Ուրեմն, եթե սիոնիստական ծրագրի իրականացման համար պարտադիր է Եհովա աստծուն ամենակարող, անսխալական և ամեն ինչ տեսնելու, ճանաչելու շնորհներ վերագրելը, ապա ի՞նչ նպատակով նշված շնորհները վերագրել են հրեա անհատին, իսկ Եհովային՝ ծայր աստիճան նսեմացրել: Ի՞նչ է, Աստվածաշունչ կազմող հրեա հեղինակները «ջո՞ւր են կապել» իրենց իսկ կառուցած շինության տակ: Սակայն դարերի փորձը ցույց տվեց, որ նրանք ամենևին չեն սխալվել և իրենց ծրագրից բխող հանդուգն գաղափարներ հորինելու և դրանք մարդկանց մատուցելու և պարտադրելու համարձակություն են ունեցել: Հավանաբար նրանք ղեկավարվել են նաև «Ցլին հաղթելու համար բռնիր նրա եղջյուրներից» գաղափարով, հարկավ, նախօրոք իմանալով «ցլի» վարքն ու նրան հաղթելու գաղտնիքը, այն իմաստով, որ սիոնիստ հեղինակները, լինելով քոչվոր ժողովուրդների ժառանգորդներ (ժամանակին նրանց կոչել են հաբիրուներ և ավազակներ), ինչպես երևում է, հնարավորինս նրբորեն զգացել-հասկացել են հարևան ժողովուրդների և, ընդհանրապես, մարդու հոգեբանությունը և իմացել են մոլորեցնող գաղափարները նրանց մտածելակերպի մեջ դաջելու գաղտնիքը: Նրանք իրենց ծրագրային դրույթները ներկայացրել են աստծո անունից և մատուցել ու մատուցում են իրենց ազգակիցներին՝ հուդայականներին, ինչպես նաև քրիստոնյաներին, այսինքն՝ օտար ժողովուրդներին:

Աստծո և Հակոբի մենամարտի հորինված դրվագով սիոնիստները հուդայական և քրիստոնեական կրոնների հետևորդներին համոզել ու համոզում են. որ թեև Եհովան ամենակարող ու ամենագետ է, սակայն հրեան գերազանցել է նրան: Իսկ այս, ինչպես և, Աստվածաշնչում բազում դոգմաների կեղծ ու անհեթեթ լինելը ցուցանողների նկատմամբ կիրառվել են հասարակությունից օտարում, կիզում, ոտքերի ջլերի հատում և այլ պատժամիջոցներ: Իսկ մեր օրերում այդպիսի ծայրահեղ դաժանությունների անհրաժեշտությունն այլևս չկա. քանզի դրանց նրբորեն փոխարինում են աստվածաշնչյան որոշ դրույթներին համապատասխան ընդունված սահմանադրությունները, օրենսդրական մյուս փաստաթղթերն ու

միջազգային դաշնագրերը: Արդյունքում ստեղծվել է մի դաշտ, որտեղ իրատես, բանական մարդը հասարակությունից՝ իր բնական միջավայրից օտարված է:

Անվիճելի է, որ աստծո և հրեայի գոտեմարտի առասպելը լավ է կերտված: Բայց ի դժբախտություն բազում ժողովուրդների և ի բարօրություն հրեա ժողովրդի, սիոնիստներն այն դարձրել են կրոնական դոգմա և դրել հուդայաքրիստոնեական կրոնի հիմքում, որտեղ այն համարվում է անառարկելի ճշմարտություն: Եվ արդյո՞ք նաև այս կրոնականացված առասպելի կատարած աշխատանքի արդյունքը չէր այն, որ նույն սիոնիստ հեղինակների ժառանգորդները հարյուրամյակներ հետո համարձակություն ունեցան անպատկառորեն գրել ու մարդկանց պարտադրել, որ մեկ այլ հրեա իբր վերակենդանացել ու երկինք է բարձրացել և դառնալով քրիստոնյաների աստված՝ կառավարում է տիեզերքը: Դե՛ փորձեք չհավատալ այս ստին:

Աստվածաշնչյան մեկ այլ դոգմայում «ամրապնդվում» ու ընդլայնվում են հրեա Հակոբի, այսպես ասած, հերոսությունները. *«Անիկա* (Հակոբը) ***արգանդին մէջ իր եղբօրը գարշապարէն բռնեց*** *եւ իր ուժովը* ***Աստուծոյ հետ ըմբշամարտեցաւ: Հրեշտակին հետ ըմբշամարտեցաւ ու յաղթեց»*** (Ովսեայ 12:4-5):

Իհարկե, եթե այս քաղվածքում գրվածը, ինչպես նաև Աստվածաշնչից վերը բերվածները ներկայացվեն որպես առասպել, ապա դժվար թե որևէ մեկը դրանց ընդդիմանա, սակայն սրանք մատուցվում են որպես իրողություն, այն էլ՝ կրոնական դոգմայի պարտադրանքով, հետևաբար, հավատացյալները Հակոբի «հերոսությունները»՝ մոր արգանդում եղբոր գարշապարը բռնելը և լույս աշխարհ գալուց տարիներ հետո աստծուն, հրեշտակին ու մարդկանց հաղթելը ընդունում են որպես անառարկելի ճշմարտություններ:

Հետաքրքրական է նաև Հակոբի անվանափոխումը: Աստվածաշնչում ասվում է, որ աստվածն է Իսրայել եզրը շրջանառության մեջ դրել, ինչով այդ ժողովածուի հրեա հեղինակները փորձում են «ապացուցել», որ այն զուտ ազգային է. իրենց աստծո ստեղծածն է, հետևաբար և իրենցն է: Դիցաբանությունից վերադառնալով իրական կյանք, ասեմ, որ *իսրայել* անուն-անվանումը հրեական չէ: Ահա թե այդ մասին ինչ է գրում Տ. Ի. Բուտկևիչը. «Ըստ փյունիկցիների հավատալիքի,

իրենց երկիրը կառավարող Քրոնոսը կամ Իսրայելը (ուժեղ աստված), մի անգամ, սարսափելի ժանտախտի ու սովի ժամանակ, իր միակ որդի Եգուդին հենց ինքը արքայական հագուստ հագցրեց և զոհաբերեց իրեն» (Кровь в верованиях и суевериях человечества, Санкт-Петербург, София, 1995, стр. 235):

Ինչպես տեսնում ենք, *իսրայել*-ը, որը հասկացվում է և՛ հրեայի անձնանուն, և՛ հրեա ժողովուրդ, և՛ հրեաների երկրանուն, փյունիկցիների առասպելական առաջնորդի անունն է: Փաստորեն, հրեաները այդ անունը փոխառել են փյունիկցիներից և սեփականել, սակայն ներկայացնում են որպես իրենց աստծո կողմից տրված ընծա:

Եհովա աստծու ու հրեաների մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև Ռոբերտսոնը. «Պաղեստին ներխուժած հրեաները մի միասնական ժողովուրդ չէին կազմում: Մ.թ.ա. 14-րդ դարի եգիպտական աղբյուրները **նրանց անվանում են** մերթ «**հաբիրու», մերթ** պարզապես «**ավազակներ»:** Դա քոչվոր ցեղերի խառնուրդ էր. այդ ցեղերը իրենցից առաջ և հետո շատ ցեղերի նման ասպատակություն էին կատարում այդ երկրում: Հին կտակարանի պատմության բանաքաղերը, չնայած իրենց ամբողջ խմբագրական աշխատանքին, ի վիճակի չեն թաքցնելու այն փաստը, որ հրեաները Պաղեստին ներխուժելու ժամանակ և մի շարք դարերի ընթացքում դրանից հետո՝ իրենց կրոնով և կյանքի եղանակով բարբարոսներ էին: Նրանք երկրպագում էին իրենց **անձրևի աստված Յահային**, կամ **Եհովային**, և այդ երկրպագումն ուղեկցվում էր մարդկային զոհաբերությունների ծեսերով: Եհովան նրանց միակ աստվածը չէր» (Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 50-51):

Այս մեջբերումից հասկացվում է, որ հրեաները իրենց բազմաստվածության դիցարանի աստվածներից մեկին՝ անձրևի աստված Եհովային հռչակել են միաստված՝ գլխավոր աստված: Նաև պետք է ասվի, որ հրեաների հետևողական ու աննկուն աշխատանքի արդյունքում (նրանց չի կասեցրել ուրիշ ժողովուրդների կողմից իրենց ուղղված ատելությունը, բաժին հասած տանջանքներն ու զրկանքները, ինչպես նաև մարդկային զոհերը) Եհովային որպես աստված ճանաչեցին բազում ժողովուրդներ և փաստորեն աներևակայելիորեն ընդլայնվեց նրա աստվածային կոչված «իշխանության» տիրույթը:

Սիոնիստ հրեաները շատ լավ հասկացել ու գնահատել են հուդայականության տարածման կարևորությունը՝ աշխարհի միակենտրոն կառավարմանը հասնելու և ապա, աշխարհին տիրանալու գործում:

Ռոբերտսոնի գրքից կատարված վերը մեջբերումից նաև կարելի է հասկանալ, որ առաջին դարում Հռոմի դեմ ելած և խաչված հրեա քրիստոնյաները, այդ ժամանակների հեղինակների աշխատություններում, ինչո՞ւ են անվանվում *ավազակներ*, իսկ նրանց առաջնորդը՝ *ավազակապետ*:

Աստծո և մարդու գոտեմարտի կրոնականացված առասպելն իր ավերիչ աշխատանքը հիմնականում կատարել է. հուդայաքրիստոնեական աշխարհի հավատացյալները համոզված են, որ հրեան աստծուց ուժեղ է: Կրոնական դոգմա դարձած այս առասպելը հնարավորություն տվեց, որպեսզի մարդկության մի մեծ զանգվածի՝ հուդայաքրիստոնեական համակարգի բնակչության համար շրջանառության մեջ դրվի «իսրայելի» հետևյալ հոմանիշները. հրեա անհատ՝ ուժեղ աստված, հրեա ժողովուրդ՝ ուժեղ աստված, հրեաների երկիր՝ ուժեղ աստված:

Եհովայի՝ «*Թո՛ղ տուր զիս, քանզի արշալոյսը երևցաւ*» Հակոբին ուղղված խնդրանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ Աստվածաշնչում առկա գաղափարախոսության հիմքը սատանայապաշտություն-դիվապաշտությունն է, քանզի ըստ դիցաբանության, դևերն ու սատանաներն են լույսից վախենում ու նրանից թաքնվում: Այս միտքը ամրապնդվում է նաև նրանով, որ Աստվածաշնչում Եհովա աստծո դաժան ու անխիղճ հորդորներն ու կարգադրությունները բնորոշ են միայն չար ուժին և աստվածային բարության ու արդարության հետ որևէ առնչություն չունեն:

Այս հատվածում, Աստվածաշնչից բերված քաղվածքներում հրեաներին վերագրվող գերակայությունները մարդկային մտքի համար աներևակայելի են. հրեան հաղթել է տիեզերաստեղծ աստծուն, նաև նրան գերազանցել է իր շրջահայացությամբ ու իմաստությամբ, ինչպես նաև հաղթել է հրեշտակին և մարդկանց: Փաստորեն, հուդայական և քրիստոնեական կրոններում առկա է հետևյալ դոգման՝ ամենակարող արարիչը ստեղծեց տիեզերքը,

իսկ հրեան հաղթեց այդ նույն արարչին թե՛ ֆիզիկական ուժով, թե՛ իմաստությամբ:

2. **Հրեաները հանդիպում են աստծուն, երբեմն էլ, որպես բարեկամը՝ բարեկամի, խոսում նրա հետ, և պատահել է, որ հրեան աստծո հետ անցկացրել է օրեր շարունակ՝**

*«Յակոբ այն տեղին անունը Փանուէլ դրաւ. քանզի ըսաւ.«**Աստուած դեմ առ դեմ տեսայ** ու իմ **անձս ողջ մնաց**»* (Ծննդոց 32:30):

***«Տէրը կը խօսէր Մովսեսին հետ դէմ առ դէմ, ինչպես մարդ մը իր բարեկամին հետ** կը խօսի»* (Ելից 33:11):

«Մովսէս հոն կեցաւ Տէրոջը հետ քառասուն օր ու քառասուն գիշեր» (Ելից 34:28):

Աստվածաշունչը կազմող հրեա հեղինակները հրեաներին պարգևել են հերթական գերակայություններ, որ իբր հաբիրուն-ավազակը-եբրայեցին-իսրայելցին-հրեան կարող է աստծուն տեսնել, նրա հետ զրուցել, օրեր շարունակ ժամանակ անցկացնել և ողջ մնալ, երբ մյուս ժողովուրդների որևէ ներկայացուցիչ այդ պարագայում իբր պիտի մահանար: Զարմանալու ոչինչ չկա: Չէ՞ որ նրանք մարդկության զգալի զանգվածին արդեն համոզել են, որ հրեան աստծուց ուժեղ է: Հրեա հեղինակները, եթե անգամ գրեին, որ հրեային տեսնելուց աստվածը կմահանա, ապա նույն հաջողությամբ նրանք մարդկանց մտքում կդաջեին այդ գաղափարը և կհամոզեին ու կպարտադրեին, որ դա ընդունվի որպես անառարկելի ճշմարտություն և խոնարհաբար կատարեն այս հավանական դոգմայի ծեսերը:

3. Հրեա առաջնորդը զայրացել ու ջարդել է այն սալաքարերը, որոնց վրա աստվածը հրեաների համար օրենքներ էր գրել, այդ անպատվության համար աստվածը ոչ միայն նրան չի պատժել, այլև նրանց համար նորից է օրենքներ գրել, հրեաներն աստվածատուր օրենքներով են ղեկավարվում, հրեան աստծու հետ համատեղ աշխատանք է կատարել՝

*«Աստուած այս բոլոր խօսքերը ըսաւ. «Ես եմ Եհովան, քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեցի: **Ինձմէ զատ ուրիշ աստուածներ***

չունենաս... *Դուն քեզի կուռք չշինես, ո՛չ վերը երկնքի մէջ, ո՛չ վարը երկրի վրայ... Անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես. վասն զի ես քու Տէր Աստուածդ նախանձոտ աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն, մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ՛ատեն զիս Եւ կ՛ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն: ... Հանգստութեան օրը միտքդ բեր՝ զանիկա սուրբ պահելու համար: Վեց օր պիտի աշխատիս ու բոլոր գործդ ընես. Բայց եօթներորդ օրը Տէրոջը, քու Աստծոյդ, հանգստութեան օրն է. այն օրը գործ մը չգործես... Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ... Սպանութիւն մի՛ ըներ: Շնութիւն մի՛ ըներ: Գողութիւն մի՛ ըներ: Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ըներ: Քու դրացիիդ տանը մի՛ցանկար. ու դրացիիդ կնոջը, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին... մի՛ ցանկար»* (Ելից 20:1-17):

«Տէրը ըսաւ Մովսէսին. «Քեզի երկու քարէ տախտակներ կոփէ առաջուաններու պէս ու այն ***տախտակներուն վրայ պիտի գրեմ*** *առաջուան տախտակներուն վրայի խօսքերը,* ***որոնք դուն կոտրտեցիր:*** *Առտուն պատրաստ եղիր ու Սինա լեռը ելի՛ր, հոն լեռան գլուխը առջեւս կայնէ: Մէ՛կը պիտի չելլէ քեզի հետ եւ մէ՛կը պիտի չտեսնուի բոլոր լեռանը վրայ, ո՛չ ալ այդ լեռանը ստորոտը ոչխար կամ արջառ պիտի արածուի»* (Ելից 34:1-3):

(Մովսես).*«Տէրը այս խօսքերը (տասը պատուիրանները) լեռան վրայ կրակին, ամպին ու մառախուղին մէջէն բարձր ձայնով ձեր բոլոր ժողովուրդին խօսեցաւ, եւ ուրիշ բան չաւելցուց: Երկու քարէ տախտակի վրայ գրեց զանոնք ու ինծի տուաւ»* (Բ Օրինաց 5:22):

*«****Մովսէս*** *հոն կեցաւ Տէրոջը հետ քառասուն օր ու քառասուն գիշեր...* ***Տախտակներուն վրայ ուիտին խօսքերը գրեց****, այսինքն տասը պատուիրանքները»* (Ելից 34:28):

Աստվածաշնչից բերված քաղվածքում ներկայացվում է, որ աստվածն ու հրեան համատեղ աշխատանք են կատարել («Քեզի երկու քարէ տախտակներ կոփէ առաջուաններու պէս ու այն տախտակներուն վրայ պիտի գրեմ առաջուան տախտակներուն

վրայի խօսքերը, որոնք դուն կոտրտեցիր»): Եհովայի խոսքերից հասկացվում է, որ նա չի ցանկացել համառ ու բարկացկոտ Մովսեսի հետ վեճի բռնվել, երբ իրոք, Եհովան լիովին իրավունք ուներ նրան անգամ պատժելու, իհարկե, եթե համարձակություն ունենար, քանի որ երբ մեկի կատարած աշխատանքը փչացնում են, ապա դա համարժեք է նրան ապտակ հասցնելուն: Նաև՝ ստացվում է, որ աստված քար կոփել-հարթելու գործում խնդիրներ է ունեցել և առանց հրեայի չի կարողացել հարթերես քար ճարել կամ քարը հարթել: Եվ ապա, անորոշ է մնում թե պատվիրանները ով է գրել. Ելիցում և Բ Օրինացում՝ աստվածն է, իսկ Ծննդոցում՝ Մովսեսը: Պետք է նկատի ունենալ, որ ինչպես բերված քաղվածքի մեջ, այնպես էլ Աստվածաշնչի որոշ դոգմաներում աստված-հրեա հարաբերություններում՝ եղանակ ստեղծողը, իրավիճակի տերերը հրեաներն են: Իսկ եթե աստծո արածն ու արարածն էլ հրեայի սրտովը չէ, ապա նա կարող է ոչնչացնել այն, ինչպես օրենքներ պարունակող քարե «տախտակների» կոտրտելը:

Աստվածաշնչում գրված՝ մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողանար, դրացու ունեցվածքին մի՛ տիրացիր և մյուս պատվիրանները կոպտորեն խախտվում են հենց նույն Աստվածաշնչում: Օրինակ, առաջին երեք պատվիրաններում միաստվածությունը օրենք է համարվում, այն դեպքում, երբ Աստվածաշնչում առկա են բազմաստվածություն ներկայացնող բազմաթիվ դրվագներ, կամ՝ «սպաննութիւն մի ընէ», երբ Աստվածաշնչում հարյուրավոր անգամներ ենք հանդիպում անմեղ մարդկանց, երեխաների, հղի կանանց ոչնչացման սահմռկեցուցիչ սպանդի, այն էլ՝ Եհովա աստծու հորդորներով, պարտադրանքներով ու հաճախ էլ՝ մասնակցությամբ: Կամ, արդյո՞ք «շնութիւն մի ընէ» պատվիրանի խախտմամբ չծնվեց Աբրահամի «որդի» Իսահակը, Հիսուսի մորաքրոջ որդի Հովհաննեսը և հենց ինքը՝ Հիսուսը: «Գողութիւն մի ընէ» պատվիրանը նույնպես քննության չի դիմանում, քանզի Աստվածաշնչում հանդիպում ենք գողության այնպիսի «նմուշների», երբ ինքը՝ Եհովան աջակցում է հրեաներին՝ գողությունը հաջողությամբ իրականացնելու գործում և հաճախ էլ գողոնից բաժին է պահանջում:

Հայտնի է, որ նշված տասը պատվիրանները հրեական մշակույթից չեն բխում, դրանք այլ ժողովուրդների կողմից

ստեղծված օրենքներ են: Այդ օրենքները հայտնի էին Աստվածաշունչը գրելուց հազարավոր տարիներ առաջ:

Մովսեսի և նրան վերագրվող տասը պատվիրանների խնդրի հետ կապված, կրոնագետ Ա. Ռոբերտսոնը գրում է. «Մեզ ոչինչ հայտնի չէ Իսրայելի քոչվոր նախնիների օրենքների մասին: Հրեաների պահպանված հնագույն օրենքների ժողովածուն պարունակվում է «Ելից» գրքում: Թեպետ դա վերագրում են Մովսեսին, բայց նախանշված է հողագործական հասարակության համար, որն ունի դաշտեր և խաղողի այգիներ, հետևաբար վերաբերում է ավելի ուշ ժամանակի, քան Իսրայելի Պաղեստին ժամանելը: Հրեական օրենքներից շատերը փոխառնված են Համմուրաբիի (մոտավորապես մ. թ. ա. 1800 թ.) բաբելոնական կոդեքսից: Հրեական այդ վաղ օրենքը մեզ է հասել մ. թ.ա. VIII կամ VII դարի խմբագրող մարգարեների միջոցով, որոնք այն լրացրել են ռեֆորմների իրենց ծրագրի շահերին համապատասխան... Հնգամատյանն այն ձևով, ինչպես մեզ է հասել, իր ժամանակի արգասիքն է, բայց այն ոչ մի դեպքում ինքնուրույն երկասիրություն չէ: Նրա կազմող քահանաները ի մի էին բերել իրենց ձեռքի տակ եղած պատրաստի օրենքները և դրանք բացատրող այն առասպելները, որոնք համապատասխանում էին իրենց նպատակներին, ընդ որում առանձնապես մտահոգված չլինելով հետևողականության մասին: Աբրահամի, Հակոբի և Հովսեփի մասին պատմությունները համակված են դյուցազներգական վեհությամբ, որը հիշեցնում է հոմերոսյան պոեմները, բայց **այդ անձնավորությունների պատմական գոյությունը նույնքան արժանահավատ է, ինչպես և հունական առասպելական հերոսների գոյությունը**: Այդ զրույցներն իրենց այժմյան ենթատեքստով լոկ ներածություն են Իսրայելը եգիպտական ստրկությունից ազատագրվելու և Սինա լեռան վրայի օրենսդրության մասին պատմության: Ինչպես մենք տեսանք, այդ զրույցը չի հաստատվում եգիպտական վավերագրերով: Սակայն Հնգամատյանի կազմողներին դա հարկավոր է, որպեսզի առասպելական Մովսեսի անունով ամրապնդվի իրենց օրենսդրությունը» (Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 63-64 և 78-79): Ռոբերտսոնը նաև ցույց է տալիս, որ Մովսեսը առասպելական հերոս է, իսկ նրան վերագրվող օրենքները գոյություն են ունեցել Հին կտակարանը

կազմելու ժամանակներից շատ վաղ դարերում: Սակայն պատմության կեղծողներին մերկացնող նորանոր փաստերի ի հայտ գալը, դժբախտաբար իր ընկալումն ու արմատավորումը չի գտնում, քանզի սիոնիստ հեղինակների նպատակայնորեն հորինած հեքիաթները կրոնական դոգմաներ են դարձել և արդեն խոր արմատներ են գցել:

Աստվածաշնչի հեղինակների կողմից ամենուրեք արծարծվող և իրենց սեփականը համարվող տասը պատվիրանները բազում այլ պատվիրանների հետ առկա են Աստվածաշնչից ավելի քան հազար տարի առաջ գրված հին Եգիպտական գրականության մեջ՝ «Մեռյալների գրքի» 125-րդ գլխում մասնակիորեն ասվում է. «Ես չեմ սպանել, չեմ խաբել կշիռների մեջ, չեմ զազրախոսել, չեմ խլել կաթը երեխաների բերանից, չարիք չեմ գործել, չեմ գողացել, չեմ նախանձել, չեմ կողոպտել, սուտ չեմ խոսել, չեմ զրպարտել, ականջադրությամբ չեմ զբաղվել, չեմ վիրավորել ոչ մեկին, չեմ սրբապղծել, թույլի վրա ձեռք չեմ բարձրացրել, չեմ շնացել...» (Հին արևելքի պոեզիա, Երևան, 1982, էջ 7-10):

Այդ պատվիրանները նաև արտացոլված են Աստվածաշնչից 4-5 հարյուր տարի առաջ հիմնված բուդդայական կրոնում: Այդտեղ դրանք նույնպես կոչվում են 10 պատվիրաններ՝ կենդանի էակներ չսպանել, լինել մաքրաբարո, սուտ չխոսել, չգողանալ, գինի չխմել, խուսափել ավելորդ սնունդ ընդունելուց, հեռու մնալ զվարճալիքներից, անուշահոտություններ և զարդեր չօգտագործել, շքեղ անկողնում չքնել, ոսկի և արծաթ նվեր չվերցնել:

Հրեաների աստվածատուր կոչված օրենքների առումով Սպինոզան գրում է. «Հրեաները ի՞նչ հիմնավորմամբ անվանվեցին աստծու ընտրյալներ: Երբ ես տեսա, որ դրա համար հիմք է հանդիսանում միայն այն, որ աստված Երկրագնդի վրա ընտրեց նրանց հայտնի երկիրը, որտեղ նրանք կարողանային հանգիստ ու հարմար ապրել, ապա ես հասկացա, որ **Մովսեսին ցուցանած աստծո օրենքները** ոչ այլ ինչ են, քան հրեական առանձին պետության օրենսդրություն, հետևաբար, **այդ օրենքները բացի հրեաներից ուրիշները չպետք է ընդունեին**, իսկ դա էլ հրեաներին վերաբերում էր միայն այն ժամանակ, երբ գոյություն ուներ հրեական պետություն» (Спиноза, Богословско-политический трактат, Москва, 2003, стр. 11):

Այս աշխատության մեջ Սպինոզան ցույց է տալիս, որ Մովսեսը, որին հազարավոր տարի հուդայական և քրիստոնեական ավանդույթները վերագրել են Հնգամատյանի հեղինակությունը, ճիշտ չէ, որ իրականում, այդ գործի հեղինակը Մովսեսից (Մովսեսին վերագրվող ժամանակից) մի քանի դար հետո ապրած մեկ այլ անձ է:

Այս հատվածում հրեաներին վերապահվող գերակայություններից են՝ հրեաների օրենքներն աստվածաստեղծ են և այդ գործին մասնակից է եղել հրեաների առաջնորդը, աստվածը երբեմն ենթարկվում է հրեաների կամքին:

4. **Աստված հրեաներին համարում է իր սեփական, սուրբ ու ընտրյալ ժողովուրդը և ինքն էլ ապրում է նրանց հետ, ըստ աստծո՝ հրեա ժողովուրդը կարող է վերանալ միայն այն դեպքում, եթե տիեզերքն ամբողջովին վերանա՝**

«Ես՝ Տէրս կը բնակիմ Իսրայէլի որդիներուն մէջ» (Թուոց 35:34):

Աստված հրեա ժողովրդին նաև կարգադրում է յուրացնել քրիստոնյաների ունեցվածքը՝ կարևոր չէ ինչ միջոցով՝ խորամանկությամբ լինի դա, գողությամբ թե վաշխառությամբ:

Հրեան պետք է քրիստոնյաներին նայի որպես գազանների և վայրի կենդանիների, և համապատասխան կերպով էլ վերաբերվի նրանց...

Եթե քրիստոնյան անդունդի եզրին է, հրեան պետք է հրի նրան դեպի անդունդը, եթե հնարավորություն ունի անել դա առանց իրեն վտանգի ենթարկելու:

Մի՛ վիրավորվեք, սիրելի ընթերցողներ, որ ես պատմում եմ ձեզ այս ամենը: Ես գիտեմ, որ դուք կհարցնեք՝ «Հնարավո՞ր է արդյոք, որ հրեաները այսչափ թաղված լինեն ապականության մեջ»... Թալմուդում այնպիսի սրբապղծություններ կան, որ սոսկանք են հարուցում: Բավական է ասել, որ երկրիս երեսին հրեաների հավատից ավելի անօրեն հավատ չկա, ամեն դեպքում՝ ոչ մի տեղ չկան այնպիսի մարդիկ, որոնք իրենց անօրինությամբ ու կեղծավորությամբ համեմատելի լինեին հրեաների հետ: **Եթե նրանք երբևէ զավթեն իշխանությունը՝ ուրեմն վա՛յ աշխարհին**» (Кровь в верованиях и суевериях человечества, Книга Монаха Неофита, Христианская кровь в обрядах современной синагоги, Санкт-Петербург, София, 1995, стр. 445-466):

Պարզվում է, որ թալմուդական հրեաները ունեն հատուկ գիրք, որտեղ գրված են իրենց կողմից իրականացված ու այլևայլ հնարքներով քողարկված՝ չբացահայտված հանցագործությունները. «Մանուել թագավորությունում (Լեհաստան) հրեաները սպանելու նպատակով ճանկել են արական սեռի մի մանկան, որպեսզի Պեյսախի տոնի համար արյուն ձեռք բերեն: Այդ մանկան մայրը սկսել է փնտրել մանկանը և որպեսզի փրկի նրան, սկսել է գոռալով ասել, որ իհարկե իր

որդին հրեաների մոտ է: Երեխային տանջամահ արած հրեուհին, երբ այդ լսել է, անմիջապես իր փորին է կապել մահացած երեխային, նստել է մահճակալին և սկսել է տնքտնքալ-հեծեծալ, որ իբր ծնում է (ծննդյան ցավերի մեջ է): Այդ ընթացքում մանկան մոր խնդրանքով այդտեղ են եկել քրիստոնյա հարևանները: Նրանք խուզարկել են ամենուրեք՝ վառարանը, սնդուկները, բայց մանկանը չեն գտել և չեն կռահել, որ փնտրվող երեխան հրեուհու մոտ է: Հրեուհին ամբողջ օրը նստել է մահճակալին և շարունակել հեծեծոցը, իսկ երեկոյան մահացած երեխային դրել է սայլի մեջ, ծածկել մուշտակով և հարևան երկու հրեաների հետ տարել է դաշտ ու այդտեղ թաղել են:

Այս պատմությունը հրեաները գրել են իրենց Հիշարժան գրքում (Шевет егудо), որ այդ հրեուհին խելացիորեն է վարվել» (Ч. Ломброзо - Антисемитизм и современная наука, Г. Державин - Мнение об отвращении в Белоруссии голода и устройстве быта евреев, Москва, 2003, стр. 228): Այս գրքի 71-րդ էջում կարդում ենք. «Յուրաքանչյուր հրեայի մեջ,- ասում է Լերուա Բոլիեն,- մետամորֆոզի նկատմամբ կա մի գաղտնամիտ ընդունակություն, ինչը ինձ մշտապես ապշեցրել է: Նա պատրաստ է ցանկացած կերպարանափոխության՝ չկորցնելով իր ցեղի դրոշմը: Նա կաշին փոխելու բացարձակ ընդունակություն ունի՝ չդադարելով հրեա լինելուց: Այդ մարդը ինչքան շատ է ձևափոխվում, այնքան ավելի քիչ է փոխվում: Բառացիորեն նա հալված մետաղ է. դուք կարող եք նրան լցնել ամեն տեսակի ձև ունեցող ամանների մեջ, և նա իր նյութը չփոխելով, կընդունի նրանցից յուրաքանչյուրի ձևը»:

Այստեղ վերհիշենք հրեա ժողովրդին Եհովայի պարգևած «բարիքը». «Իմ օրէնքս անոնց ներսիդին պիտի դնեմ ու զանիկա անոնց սրտին վրայ պիտի գրեմ» (Երեմ 31:33): Ահա թե ինչ ողբերգական հետևանք է ունենում, երբ աստծու դիմակով դևը իր օրենքը գրում է որևէ ժողովրդի «սրտի վրա»:

Միայն վերը բերված, սովորական մարդկանց համար անհավատալի թվացող եղերագործությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ սիոնիստներն իրենց ծրագիրը կրոնական գաղափարախոսություն դարձնելով, կարողացել են բնընթաց կյանքից շեղել բնության ստեղծած ժողովուրդներից մեկին՝ հրեա ժողովրդին և դարձնելով կրոնական մարտնչող համայնք՝ հանել համայն մարդկության դեմ: Այս առումով,

սիոնիստական գաղափարախոսության արգելմամբ ոչ միայն աշխարհում կհաստատվի համեմատաբար տանելի կյանք, այլև հրեա ժողովուրդը հնարավորություն կունենա վերականգնելու ժողովուրդներին վայել իր կեցվածքը և ուրիշ ժողովուրդների կողմից ընկալվելու որպես մարդկության դեմ դավադրություն իրականացնելու նպատակից զերծ մի ժողովուրդ:

****

Այս բաժնում Աստվածաշնչից կատարած մեջբերումները ցույց են տալիս, որ հուդայականությունը (հրեաների կրոնը) իր հավատացյալներին ուսուցանում է՝ որ հրեաներն ուրիշ ազգերի նկատմամբ արտոնյալ ու գերակա են և օժտված են գերբնական հատկություններով: Հրեան գոտեմարտում հաղթել է աստծուն, հրեաները հանդիպում են աստծուն և նրա հետ համատեղ աշխատանք են կատարում, հրեան զայրացել ու ջարդել է այն սալաքարերը, որոնց վրա աստվածը հրեաների համար օրենքներ էր գրել, սակայն աստվածը նրան չի պատժել և նրա աջակցությամբ նորից է այդ օրենքները գրել: Հրեաներն աստվածատուր օրենքներով են ղեկավարվում, նրանք երբեմն էլ աստծուն կոպտում-զսպում են, որ նա չար գործեր չկատարի, ինչպես նաև հաճախ հիշեցնում են, որ չմոռանա ու կատարի հրեաների առաջնորդներին տված խոստումները ու երդմնազանց չլինի, աստված հրեաներին համարում է իր սուրբ ու ընտրյալ ժողովուրդը և ինքն էլ ապրում է նրանց հետ: Եհովա աստվածը խոստացել է, որ հրեա ժողովուրդը կարող է վերանալ միայն այն դեպքում, եթե տիեզերքն ամբողջովին վերանա: Եհովա աստվածը հրեաների դաշնակիցն է, նա է մշակում օտար ժողովուրդներին ահաբեկելու, կողոպտելու, ոչնչացնելու և հրեաների համար հարստություն դիզելու, տարածքներ գրավելու ռազմավարությունը, պատերազմի դաշտում աստվածը հրեաների հետ է, նա հրեաների թշնամիների դեմ է հանում կրակախառն կարկուտը, գորտերին, շնաճանճերին, մորեխներին, այլևայլ վարակիչ հիվանդությունների հարուցիչներին, Արևին, Լուսինին, աստղերին, իսկ Երկիրը նույն Եհովա աստծու կարգադրությամբ իր երախը բացելով կուլ է տալիս հրեաների թշնամիներին: Եհովա աստվածը հրեաներին պարտադրում է օտար ժողովուրդներից ծառա պահել և ապրել ոչ թե սեփական աշխատանքով, այլ՝ ուրիշ ժողովուրդների

ստեղծածով, նաև հորդորում է օտար ազգերի նկատմամբ լինեն դաժան, անգութ, քարսիրտ, ոչնչացնեն նրանց իրենց մշակույթով հանդերձ: Աստվածաշնչում հրեաները ներկայացված են որպես իմաստուն ու հանճարեղ, իսկ նրանցից մեկն էլ իբր ունեցել է անգերազանցելի իմաստություն: Եհովա աստվածը խոստացել է հրեաների թիվը դարձնել անհամար, նրանց մեջ վիժող ու ամուլ չպիտի լինեն, իսկ նրանց հիվանդությունները տալու է օտար ազգերին: Հրեա կանայք աստված ու կիսաստվածներ են ծնում: Հրեան մեռել ու թաղվել է, սակայն օրեր անց վերակենդանացել ու երկինք է բարձրացել և այդտեղից ղեկավարում է տիեզերքը:

Ահա թե ինչ հիվանդածին գաղափարներով է հրեաներին պարուրում Աստվածաշունչը, այսպես կոչված, Ընդհանուր հուդայականությունը:

Տառապանք քաշեցէ՛ք.
սուգ ըրէ՛ք ու լացէ՛ք.
ձեր ծիծաղը սուգի դառնայ
ու ձեր ուրախութիւնը՝ տրրտմութեան
(Թուղթ Յակոբու)
Երանի այն ժողովրդին՝ որ
իր Աստծուն է պաշտում
(Գրիգոր Նարեկացի)
Ով զոհ է մատուցում այն աստվածներին, որ իր նախահայրերինը չեն, շողոքորթ է (Կոնֆուցիոս)

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Նախորդ բաժնում, Աստվածաշնչից քաղվածքներ բերվելով ցույց տրվեց, որ հուդայական կրոնի հետևորդների՝ հրեաների համար, աշխարհի մյուս ժողովուրդների նկատմամբ սահմանված են բազում գերակայություններ ու արտոնություններ: Այս բաժնում էլ փորձենք պարզել, թե նույն Աստվածաշնչում ի՞նչ գերակայություններ ու արտոնություններ են սահմանված քրիստոնյաների համար:

Քրիստոսը իր հետևորդներին հորդորում-պարտադրում է.

1. Ծառայել ուրիշներին, լինել հնազանդ, խոնարհ, հեզ, համբերատար, ապրել թշվառություն մեջ, չարչարանք կրել, ծեծվել, ստրկանալ՝

*«**Ծառաները ամեն բանի մէջ վախով հնազանդ ըլլան իրենց տէրերուն**, ո՛չ միայն բարերարներուն ու հեզերուն, **հապա ժանտաբարոներուն ալ**: Քանզի **Աստուծմէ է այս շնորհքը, երբ մէկը բարի խղճմտանքով անիրաւ տեղ վիշտ կը կրէ**: Վասն զի գովեստի արժանի ի՞նչ կայ եթէ մեղք գործելով ծեծուիք ու համբերէք: **Բայց եթէ բարիք գործելով չարչարուիք ու համբերէք, ասիկա Աստուծոյ քով շնորհք մըն է**: Քանզի դուք այս բանին համար կանչուեցաք, վասն զի **Քրիստոս ալ ձեզի համար չարչարուեցաւ ու ձեզի օրինակ թողուց, որպէս զի իր շաւիղներուն հետեւիք»*** (Ա Թուղթ Պետրոսի 2:18-21):

«(Հիսուսը ասում է)՝ *Եթե ծառան իր սրտին մէջ ըսէ. ,Իմ տէրս իր գալը կ՛ուշացնէ՝ եւ սկսի ծառաները ու աղախինները ծեծել եւ ուտել ու խմել ու գինովնալ:* ***Այն ծառային տէրը պիտի գայ*** *այնպիսի օր մը, որ չի սպասեր եւ այնպիսի ժամ մը, որ չի գիտեր* ***և զանիկա մէջտեղէն պիտի կտրէ...*** *Այն* ***ծառան որ իր տիրոջը կամքը գիտէ*** *ու չի պատրաստուիր, ո՛չ ալ անոր կամքը ի գործ կը դնէ,* ***շատ ծեծ պիտի ուտէ:*** *Բայց ան որ չի գիտեր ու ծեծի արժանի բան մը ընէ,* ***քիչ ծեծ պիտի ուտէ»*** (Ղուկաս 12:45-48):

«Ամէն մարդ իր վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի. *վասն զի* ***չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ*** *եւ* ***անոնք որ կան՝ Աստուծմէ կարգուած են:*** *Ուրեմն* ***ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանի դէմ կը կենայ*** *եւ անոնք որ դէմ կը կենան, անձերուն դատապարտութիւն կ՛ընդունին: Վասն զի իշխանները բարիք գործողները չեն վախցներ, հապա՝ չարը: Կ՛ուզե՞ս չվախնալ իշխանութենէն, բարիք գործէ ու անկէ գովութիւն պիտի ընդունիս. վասն զի* ***անիկա Աստուծոյ սպասաւորն է*** *քեզի բարիի համար. բայց եթէ չարիք գործես՝* ***վախցի՛ր. վասն զի դատարկ տեղ մէջքը թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ սպասաւորն է եւ վրէժիմնդիր՝*** *բարկութիւն հասցնելու անոր վրայ որ չարիք կը գործէ: Ասոր համար պէտք է հնազանդ ըլլալ, ոչ միայն բարկութեան համար, հապա խղճմտանքի համար ալ:* ***Այս պատճառաւ է որ տուրք ալ կու տաք. վասն զի Աստուծոյ սպասաւորներն են*** *այն նոյն բանին հոգ տանելու»* (Թուղթ առ Հռովմ 13:1-7)):

Այս դոգմաներին ենթակա մարդու կյանքը ոչ թե կյանք է, այլ՝ անտանելի մի մղձավանջ: Նույնիսկ հատուկ բանտերում ու մարդատյացների ներքո գերությունում դժվար է պատկերացնել այդպիսի նողկալի ու անհեթեթ կյանք:

Ինչպես տեսնում ենք, քրիստոնեական կրոնն իր հետևորդներին քարոզում է, որ ծառաներն ինչպես հեզ ու խոնարհ ենթարկվում են աստծո կամքին և բարեխղճորեն ծառայում նրան, այդպես էլ ենթարկվեն ու ծառայեն իրենց տերերին: Ավելին՝ պահանջում է նույն հնազանդությամբ ու սիրով ծառայել նաև ժանտաբարո տերերին, այն «հիմնավորմամբ», որ անարդարացիորեն վիշտ ու տառապանք կրելն, իբր, աստծո

տված պարգև է, իսկ տիրոջ ժանտաբարո լինելը բխում է աստծու կամքից:

Ըստ ավետարաններից բերված քաղվածքների, Քրիստոսի համար ընդունելի են այն հավատացյալները, որոնք խոնարհաբար ծառայում են նույնիսկ ամենադաժան մարդկանց, ստորացվում ու ծեծվում են և այդ ամենն էլ համբերությամբ ու սիրով են տանում, սակայն Քրիստոսին առավել հաճո են նրանք, ովքեր նշված տառապանքները կրում են հենց այնպես՝ առանց որևէ զանցանք գործելու, նույնիսկ՝ բարի գործ կատարելու պարագայում:

«Ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանի դէմ կը կենայ» դոգման ընդունելի է միայն այն դեպքում, երբ իշխանավորը բանական է ու արդար, երբ նրա գերագույն նպատակը պետական համակարգի ամրապնդման և իր հպատակների ներկայի և ապագայի անվտանգության ապահովումն է: Այս դոգմայից նաև հետևում է, որ նույնիսկ ոսոխի կամ զուտ անձնական շահ հետապնդող ղեկավարի և օտար բռնակալի ճիրաններում տառապող ժողովուրդը կամ անբարո տիրոջ ծառան չպետք է ստրկական վիճակից դուրս գալու ճանապարհ փնտրի կամ այդ մասին մտածի, քանի որ, ըստ քրիստոնեական կրոնի, ցանկացած իշխանություն աստծո սահմանածն է և յուրաքանչյուր իշխանավոր (նաև ծառա ունեցող անհատ) գործում է աստծո կամոք: Փաստորեն ստացվում է, որ, օրինակ, գերությունից փախչելով ազատվելը Քրիստոսի դեմ գործած մեղք է: Ավելին, եթե այս դոգման լրջորեն քննենք, ապա կարելի է ասել, որ բոլոր այն հայերը, որոնք շնորհիվ իրենց հերոսության և այլևայլ հնարքների փրկվել են Օսմանյան կայսրության կողմից ծրագրած և իրականացրած ցեղասպանությունից, ապա նրանք Քրիստոսի կամքին հակառակ են գործել: Ըստ քննվող դոգմայի, նաև հասկացվում է, որ նշված ծրագիրն էլ Քրիստոսի-Եհովայի հրամանով է կազմվել: Տարակուսողների համար այդ դոգման նորից եմ բերում՝ «Ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանի դէմ կը կենայ»: Ահա թե Աստվածաշնչում մարդկանց հիմարացնելու և մոլորեցնելու ինչպիսի գաղափարներ են ամրագրել՝ այլազան թակարդներ հյուսելու վարպետ սիոնիստ ավետարանիչները:

Այլ հարց է, եթե քրիստոնեական աստվածաբանները գրեին, որ օրինակ, պետական իշխանությունը և բարոյական

իշխանավորն աստծո կամքի արտահայտիչներն են, իսկ ոսոխն ու մարդկանց ապագան խոչընդոտող, անձնական շահ հետապնդող կողոպտիչ իշխանավորը՝ ոչ, իսկ իշխանավորի մեջքին կապած թրով էլ, ոչ թե երկու կտոր անել ուտող ու խմող ծառային, այլ այդ թուրը ուղղել ոսոխի և պետականության հիմքերը քայքայող, ժողովրդին աղքատացնող ու հայրենազրկող հանցագործ իշխանավորի դեմ, ինչպես նաև գրեին, որ յուրաքանչյուր անհատ ազատ է և կարող է ամեն կարգի աշխատանք կատարել ու հասնել մարդուն մատչելի ցանկացած բարձունքի: Սակայն այլ է ավետարանները գրողների նպատակը: Նրանց նպատակն է. սիոնիզմի շահերին ձեռնտու կապանքներ ստեղծել և մարդկանց դրանցով պարուրել, օրինակ, ծառա ես, ուրեմն՝ ծառա էլ մնա :

Ղուկասի ավետարանից բերած քաղվածքում՝ ոչ կարգապահ, ուտող ու խմող ծառային դաժանորեն սպանելը հուդայաքրիստոնեական կրոնի հանգուցային դոգմաներից է: Հայտնի է, որ սիոնիզմի ծրագրի գլխավոր խնդիրը օտար ժողովուրդներին ոչնչացնելն է, այն իմաստով, որպեսզի նաև կասեցվի բնական պաշարների արագ սպառումը: Կարելի է ենթադրել, որ սիոնիստների՝ աշխարհի ժողովուրդներին հայտարարած պատերազմը կավարտվի միայն այն ժամանակ, երբ նրանք մարդկության մեծամասնությանը գերեզման կուղարկեն և իրենց օտարազգի ծառաների հլու հնազանդությունն էլ երաշխավորված կհամարեն: Ժամանակին Հռոմի ակումբը (սիոնիզմին ծառայող կառույց) շրջանառության մեջ դրեց «ոսկե միլիարդի» գաղափարախոսությունը: Շատերիս համար դա հասկացվում էր, որ աշխարհում միայն մեկ միլիարդ մարդ, այն էլ՝ հզոր-ունևոր պետությունների քաղաքացիները կարող են ապրել բարեկեցիկ կյանքով, իսկ մնացյալը՝ ինչպես պատահի: Սակայն աստիճանաբար ուրվագծվում է այն պատկերը, որ այդ միլիարդը պետք է հասկացվի հրեաներ և իրենց ծառաներ, հետևաբար նշված միլիարդը, գիտության ու տեխնիկայի զարգացումից կախված՝ կարող է փոփոխվել: Կարելի է ենթադրել, որ այդ գաղափարի կնքահայրերը հաշվարկել են, թե ոչ հրեաների ինչ զանգված է պետք, որ հրեաների ապրուստն ու սպասարկումը ապահովված լինի:

Քրիստոնեական աստվածաբանության որոշ դոգմաներից ակնհայտ է դառնում, որ մարդիկ հավերժորեն բաժանված են երկու տեսակի՝ արտոնյալների և նրանց ծառայող ստրուկների:

Այս դոգմաներն այն պատկերն է ձևավորում, որ կարծես թե գործ ունենք մի տնտեսության հետ, որի տերը իրավունք ունի իր սեփականությունը հանդիսացող կովի, ոչխարի և ընտանի մյուս կենդանիների հետ վարվել այնպես, ինչպես կցանկանա, իսկ այդ կենդանիներն էլ դիմանան ծարավին, սովին: Իսկ Հին ու Նոր կտակարաններից պարզ հասկացվում է, թե ովքեր պետք է իշխեն (ծառա ունենան) և ովքեր պետք է հավերժորեն սերնդեսերունդ ծառա լինեն:

Հարց է առաջանում, քրիստոնեական կրոնը ինչո՞ւ է իր հետևորդներին քարոզում ոչ թե լիարժեք, այլ ստրկական, տառապալի և խիստ ենթակայական կյանք, ի՞նչ ծրագրի շրջանակներում են ձևավորված այս վտանգածին դոգմաները, և արդյո՞ք դրանք հարմարեցված չեն մեկ այլ կրոնով նախանշվող նպատակներին: Կարծում եմ, այդ հարցերի պատասխանն ինչ-որ չափով կստանանք, եթե նորից անդրադառնանք Հին կտակարանին: Դիմելով հրեաներին, Եհովան ասում է. «***Քու ծառադ ու աղախինդ ձեր բոլորտիք եղած ազգերէն պետք է ըլլան****: Ծառայ ու աղախին անոնցմէ կրնաք ծախու առնել: Նաև ձեր քով բնակվող օտարականներուն զաւակներէն կամ անոնցմէ եւ կամ ձեր քով եղող անոնց ընտանիքներէն որոնք ձեր երկիրը ծնած են՝ կրնաք* ***ծախու առնել, որպէս զի ձեր ստացուածքը ըլլան****: Ձեզմէ ետքը ձեր որդիներուն կտակեցէք զանոնք իբր ժառանգութեան ստացուածք,* ***որպէս զի միշտ ձեր ծառաները ըլլան****, բայց ձեր եղբայրներուն,* ***Իսրայէլի որդիներուն, համար՝ իրարու վրա խստությամբ մի իշխէք***» (Ղեւտեցոց 25:44-45): Ինչպես տեսնում ենք, հուդայականների աստված Եհովան հրեաներին կարգադրում է, թե ձեր ծառաները պետք է օտար ժողովուրդներից լինեն, բայց ձեր ազգակիցներից-արյունակիցներից ծառա չվերցնեք, իսկ հրեային ծառա դարձնողին մահվամբ է սպառնում (*«Եթէ մարդ մը գտնուի, որ իր եղբայրներէն, այսինքն Իսրայէլի որդիներէն, մէկը գողնալով զանիկա ծառայ դարձնէ կամ ծախէ, այդ մարդը իբր գող թող մեռնի ու ձեր մէջէն չարութիւնը վերցուի»,* Բ Օրինաց 24:7):

Տիրոջ և ծառայի աստվածատուր լինելը հանգուցալուծվում է այն բանով, որ քրիստոնյաների աստվածը ծառայի կարգավիճակը համարում է աստվածահաճո, իսկ հրեականության աստվածը

աստվածահաճո է համարում տիրոջ կարգավիճակը, ավելին, նա ծառային համարում է որպես անասուն՝ առ ու ծախի առարկա՝ ապրանք և անթույլատրելի է համարում հրեայի ծառա լինելը:

Օտար ժողովուրդներից վերցրած ծառաներին որպես անասուն դիտարկելն արտացոլված է նաև Թալմուդում: Այդտեղ ասվում է, եթե հրեայի մոտ ակումը ծառա է, և նա մահանում է նրա տանը, ապա այդ դեպքում մեկ այլ հրեայի արգելվում է այդ մահվան կապակցությամբ տանտիրոջը սփոփել, ինչպես դա արվում է հրեայի մահվան դեպքում, բայց նա իրավունք ունի ասելու. «Թող աստված հատուցի քեզ քո կորուստը», այդպես են ասում այն մարդուն, որի եզը կամ էշը սատկել է»: Հրեականության կարգը պարտադրում է, որ հրեան պետք է ծառա ունենա, քանի որ նա չի կարող ապրել առանց ծառայի աշխատանքի (Այդ մասին խոսվել է սույն գրքի առաջին բաժնում):

Ավելի քան երկու հազար տարի է, ինչ հրեական կրոնի առաջնորդներն այսպիսի օրենքներով և առավել այլանդակ ու հրեշավոր ծեսերով են դաստիարակում հրեաներին: Եհովա աստծուն վերագրած հակաբնական, նեղ ազգայնամոլական դոգմաները հրեաներին չէին կարող հնարավորություն տալ ծառաների վրա իրենց իշխանությունը հաստատել, եթե Նոր կտակարանում հրեա հեղինակները Քրիստոսի անունից չգրեին, թե ծառաները ամեն գործում պետք է վախով հնազանդ լինեն իրենց տերերին կամ ոչ լիարժեք խոնարհ ծառային պետք է երկու կես անել:

Աստվածաշնչում տիրոջ և ծառայի խնդիրը, ճիշտ է նենգորեն է լուծված, սակայն այն հավատացյալների համար պարզ է ու հասկանալի: Հուդայականության աստված Եհովան հրեաներին պարտադրում է, որ օտար ազգերից ծառա վերցնեն, իսկ ազգությամբ հրեա և օտար ազգերի աստված Քրիստոսն էլ քրիստոնյա ժողովուրդներին հորդորում-պարտադրում է, որ ծառա լինելը աստվածահաճո գործ է, և ծառաները պետք է անվերապահորեն ենթարկվեն իրենց տերերին, ստրկաբար ծառայեն նրանց և չմտածեն այդ վիճակից դուրս գալու մասին: Նաև՝ քրիստոնեական կրոնից հետևում է, որ ամենադաժան տիրոջ ծառան անդրշիրիմում Քրիստոսի սեղանակից լինելու առաջնահերթություն ունի: Եհովայի և Քրիստոսի անունից քարոզվող գաղափարախոսության կատարած աշխատանքը նման է այն հազվադեպ իրավիճակին, երբ միմյանց դեմ

ճակատամարտի ելած զորքերին հրամանատարներ են կարգված նույն գաղափարներ ու նպատակներ ունեցող հարազատ եղբայրները, որոնցից մեկի զինվորներին հայտնի չէ իրենց զորահրամանատարի իրական նպատակը:

Հուդայական և քրիստոնեական կրոնական դոգմաները դարեր շարունակ ձևավորել են հոգեբանական մի այնպիսի իրավիճակ, երբ իր ծառայի նկատմամբ նույնիսկ դաժան ու ամենաստոր վարվեցողություն ունեցող տերը իրեն ոչ միայն մեղավոր կամ հանցագործ չի համարում, այլև համոզված է, որ իր գործելակերպը աստծու կամքից է բխում, հետևաբար և, մեռնելուց հետո «լինելու» է դրախտում, իսկ անարդարացիորեն զրկանքներ ու տառապանքներ կրող ծառան էլ, իր հերթին, համոզված է, որ իրեն բաժին հասած զրկանք-տառապանքները Եհովայի և Հիսուսի կողմից է նախանշված և դրանց իրա-կանացնողին՝ իրեն տանջողին ու տառապանք մատուցողին տեսնում է նույն այն դրախտում, որտեղ իբր ինքը պետք է լինի՝ զրկանք-տառապանքները հեզորեն ու սիրով տանելու համար: Փաստորեն, Աստվածաշունչը անթերի է կատարում հրեաների տեր, իսկ քրիստոնյաների՝ օտար ժողովուրդների ծառա լինելու հոգեբանական հաշտեցումը: Հուդայական և քրիստոնեական եկեղեցիների դերն էլ այն է, որ իրենց հետևորդներին նշված դոգմաների ճնշման տակ դնեն և պարտադրանքով հաշտեցնեն իրենց պարգևած՝ տիրոջ և ծառայի կարգավիճակների հետ, ինչը, կարծում եմ, առայժմ անթերի է կատարվում:

Այս հատվածում, տիրոջ և ծառային վերաբերող աստվածաշնչյան քաղվածքներում հրեաների նկատմամբ քրիստոնյաների գերակայության որևէ ակնարկ չկա, ընդհակառակը՝ այստեղ քրիստոնյաներին պարտադրվում է խոնարհ ծառայի կարգավիճակ, այն էլ մշտապես ծեծվելով ու տառապանք կրելով, երբ նույն Աստվածաշնչում ասվում է, որ հրեային ծառա վերցնողը ենթակա է մահվան, հրեաներն իրենց ազատամտությամբ ու արժանապատվության գիտակցմամբ անգերազանցելի են, օրինակ, նրանք կշտամբում են աստծուն և նրա հետ գոտեմարտում:

2. Քրիստոսը իր հետևորդներին պարտադրում է՝ ինքնախարազանում, լինել աղքատ, տառապել, չուրախանալ,

կյանքը անցկացնել հալածանքների, թախիծի, տխրության, վշտի ու սգի մեջ, ապրել կիսաքաղց ու կիսածարավ՝

«***Տառապանք քաշեցէ՛ք. սուգ ըրէ՛ք ու լացէ՛ք. ձեր ծիծաղը սուգի դառնայ*** *ու* ***ձեր ուրախությունը՝ տրտմությեան***» (Թուղթ Յակոբու 4:9):

«***Երանի՛ ձեզի որ հիմա անօթի էք, վասն զի պիտի կշտանաք: Երանի՛ ձեզի որ հիմա կու լաք, վասն զի պիտի խնդաք:*** *Բայց* ***վա՛յ ձեզի հարուստներուդ,*** *վասն զի ձեր միխիթարությունը առած էք:* ***Վա՛յ ձեզի որ կուշտ էք,*** *վասն զի պիտի անօթենաք,* ***վա՛յ ձեզ որ հիմա կը ծիծաղիք, վասն զի սուգ պիտի ընէք ու լաք***» (Ղուկաս 6:21-25):

«***Երանի՛ սգաւորներուն,*** *վասն զի անոնք* ***պիտի միխիթարուին: Երանի՛ հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկինքը:*** *Երանի՛ է ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու* ***կը հալածեն*** *եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար:* ***Ցնծացէք եւ ուրախ եղէք, վասն զի ձեր վարձքը շատ է երկինքը,*** *քանզի այս կերպով հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները*» (Մատթ 5:3-12)):

«***Սիրելիներ՛ս, օտար բան մի՛ սեպէք այն նեղութեան բորբոքումը, որ ձեզ փորձելու համար կըլլայ,*** *որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած է:* ***Հապա ուրախ եղէ՛ք՝ քանի որ Քրիստոսին չարչարանքներուն հաղորդակից եղած էք,*** *որպէս զի* ***անոր փառքին Յայտնուելու ատենն ալ ցնծութեամբ ուրախանաք***» (Ա Թուղթ Պետրոսի 4:12):

Ինչպես նախորդ հատվածում, այնպես էլ այստեղ ականատես ենք սիոնիստների կողմից բնության ու բնականության դեմ հայտարարած մի յուրահատուկ պատերազմի: Քրիստոսը պարտադրում է, որ քրիստոնյաները (օտար ժողովուրդները) տառապանք քաշեն, սուգ անեն ու լաց լինեն, որ նրանց ծիծաղը սուգ դառնա, իսկ ուրախությունը՝ տրտմություն (ինձ ծանոթ քրիստոնյա հավատացյալներն, ընդհանրապես, տխուր ու թախծոտ են, իսկ եթե ինչ-որ առիթով ուրախանում-ծիծաղում են, ապա, սովորաբար, ասում են, թե մեղա քեզ աստված, այս ի՞նչ դժբախտություն է մեզ սպասվում, որ այսքան ուրախացանք): Այս պարտադրանքն ակնհայտորեն ուղղված է մարդկանց

կյանքը մղձավանջ դարձնելուն և կյանքից հիասթափեցնելուն, հետևապես և՝ կյանքից հրաժարվելուն, երբ Հին կտակարանում հրեաներին հորդորվում է. *«Ո՛վ երիտասարդ, քու մանկութեանդ մէջ* ***ուրախ եղիր*** *ու երիտասարդութեանդ օրերուն մէջ* ***սիրտդ թող քեզ զուարճացնէ*** *եւ* ***քու սրտիդ ճամբաներովը ու աչքերուդ նայուածքով քալէ…*** *Քու* ***սրտէդ տրտմութիւնը վերացո՛ւր»*** (Ժողովողի 11:9-10): Այս քաղվածքից, ընդհանուր առմամբ, հասկացվում է, որ հրեաների համար տխուր ու տրտում կյանք ունենալը և իրական աշխարհի թերի ըմբռնումը դատապարտելի է ու իրենց աստծո կամքին հակառակ:

Ղուկասի ավետարանում ասված՝ «պիտի կշտանաք» և «պիտի խնդաք» խոստումները, հասկանալի է, վերաբերում են միմիայն մեռելներին: Ուրեմն, քրիստոնյաներն իրական կյանքում պետք է հրաժարվեն, օրինակ, լիարժեք սննդից և ուրախությունից, որպեսզի մեռնելուց հետո միշտ «կուշտ» լինեն, «խնդան» ու ցնծութեամբ «ուրախանան»: Այսինքն՝ կյանքի դիմաց՝ նենգ, դաժան ու ստոր խաբեություն: Ահա, հիմնականում այսպիսին են բարության, արդարության, կյանքի երաշխիք ու բացարձակ ճշմարտություն համարվող քրիստոնեական կրոնի դոգմաները:

Աստվածաշնչի հեղինակները համարձակորեն գրում են, որ քրիստոնյաների գլխին եկած բոլոր նեղություններով, պատուհասներով, կոտորածներով Քրիստոսը փորձում է իր հետևորդների հավատարմությունը՝ իր նկատմամբ: Ստացվում է, որ, օրինակ, ցեղասպանություն ապրած քրիստոնյա ժողովուրդները պետք է շնորհակալություն հայտնեն Քրիստոսին, որ որպես փորձության օբյեկտ, հենց իրենց է ընտրել: Հետաքրքիր է, բանական մարդկանց մեջ այս հակաբնական դոգմաներն արդյոք բացի նողկանքից կարո՞ղ են մեկ այլ զգացում առաջացնել: Հարկավ ո՛չ: Բայց փաստը մնում է փաստ, որ մահահոտ, ավելի ճիշտ՝ նենգ ու դավադիր, համատարած քայքայում ու մահ սփռող այս գաղափարախոսությունը դարեր շարունակ գոյատևել է, և այժմ էլ, լուսավոր կոչվող օրերում, դրա ճանապարհը չի փակվում:

Երանի՛ հեզերին, քանզի նրանք պիտի ժառանգեն երկինքը՝ աստվածաշնչյան այս դոգման, փորձենք բաղդատել նույն Աստվածաշնչի այն դոգմաներին, որոնք հրեաներին հորդորում-

պարտադրում են լինել տիրող, թշնամու-հակառակորդի նկատմամբ անողոք, սպանել անգամ հղի կանանց ու մանուկներին: Պարզից էլ պարզ է, որ Աստվածաշունչը սահման է դրել հրեաների և քրիստոնյաների (օտար ժողովուրդների) իրավունքների միջև: Իսկ սա ուղղակի նշանակում է՝ կյանքի վայելքներն ու բարիքները հրեաների համար են, իսկ հիմարների համար հորինված մեռյալների աշխարհում՝ քրիստոնյա ժողովուրդները ամբողջովին կտիրապետեն այդ վայելքներն ու բարիքները: Քրիստոնյա հավատացյալներին մնում է միայն երևակայել, թե մեռելները ինչպես պիտի կարողանան օգտվել նշված վայելքներից ու բարիքներից:

Փաստորեն, Աստվածաշունչը գրող հեղինակները ցանկացել են քրիստոնյաներին տեսնել, առ հիմնականը, գերեզմանում: Իսկ թե ինչու առ հիմնականը, այլ ոչ՝ ընդհանրապես, այն պարզ պատճառով, որովհետև Եհովայի ընտրյալ և սեփական ժողովուրդը, ինչպես արդեն ասվել է, առանց ծառաների չի կարող ապրել (ըստ Թալմուդի՝ մարդը, իմա՝ հրեան պետք է ծառա ունենա): Նաև պետք է նկատի ունենալ, որ հեզերին գերեզման ուղարկելը առանձնապես դժվարություն չի ներկայացնում:

Ամեն ինչից հրաժարվելով անդրշիրիմ՝ մահ երազող, նենգորեն խաբված քրիստոնյա հավատացյալները լավ կլինի նաև իմանան, որ ըստ հուդայաքրիստոնեական աստվածաբանության, անդրշիրիմ կոչված խաբկանքը նույնպես հրեաների տնօրինության տակ է: Անդրշիրիմի՝ մեռյալների աշխարհի կառավարիչը ազգությամբ հրեա Հիսուս Քրիստոսն է, բազմաթիվ հրեաներ սավառնում են այնտեղ և յուրաքանչյուրին մի պաշտոն է հատկացված, օրինակ, բարոյականությամբ չփայլող, հայտնի կավատ Աբրահամին հանձնարարված է տեսակավորել մեռելներին և իր հայեցողությամբ՝ ուղարկել դրախտ կամ դժոխք: Պատահական չէ, որ հայ քրիստոնյայի թաղման արարողության ժամանակ տերտերը հանգուցյալին հղում է հետևյալ «բարեմաղթանք»-ը. «Վերին Երուսաղեմին արժանանաս» (հավանաբար նույնը կամ նման մի բան էլ ասում են քրիստոնյա մյուս ժողովուրդների տերտերները): Ինչպիսի՜ «հոգատարություն» քրիստոնյա մեռելների «ապագայի» նկատմամբ: Տերտերի մաղթանքը դժվար թե իրականանա, քանի որ սեփական կնոջը ուրիշ տղամարդկանց հանձնելով հարստություն կուտակած Աբրահամը միայն մի

բան է ճանաչում. դա թանկարժեք մետաղն է: Քրիստոնյա տերտերները՝ հուդայականության զինվորները, գուցե այլընտրանքի ամենաչնչին հնարավորություն տային, օրինակ, եթե ես՝ ընդունենք թե հավատացյալ եմ և վերին Երուսաղեմի տեղն էլ չգիտեմ և, ընդհանրապես, չեմ էլ ցանկանում իմանալ, ապա արդյո՞ք իրավունք չունեմ, օրինակ՝ Վերին Հայաստանին, Վերին Վանին, Վերին Տիգրանակերտին կամ նվազագույնը՝ Վերին Երանոսին արժանանալը փափագել:

Ընդհանուր առմամբ, քրիստոնեական կրոնն իր հավատացյալների համար անդրշիրիմյան երևակայական աշխարհում բարեկեցիկ ու երջանիկ կյանք խոստանալու դիմաց պահանջում է, որ նրանք իրական կյանքում հրաժարվեն հաճույքներից ու վայելքից, հարստությունից, ապրեն աղքատության ու թշվառության մեջ, չուրախանան, այլ սգան և իրենց օրն անցկացնեն տխրությամբ ու լացով միախառնված մղձավանջում: Եթե ելնենք քրիստոնեական այս դոգմաների տրամաբանությունից, ապա ստացվում է, որ յուրաքանչյուր օրինավոր քրիստոնյա (անհատ կամ ժողովուրդ)՝ փորձությունների, թշվառության, դժբախտության պակասի դեպքում, պետք է ուղիներ փնտրի թվարկվածների առատացման համար և դրանց ընդառաջ գնա: Արդյո՞ք կա սրա նման վտանգավոր մեկ այլ գաղափարախոսություն:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը և այսօրվա կյանքն իր ուղղվածությամբ, երկու կողմն էլ գոհ են ու հպարտ: Հրեաների գոհ ու հպարտ լինելը հիմնավորված է այն բանով, որ Աստվածաշնչում ամրագրված է աշխարհին տիրանալու իրենց ծրագիրը, որը մեծ հաջողությամբ իրականանում է գլխավորապես քրիստոնյա ժողովուրդների գիտական ու ֆինանսական միջոցներով, իսկ քրիստոնյաները (օտար ժողովուրդները) գոհ ու հպարտ են ձևանում հավանաբար իրենց խաբված լինելը քողարկելու համար, ինչպես նաև արդեն հարմարվել են քրիստոնեական մահվան թմբիրում գոյատևելուն: Եվ ամենագլխավորն ու ամենաողբերգականն այն է, որ փոքրաթիվ սիոնիստ հանցագործներին առյուծ են պատկերացնում, իսկ անասելի հզոր ուժ ունեցող իրենց հանրությանը՝ մի ողորմելի մուկ:

Այստեղ Նոր կտակարանից բերված դոգմաների բաղդատումը հուդայականությանը վերաբերող բաժնում քննված

Հին կտակարանի որոշ դոգմաների հետ, բացահայտում է գիշատիչ-զոհ (տեր-ստրուկ, հարձակվող-նահանջող, գրավող-զիջող, սպանող-սպանվող) հարաբերություններում Աստվածաշնչի կարգավորիչ դերը, երբ հրեաներին և քրիստոնյաներին պարտադրվում է ենթարկվել ու հավատարիմ մնալ Եհովայի և Քրիստոսի կողմից իրենց նախանշված ճակատագրերին: Եվ շուրջ երկու հազար տարի է, ինչ կայացել է հրեաների և քրիստոնյա ժողովուրդների հոգեբանական հաշտեցումը՝ սիոնիզմի ծրագրի իրականացման գլխավոր գրավականը: Այստեղ միմյանց են բաղեղվում հրեաների կողմից ուրիշներին կյանքից զրկելու և նրանց ունեցվածքին տիրանալու անպատկառ ձգտումն ու քրիստոնյաների տգիտությունը, հեզությունը, տրամաբանության բացակայությունը, բանականության ու մտքի հիվանդ լինելը: Սա առկա է հրեականության՝ հուդայականության և քրիստոնեության հետևորդների բոլոր առնչություններում: Հիմարին արժանի ապագա:

Այս հատվածում, նույնպես, Աստվածաշունչը քրիստոնյաներին՝ հրեաների նկատմամբ որևէ գերակայություն և առավելություն չի սահմանում, սակայն քրիստոնյաներին առատորեն բաշխում է տխրություն, տառապանք, վիշտ ու սուգ, և որպես փոխհատուցում՝ մեռնելուց հետո նրանց ուրախալի կյանք է խոստանում:

3. Քրիստոսը իր հետևորդներին պարտադրում է՝ մանկամտություն, թուլամտություն, տգիտություն՝

*«**Երանի՛ հոգիով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է**»* (Մատթ 5:3):

*«Նոյն ժամանակ աշակերտները Յիսուսին քով եկան ու ըսին. «Ո՞վ է մեծ երկնքի թագաւորութեան մէջ»: Յիսուս տղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջտեղը կայնեցուց ու ըսաւ. «Ճշմարիտ կ՛ըսեմ ձեզի, **<u>եթէ դարձի չգաք եւ տղոց պէս չըլլաք</u>, երկնքի թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք**: Ուստի **ով որ իր անձը այս տղուն պէս խոնարհեցնէ, անիկա է մեծ երկնքի թագաւորութեանը մէջ**, եւ ով որ այսպիսի տղայ մը կ՛ընդունի իմ անունովս, զիս կ՛ընդունի»* (Մատթ. 18:1-5):

*«Քանզի խաչին քարոզութիւնը կորսուածներուն յիմարութիւն է, բայց մեզի փրկուածներուս Աստուծոյ զօրութիւն է: Վասն զի գրուած է. «**Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսցնեմ ու հանճարեղներուն հանճարը պիտի խափանեմ**»: Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է դպիրը, ո՞ւր է այս աշխարհին քննողը. Չէ՞ որ **Աստուած յիմարացուց այս աշխարհին իմաստութիւնը**: Քանզի Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնով ապրեցնել, ուստի աստուածային իմաստութեամբ **չթուլլատրեց որ աշխարհային իմաստությամբ մարդ Աստուած ճանչնայ**... Մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը... Քրիստոսը՝ Աստծոյ զօրութիւնը եւ Աստծոյ իմաստութիւնն է: Վասն զի Աստուծոյ յիմարը մարդոցմէ աւելի իմաստուն է եւ Աստուծոյ տկարը մարդոցմէ աւելի զօրաւոր է: Արդարեւ, դուք ձեր կոչումը կը տեսնէք, ե՛ղբայրներ, որ ոչ թե մարմնի կողմանէ շատ իմաստուններ եւ ոչ թե շատ զօրաւորներ եւ ոչ թե շատ ազնուականներ կանչուեցան, բայց **Աստուած աշխարհիս յիմարները ընտրեց, որպէս զի ամօթով ընէ իմաստունները, ու աշխարհիս տկարները ընտրեց, որպէս զի ամօթով ընէ զօրավորները**: Եւ աշխարհիս **ցածազգիներն ու անարգները ընտրեց** եւ ոչինչները, որպէս զի անոնք որ բան մը ըլլալ կը կարծեն, խափանէ»* (Ա Կորնթացիս 1:18-28):

«Յիսուս ըսաւ. «Շնորհակալ եմ քեզմէ, ո՛վ Հայր, Տէր երկնի եւ երկրի, որ այս բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն ու տղոց Յայտնեցիր» (Մատթ 11:25):

Հարց է ծագում, թե քրիստոնեական կրոնում ինչո՞ւ է երանի տրվում հեզերին, մանուկների պես հլու հնազանդներին, առավել ևս՝ հոգիով աղքատներին, չէ՞ որ, օրինակ, հոգով աղքատ լինելը շատ լուրջ թերություն-պակասություն է: Աստվածաշունչը (Նոր կտակարան) գրողների նպատակը պարզ է ու հասկանալի. հեզերը, հնազանդներն ու հոգով աղքատները գովաբանվում են միայն այն բանի համար, որ նրանք հեշտությամբ են մոլորեցվում ու թակարդ ընկնում: Այս թակարդ ընկածներով կազմավորված բանակն էլ ապահովում է քայքայում ու մահ պարտադրող քրիստոնեական կրոնի լինելությունը: Ահա և քրիստոնեական

կրոնի գլխավոր հիմնաքարերից մեկը: Դժվար չէ նկատել, որ օտար ժողովուրդների համար գրված վերը բերված դոգմաները անպետքություն են համարում գիտությունն ու իմաստությունը, երբ Աստվածաշնչից բխող Թալմուդում հրեաներին դրա հակառակն են պարտադրում. «Իմաստունը,- ասում է Թալմուդը,- արքայից ավելի բարձր է, իմաստուն ապօրինի ծնվածը ավելին արժե, քան անգետ քահանայապետը» (Ч. Ломброзо- Антисемитизм и современная наука, Г. Державин- Мнение об отвращении в Белоруссии голода и устройстве быта евреев, Москва, 2003, стр. 72):

Քրիստոնեության ձևավորումից առ այսօր երկնային արքայության հասնելու հույսով տոգորված այդ տգետ, հեզ ու խոնարհ դյուրահավատները ատելությամբ ու անհանդուրժողականությամբ են լցված այն անձանց նկատմամբ, ովքեր չեն հավատում կամ անգամ կասկածում են մեռած ու թաղված Քրիստոսի վերակենդանանալուն և երկինք բարձրանալուն: Պատմական անցյալը ցույց է տալիս, որ այսպիսի ամբոխը, մանավանդ՝ նենգ ու խարդախ ղեկավարների գլխավորությամբ, մի սարսափելի ավերիչ ուժ է՝ պատրաստ դիմելու ամենադաժան միջոցների. անմեղ մարդկանց վարկաբեկում, սպանություններ, բնակավայրերի հրդեհում: Ինչպես դա տեղի ունեցավ Հռոմում, քրիստոնեական կրոնի ձևավորման հենց առաջին փուլում: Ահա թե ինչու քրիստոնեական մահահոտ կրոնում այդքան զովաբանվում են հոգով աղքատները՝ տգետները:

Ակնհայտ է, որ եթե չլիներ սահմանափակ գիտելիքների տեր և բանականությամբ չղեկավարվող, ինչպես նաև սիոնական ծրագրի իրականացման գործին գիտակցաբար լծված մարդկանց բանակը, ապա սիոնիստներն ինչպե՞ս կկարողանային քրիստոնեության վտանգածին կրոնը հարյուրամյակներ շարունակ կանգուն պահել, երբ այդ կրոնի նպատակը հասկացող ամեն մի բանական մարդ պետք է որ դրա անհապաղ կործանումը փափագի: Այլ է կյանքը սխալ ըմբռնող դյուրահավատ հեզերի, հոգով աղքատների խնդիրը: Օտար ժողովուրդների ոչնչացումը փափագող սիոնիստ հեղինակները մտավոր սահմանափակ կարողություններ ունեցողների համար ստեղծել են ազգությամբ հրեա մի աստված, որը քրիստոնյա մեռելների համար անդրշիրիմում իբր

ապրուստի լավ պայմաններ է ստեղծելու, այն էլ հավերժորեն: Իրական կյանքում մշտապես կենցաղային հոգսերում մի կերպ գոյատևող, ինչպես նաև թուլամիտ մարդկանց համար արդյո՞ք սա ամենաբաղձալին չէ: Այս գայթակղիչ խաբեության դիմաց, սիոնիզմի մահվան գործիք եկեղեցին՝ իր ճանկը գցած հեզերից, հոգով աղքատներից և մյուս դյուրահավատ մոլորյալներից պահանջում է միայն «ամենաչնչինը»՝ անտեսել իրական կյանքը և անհանդուրժողականություն ցուցաբերել քրիստոնեական կրոնի դոգմաներին չհավատացողների նկատմամբ:

Պարզվում է որ, այն, ինչին ականատես ենք այսօր, հենց այդպես էլ եղել է նաև այդ կրոնի ձևավորման հենց առաջին փուլում: Ինչպես տեղեկացնում է կրոնագետ Ռոբերտսոնը, երկրորդ դարում ապրած փիլիսոփա Ցելսուսը լուրջ քննադատության է ենթարկել քրիստոնեությանը, սակայն քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո նրա աշխատությունը ոչնչացման է ենթարկվել: Բայց որովհետև իշխանությունները մոռացել էին ոչնչացնել Օրիգենի գրած պատասխանը, ուստի Ցելսուսի աշխատության մեծ մասը պահպանվել է Օրիգենի մեջբերումներում: Ռոբերտսոնը շարունակում է. «Ցելսուսը քրիստոնեության վրա հարձակվում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական նկատառումներով: Նրա տեսական հարձակումները կատարվում են շատ վարպետորեն և որոշ առումով կանխում են ժամանակակից քննադատությունը: Քրիստոնեությունն, ասում է Ցելսուսը, հրեական ծագում ունի և, սակայն, հրեաները նրանից հրաժարվում են: Նրանց ասելով, **նրա հիմնադիրը եղել է ստորին ծագումով մի խաբեբա. Եգիպտոսում նա կախարդություն է սովորել և սկսել է հանդես գալ որպես հրաշագործ և աստծու որդի:** Մարգարեների երկերում այն տեղերը, որոնք, քրիստոնյաների ասելով, վերաբերում են Հիսուսին, իրականում նրա հետ ընդհանուր բան չունեն... Հարության մասին պատմությունը մի շարք զուգահեռներ ունի հեթանոսական առասպելներում և հիմնված է խելագար կնոջ ու մի բուռ երազողների, դիվահարների և անուղղելի ստախոսների վկայության վրա: Քրիստոնեական ուսուցիչները առավելապես ջուլհակներ, կոշկակարներ և այլ արհեստների ստորին մարդիկ են. նրանց քարոզչությունը ուղղված է ոչ թե կրթված մարդկանց, այլ՝ կանանց, երեխաներին և ստրուկներին: Նրանք ուսուցանում

են, որ իմաստությունը չարիք է, իսկ տխմարությունը՝ բարիք» (Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 349-350):

Կյանքը ճանաչելու և այն լիարժեք վայելելու գլխավոր հենասյան՝ բանականության նկատմամբ քրիստոնեության գաղափարախոսության թշնամական վերաբերմունքը լիովին հասկանալի է: Հուդայաքրիստոնեության հայրերը շատ լավ իմացել են և այժմ էլ գիտեն, որ բանականությունը մարդուն հնարավորություն է տալիս չխաբվել, չմոլորվել ու թակարդ չընկնել, իսկ թույլ տված սխալն էլ հասկանալ և ուղղել: Հետևաբար, բանական մարդը քրիստոնեության համար ոչ միայն պիտանի չէ, այլև լուրջ վտանգ է ներկայացնում, քանզի բանական մարդն է, որ կարող է բացահայտել ամեն կարգի քողարկված սպառնալիքներն ու վտանգները, ինչպես օրինակ, նույն քրիստոնեության կործանարար կրոնի բնույթն ու նրա նենգ նպատակը: Մի խոսքով, մարդկային բանականությունը և քրիստոնեությունը մեկը մյուսին թշնամին է: Պատահական չէ, որ քրիստոնեական եկեղեցու նշանավոր գործիչ Մարտին Լյութերը 1546 թվականին իր վերջին քարոզում ասել է. «**Բանականությունը սատանայի առաջին պոռնիկն է**», «**հավատի արժանիքն այն է, որ նա կոտրում է բանականության վիզը**», «**հրաժարվելով բանականությունից, մենք աստծուն մատուցում ենք ամենաընդունելի զոհը, որ կարելի է տալ**» (Մ.Ի.Շախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմը, Երևան, 1979 թ., էջ 27): Այս աշխատության 174-րդ էջում Շախնովիչը գրում է, որ հին հրեական բանահյուսությունում գիտությունը համարվել է անօգուտ գործ: Բնության հետազոտությունը համարվում էր խորթ՝ «հրեական ոգուն», բնության նվաճումը դիտվում էր որպես հանցավոր գործ: Հին հրեաների դիցաբանության մեջ արհեստի գյուտի հեղինակը սատանան էր, դարբնությանը՝ Կայենը: Շախնովիչի աշխատությունից նաև տեղեկանում ենք, որ ազգությամբ հրեա Կարլ Մարքսը (Մորդիխայ Լեվիյ) գրել է. «Փիլիսոփայությունը, քանի դեռ ամբողջ աշխարհը գերող նրա բացարձակ ազատ սրտում բաբախում է արյան գեթ մի կաթիլ, նա Էպիկուրի հետ միասին շարունակ հայտարարելու է իր հակառակորդներին. «Սրբապիղծ է ոչ թե նա, ով ժխտում է ամբոխի աստվածներին, այլ նա, ով միանում է աստվածների մասին ամբոխի կարծիքին» (էջ 42): Հասկանալի է, որ ամբոխի

կարծիքի ձևավորողը եկեղեցին է, որը տասնյակ դարեր շարունակ կարողանում է մարդկանց զրկել բանականությունից:

Գիտության նկատմամբ քրիստոնեական եկեղեցու թշնամական վերաբերմունքի առումով, բերեմ նաև հետևյալ քաղվածքը. «Գիտությունը ժխտելու ոգին ներթափանցեց «եկեղեցու հայրերի» երկերը, որոնց վրա ներկայումս էլ հենվում են եկեղեցականները: «**Տգիտությունից չէ, որ մենք քիչ ենք մտածում գիտությունների մասին**, հայտարարում էր եկեղեցական գրող Եփեսոսը (270-339 թթ.),- **այլ՝ ատելությունից դեպի նրանց միանգամայն անօգտակար աշխատանքը**»: «Եկեղեցու հայրերից» մեկ ուրիշը՝ Ավգուստինոսը (354-430 թ.) ուղղակի ասում էր. «**Իր համոզչությամբ ոչինչ չի կարող հավասարվել սուրբ գրվածքներին, նա վեր է մարդկային մտքի բոլոր ընդունակություններից**»: Այն ամենը, ինչ չէր կարելի մեկնաբանել «սուրբ» գրքերի ոգով, այրվում էր շիկացած երկաթով: Աստվածաբանները պնդում էին, թե **իբր գիտությամբ զբաղվելը դաշինք է սատանայի հետ**: Դոմինիկյան կուսակրոն Կիշչինան հայտարարում էր, որ «**մաթեմատիկոսները բոլոր հերետիկոսությունների հրահրողներն են, երկրաչափությունը՝ «սատանայից է**»: **Քիմիան եկեղեցականները անվանում էին «սատանայական յոթը արվեստներից մեկը**»: Եկեղեցականների ճնշման տակ ավելի քան հազար տարի անազնիվ, նույնիսկ **մեղսական գործ էր համարվում նաև վիրաբուժությունը**: Չի եղել թերևս գիտության մի բնագավառ, որի դեմ հանդես չգային կրոնի քարոզիչները» (Զրույցներ կրոնի և գիտության մասին, Երևան, 1965 թ., էջ 174):

Ճիշտ է, նողկալի ու զազրելի է այստեղ քննվող ժանտախտավոր դոգմաների պահանջները, սակայն պետք է ասվի, որ Աստվածաշունչը-Բիբլիան գրող սիոնիստ հեղինակները անկեղծ են ու համարձակ: Նրանք պարզ ու հասկանալի գրում են, որ իրենց արյունակից Հիսուս Քրիստոսը արհամարհանքով ու թշնամաբար է տրամադրված գիտակ, իմաստուն, ազնվատոհմ մարդկանց հանդեպ, սակայն հովանավորում է մանկամիտ, հիմար, տգետ, տկար, անարգ մարդկանց և իր անելիքը իրականացնում է հենց նրանց ձեռքով: Այստեղ խոսք ասելու տեղ չի մնացել, քանզի քրիստոնյաներին գերեզման ուղարկելու սիոնիստների պահանջին ընդդիմացող չկա. քրիստոնյաները լռելյայն իրենց համաձայնությունն են հայտնում: Չգիտեմ, թե

ինչքանով է տեղին ասել, որ Հայաստանի այսօրվա պետական կառավարման համակարգում և այլևայլ հանգուցային ոլորտներում՝ գիտակ, իմաստուն, ազնվատոհմ մարդկանց մուտքը համարյա արգելված է: Զարմանալի նմանություն:

Աստվածաշնչից վերը բերված քաղվածքների բովանդակությունից հասկանալի է դառնում, որ քրիստոնեությունը թշնամաբար է տրամադրված գիտության, իմաստության նկատմամբ և հենվում է ստի ու տգիտության վրա: Իսկ եբրայեցիների-հրեաների նկատմամբ քրիստոնյաների գերակայության հետքն անգամ չկա:

4. Հիվանդության պարագայում ապավինել միայն եկեղեցականի աղոթքին, այդ աղոթքով նաև մեղքերը կներվեն, նեղության ու կարիքի դեպքում, անընդհատ ու ջերմեռանդ աղոթել, աղոթելիս էլ առօրյա հոգսերի ու ապագայի մասին չմտածել և իրական կյանքից անջատվել՝

«Եթէ ձեզմէ մէկը նեղութեան մէջ է, աղօթք թող ընէ: ***Եթէ ձեզմէ մէկը հիւանդ է, եկեղեցիին երէցները թող կանչէ, որպէս զի իր վրայ աղօթք ընեն*** *ու Տէրոջը անունով թող իւղով օծեն զինք:* ***Հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը ու Տէրը զանիկա ոտքի պիտի հանէ:*** *Եւ եթե մեղք ալ գործեր է, պիտի ներուի անոր: Արդարին ջերմեռանդ աղօթքը շատ ազդեցութիւն ունի: Եղիան մէզի պէս կրքերու ենթակայ մարդ մը՛ն էր:* ***Աղօթք ըրաւ որ անձրեւ չգայ եւ երեք տարի ու վեց ամիս երկրի վրայ անձրեւ չեկաւ:*** *Եւ նորէն աղօթք ըրաւ ու երկինք անձրեւ տուաւ եւ երկիր իր պտուղը բուսցուց»* (Թուղթ Յակոբու 5:13-18):

*«****Պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ****»* (Ղուկաս 18:1)

Նախորդ հատվածում տեսանք, թե Աստվածաշունչը ինչպես է մարդկանց մեջ վախ ու սարսափ ներարկում, սակայն գործը դրանով չի սահմանափակվում: Նա ունի նաև այդ վախն ու սարսափը առավել խորացնելու և հավերժացնելու դեղատոմսը՝ խոսքը վերաբերում է քրիստոնյաներին պարտադրվող անընդհատ ու անձանձրույթ աղոթքին, երբ հավատացյալը

պետք է կտրվի աշխատանքից, առօրյա հոգսերից, մեկուսացվի աշխարհից:

Եղիայի աղոթքով երեք ու կես տարի անձրև չգալու և նրա աղոթքով էլ երկնքի կողմից անձրև պարգևելու մոլորեցնող զառանցանքից հասկացվում է, որ քրիստոնեական կրոնում անեծքը նույնպես աղոթք է համարվում: Անեծքի զորությամբ իր աշակերտից ետ չի մնում նաև քրիստոնյաների փրկիչը: Սինոպտիկ հեղինակները գրել են, որ Քրիստոսը անեծքով ծառ է չորացրել. *«Առտուն, երբ ինքը (Քրիստոսը) քաղաք կը դառնար, անօթեցաւ: Ճամբուն վրայ թզենի մը տեսնելով քովը գնաց: Անոր վրայ տերեւներէն զատ բան մը չգտաւ. ու ըսաւ անոր. «Ասկէ յետոյ պտուղ պիտի չտաս յաւիտեան»: Եւ իսկոյն թզենին չորցաւ: Աշակերտները երբ տեսան, զարմացան ու ըսին. «Թզենին ինչպէ՞ս շուտ մը չորցաւ»: Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց. «Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ,Եթէ հաւատք ունենաք ու չերկմտիք, ոչ միայն այդ թզենիին եղածը պիտի ընէք, հապա նաեւ եթէ այս լեռանը ըսէք ,Ելի՛ր ու ծովը ինկիր՛, պիտի իյնայ: Ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խնդրէք, պիտի առնէք»* (Մատթ 21:18-22): Ավետարանիչ Մարկոսի գրածից (Մարկ 11:12-14) հասկացվում է, որ Քրիստոսը թզենուն մոտեցել է վաղ գարնանը՝ մինչ ծաղկելն ու բերք տալը, այսինքն՝ հորինված այդ անեծքը բացարձակ տգիտություն է ցուցանում:

Աղոթքը դատարկապաշտ մարդուն կրոնի ենթակայության տակ պահելու ամենազորեղ զենքն է: Ահա թե ինչու քրիստոնեական կրոնում առանձնակի տեղ է հատկացվում աղոթքներին (Հայաստանում բացի եկեղեցիներից, աղոթում են տանը, մանկապարտեզներում, դպրոցներում, ուսումնական մյուս հաստատություններում, Գիտությունների ակադեմիայում, նախագահական համակարգում, կառավարությունում, առողջապահական հաստատություններում, բանակում...):

Քրիստոնեական գործիչ Ն. Սինայեցին ուսուցանում է. «Նախ աղօթիր **արտասուքներ ստանալու համար**, որպէսզի **սուգի միջոցով կակղեցնես անձիդ մէջ ներգոյացած խստութիւնները** եւ, խոստովանելով անձիդ անօրէնութիւնը քո Տէրոջը, Նրանից մեղքերի թողութիւն ստանաս»: «**Ամէն խնդրուածքից առաջ յաջողութեան համար քեզ պէտք կլինեն արտասուքներ**, քանի որ **Տէրը շատ է ցանկանում արտասուալից աղօթք ընդունել**

քեզանից»: «Ջանա՛ **աղօթքի ժամանակ միտքը խուլ ու համր պահել**, անսայթաք մնալ ամէն տեսակ արկածներից, **որպէսզի աղօթքը ընդունելի լինի**»: «**Գնա վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին եւ, վերցնելով խաչը, ուրացի՛ր անձդ եւ աշխարհը, որպէսզի կարողանաս անզբաղ աղօթել**»: «**Մի՛աղօթիր, որ քո կամքը կատարուի, քանզի այն համաձայն չէ Աստծոյ կամքին**, այլ մանաւանդ՝ այնպէս, ինչպես սովորեցիր: **Աղօթի՛ր՝ ասելով. «Քո կամքը թող լինի իմ մէջ՝ սրբուելու բոլոր ախտերից եւ բարկութիւնից**»: «**Ինչպէս հացն է սնում մարմինը, եւ առաքինութիւնը՝ հոգին, նոյնպէս էլ մտքի սնունդը հոգեւոր աղօթքն է**» (Ս. Նեղոս Սինայեցի, Աղօթքի մասին, Գանձասար, հ. Ա, Երևան, 1992 թ., էջ 180-196):

Ըստ Սինայեցու՝ սգավորի զգացողությամբ, սեփական ցանկությունից ու կամքից զուրկ և իրենից ու իրական կյանքից անջատված վիճակում կատարվող աղոթքը խիստ ախորժալի է Հիսուս Քրիստոսի համար նաև այն պայմանով, որ աղոթողը պետք է իր ունեցվածքը հանձնի աղքատներին, իր անձն ու աշխարհը ուրանա, վերցնի իր խաչը, այսինքն՝ հաշտվի մահվան հետ, որպեսզի աղոթքն ընդունելի լինի: Ենթադրենք: Մարդկանց նախ հավատացնում են, թե գերբնական ուժով օժտված ու ամենասոսկալի պատիժներ իրականացնող աստված կա, ապա համոզում են, որ աղոթքներով ոչ միայն կփրկվեն նրա պատիժներից, այլև անդրշիրիմում էլ բարեկեցիկ կյանքով կապրեն: Արդյո՞ք Սինայեցու ցուցմունքները կատարող հավատացյալները կարող են կյանքի իմաստը հասկանալ ու մարդ կոչվել: Պարտադրվող աղոթքներին ծանոթ յուրաքանչյուր բանական մարդ կհամոզվի, որ իր հետևորդների՝ օտար ժողովուրդների նկատմամբ Քրիստոսի ատելությունն ու թշնամանքը սահման չունեն, չէ՞ որ այդ աղոթքները բխում են Քրիստոսի ուսմունքից:

Սինայեցու այն նենգ միտքը, թե աղոթքը մտքի սնունդ է, ամենևին այդպես չէ: Ի՞նչ մտքի սնունդ, երբ պահանջվում է անջատվել իրական կյանքից, մոռանալ սեփական կամքի դրսևորման մասին: Վստահորեն կարելի է ասել, որ աղոթքը ոչ միայն մտքի սնունդ չէ, այլև միտքը բթացնող, միտքը ամայացնող զարհուրելի մի վիրուս է:

Սեփական կամքից հրաժարվելու հարցում նույն կարծիքն ունի նաև քրիստոնեական եկեղեցու հռչակավոր գործիչ Գրիգոր

Նարեկացին: Նա իր աղոթագրքի հենց առաջին տողերում, դիմելով Հիսուս Քրիստոսին, գրում է. «Եվ իմ սասանեալ հոգու իղձերի պտուղն այրուող՝ անձս տոչորող թախծութեան հրի վրայ դնելով՝ **կամքիս բուրվառում առաքում եմ քե՛զ**» (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 2015, էջ 9): Այս աղոթագիրքը ներկայացվում է, որպես տարբեր հիվանդությունների բուժման միջոց: Այդ նպատակով մատուռներ են գործում ՀՀ հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, անգամ դպրոցներում ու զինվորական հաստատություններում: Հավանաբար, նկատի ունենալով նաև այն, որ նշված աղոթագրքում Նարեկացին Քրիստոսին անվանում է արփիացնող ցող, ամենաբույժ դեղ, ձրի բժշկություն, կրկնաձիր առողջություն, **ստրկամեծար թագավոր** (էջ 18), իսկ մեկ այլ տեղ աղերսում է Քրիստոսին, որ «Մատյան ողբերգության» աղոթարանի ընթերցողներին բժշկի և ների նրանց հանցանքները (էջ 21): Կամ՝ «Մատյանն այս ողբերի, որ քո անունով սկսեցի, բարձրեա՛լ, թո՛ղ կենսատու դեղ ու դարման լինի և բժշկի քո արարածների հոգու ու մարմնի ցաւերը բոլոր» (էջ 23): Նարեկացու այդ գործում բացակայում է բնություն, ազգ, հայրենիք, ընտանիք, հարազատ հասկացությունները: Հեղինակի լացն ու կոծը, ինքնախարազանումը, ինքնաստորացումը, հրեաներին և Իսրայելին փառաբանելը ուղղված է անդրշիրիմում իրեն մի կտոր հաց ապահովելուն: Նա վստահ է, որ այդ լավությունն էլ պետք է անի ազգությամբ հրեա Հիսուսը, որը երկնքի ու Երկրի տերն է («Ոչ թէ անուանում են քեզ Դաւթի որդի, այլ աստուածային էութեան իբրեւ ծնունդ եմ դաւանում քեզ, ոչ միայն կոչում եմ Ռաբբի, որ պատուանուն է իսկութիւնը գիտենալ կարծող վարդապետների, այլեւ հաւատում եմ քեզ, որպես Տիրոջ երկնի եւ երկրի», էջ 75): Նարեկացու այս աղոթագիրքը, միաժամանակ Հին և Նոր կտակարանների մեկնությունն է և ամբողջովին միտված է քրիստոնեության տարածմանն ու արմատավորմանը: Հավանաբար, Նարեկացու կյանքի օրոք Հայաստանում քրիստոնեությունը հարգանքի պակասություն է ունեցել և տաղանդաշատ հոգևորականը իր պարտքն է համարել (գուցեև պարտադրանք է եղել) ամրապնդել այդ կրոնի դիրքերը. «Ես սկսելով ողբերգութիւնն այս աղերսանքների, ես հաւատքի շէնքը պիտի կառուցեմ» (էջ 46):

Հայաստանում քրիստոնեության ամրապնդման հարցում շահագրգիռները, իմա՝ սիոնիզմի զինվորները անկախության

շեմին և դրանից հետո հսկայական ծավալի կրոնական գրականություն ներկրեցին, ինչպես նաև հրապարակեցին, որոնց զգալի մասը աղոթքին վերաբերող: 1991 թվականին հրատարակված «Աղոթագրքի» առաջաբանում կարդում ենք. «Աշխարհ գալով, Հիսուս Քրիստոսն ինքը հաճախակի աղոթել է... Աղոթքը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի հոգևոր զարգացման գործում... Արդի ժամանակներում շատերը թաղված լինելով նյութապաշտության հոգեկործան ճահիճը, աղոթքի մասին խոսելն անգամ ավելորդ են համարում. Աստծո հետ հաղորդվելու միակ ձևն աղոթքն է» (Աղոթագիրք, Երևան, 1991, էջ 5-7):

Ուշագրավ է հայ ժողովրդի ավանդական կրոնը ոչնչացնող, Հայաստանում նոր կրոն ներմուծող, պարթև Գրիգորի աղոթքը. «Հիսուս Քրիստոս, ինչո՞ւ ես լքում... գթա՛ ինձ, հանի՛ր ինձ իմ **անօրենության ճահճից... Փրկի՛ր ինձ իմ թշնամիներից**. քանզի նրանք **առյուծի նման գոչելով և մռնչալով ցանկանում են կուլ տալ ինձ**: Արդ, Տեր իմ, ցոլացրու շանթերը քո և կործանիր նրանց զորությունը... Այժմ, Տեր, կեցո՛ և ապրեցրո՛ ինձ, **որովհետև քեզ ապրեցրի**. հանի՛ր նեղությունից անձն իմ, որպեսզի նենգավորը, որ **թաքուն հնարքներով մարտնչում է իմ դեմ**, իսպառ կորստյան չմատնի ինձ... Ամենակարող Տեր Աստված իմ, ողորմյա՛ ինձ, մեղուցյալ հոգուս արտասվելու շնորհք տուր, **որպեսզի լվացվեմ բազում մեղքերից**, որպեսզի փրկվեմ **անողորմ հրեշտակների ձեռքից,** որոնք դժոխքի հուրն են նետում ամբարիշտներին... Աստված բարձրյալ, միակն առանց մեղքերի, այդ օրը շնորհիր ինձ՝ մեղավորիս, քո անչափ մեծ գթությունը, **որպեսզի իմ թաքուն մեղքերը չհայտնվեն ամենատես հրեշտակներին, մարգարեներին, առաքյալներին և արդար սրբերին**» (Աղոթագիրք, Երևան, 1991թ., էջ 133-136):

Եթե նկատի ունենանք հայ ժողովրդի գլխին եկածը, ապա Քրիստոսին ուղղված պարթև Գրիգորի աղոթքը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ: Նա իր կյանքը վտանգելով դավանափոխ է արել հայերին և դրա դիմաց Քրիստոսից աջակցություն է պահանջում՝ (մոտավորապես հետևյալ բովանդակությամբ)՝ քո կրոնը հայ ժողովրդին պարտադրեցի արյունահեղությամբ, իսկ հեղվող արյունն էլ միայն հայկականն էր: Ես կարողացա դառնալ ոչ միայն հայերի հոգևոր առաջնորդը, այլև՝ նրանց զորքերի գերագույն գլխավոր հրամանատարը

և հայոց բանակը հանեցի հայ ժողովրդի դեմ: Կոտորեցի այնքան ժամանակ, քանի դեռ դիմադրություն կար: Մարտերից մեկում նույն գերեզմանում թաղեցի 1038 հայ, որոնք միմյանց դեմ պատերազմում էին հանուն Հայոց բուն հավատքի և հանուն քեզ («Որոնք կռվեցին հանուն Գիսանե կուռքերի և հանուն Քրիստոսի»): Հայոց հավատքի նվիրյալ հայերից հազարավորներ, որոնք կարողացան խուսափել մահից, փախան աշխարհով մեկ, իրենց համար համայնքներ ստեղծեցին և այլևս չհամարձակվեցին Հայաստան վերադառնալու մասին անգամ մտածել: Ես ոչնչացրի հայոց հազարամյա մշակութային արժեքները, ինչքան որ հնարավոր էր, ոչնչացրի ազնվականներին, տիրացա տաճարներում և իշխանական և ազնվական տներում կուտակված հարստություններին և դրանց մի չնչին մասով քրիստոնեական եկեղեցիներ կառուցեցի, ինչպես նաև խրախուսեցի քրիստոնեություն ընդունողներին: Եթե դու չես հավատում իմ ասածին, ապա կարդա Զենոբ Գլակի և Ագաթանգեղոսի գործերը, ովքեր իմ զինակիցն ու քարտուղարն են... Հայ զինվորների ձեռքով բոլոր հայերին ոչնչացնելը հնարավոր չէ, քանզի զինվորները սկսել են հասկանալ կատարվածը, իսկ իրենց կյանքը փրկելու համար քրիստոնեական կրոնը ընդունածների մեջ բազում են նրանք, ովքեր գիտակցում են իմ կատարածը և գուշակում, որ ես գործում եմ քեզ հայտնի կազմակերպության ծրագրին համապատասխան: Ուստի փրկիր ինձ հայ վրիժառուներից, որոնց սարսափից ես կորցրել եմ իմ հանգիստն ու քունը:

Ահա այսպիսին կարելի է պատկերացնել Հայաստանի սրբերի սրբի կարգավիճակում փառավորված, և լուսավորիչ անվանվող, հայոց առաքելական, իրականում գրիգորյան եկեղեցու հիմնադիր, հայասպան պարթև Գրիգորի աղոթքի ենթատեքստը: Սակայն իրականում անհնար է, որ այդ կրոնի նշանավոր գործիչը Քրիստոսին աստված համարի և նրանից աջակցություն ակնկալի, քանզի լավագույնս գիտի նրա կերպարի սարքովի լինելը:

Ցանկությունը հենց տեղում իրականություն դարձնող մի աննման աղոթքի օրինակ է ժառանգություն թողել հայ ժողովրդին իր բուն հավատից զրկող և արյունահեղությամբ ու ավերածություններով քրիստոնեություն պարտադրող պարթև Գրիգորի գործընկեր ու զինակից Զենոբ Ասորին,

նույն ինքը՝ Ջենոբ Գլակը: Տեսնենք, թե թշնամուց ազատվելու, *բարբարոսների ձեռքից փրկվելու* աղոթքինինչլուծումէ *ովել* «մարդասեր» Հիսուս Քրիստոսը. «Պողիկարպոսը հրամայեց սպասավորներին՝ իրենք իրենց անձերը նախապատրաստեն նվիրաբերելու տիրոջ մարմնին (այսինքն՝ նահատակվելու): Եվ յոթ խստաճարակներ մատուցեցին պատարագ. «- Տեր Աստված զորությանց և արարիչ հավիտենության, որ ստեղծեցիր մարդուն քո պատկերի և բարերարությամբ, և կարգեցիր նրան իշխան բովանդակ երկրի վրա. **Տվեցիր նրան** փառք ու պատիվ հավիտենական ու **անմահություն**... Բայց դու, Տե՛ր, խղճացիր, գթացիր քո ձեռքով ստեղծվածներիս, **քո միածին որդուն առաքեցիր որպես փրկություն աշխարհիս, որ կնոջից ծնվեց և աշխարհ եկավ մեր նմանությամբ**... Չցանկացավ ծառայել այդ ապականված էությանը. դրանով մաքրեց մահվան ապականությունը՝ **գերեզման իջեցնելով և մահվան վրա իշխելով՝** մահը գերեց. **դեպի երկնային թագավորությունը ճանապարհ հարթեց՝** ամենեցուն առաջնորդելով **դեպի հավիտենական կյանք**... **Այս ամենը կատարելով՝ յուր սեփական մարմինը թողեց հավատացյալներին որպես կերակուր, իսկ յուր արյունը՝ որպես ըմպելիք...** Նույնպես և մենք **այսօր մեր անձն ենք տանջանքի մատնում իբրև պատարագ քո անվան փառաբանության**... Արդ, հիշի՛ր Տեր, քո արյանդ վարձքը և **քո անունը փառաբանողներին փրկիր բարբարոսների ձեռքից:** Եվ թող հույսով ապավինեն անվանը քո՝ բոլորը, ովքեր երկյուղածությամբ քեզ են ծառայում: Ամրապնդի՛ր, **զորացրո՛ւ, Տեր, քո ժողովրդի ոգին, առաջնորդիր դեպի հավիտենություն:** Պատսպարիր նրանց քո խնամատար աջով... - **Տուր, Տե՛ր, քո այդ վերին Երուսաղեմում ժառանգության տեղի մեր անձերի համար**, **որովհետև քո անվան համար ենք նահատակվում** հանապազօրյա և մեր կյանքը՝ **քո անչափելի մարդասիրության փոխանակ**, **կամավոր տանջանքների ենք մատնում...** Այս սուրբ Կարապետի բարեխոսությամբ և քո Մկրտչի աղաչանքով **պահպանիր հավատացյալներիդ եկեղեցին անդրդվելի ու անսասանելի, որպեսզի հաստատուն մնա մեր հավատի հիմը**... Հիշի՛ր, Տե՛ր, ինչ որ քո արյամբ ձեռք բերիր և սիրով որդեգրեցիր: Մի՛ լինիր չարյաց իշխանություն քո հոտի վրա և ո՛չ ապականիչ՝ ժառանգության Վերին Սիոնի: Ընդունի՛ր, Տե՛ր, մեր աղաչանքները և շնորհներդ բաշխիր սրա (եկեղեցու)

բնակիչներին, որոնք հեռանում են այս կյանքից թշվառությամբ ապրելով և ոչ թե փափկակեցությամբ մարմնի...»: Իսկ երբ այս բոլորը ասվեց-ավարտվեց, **երկնքից եկավ մի ձայն** (Պարզից էլ պարզ է, որ ձայնը Քրիստոսինն է,- Հ.Ս.), որը այսպես խոսեց. – **Թող լինի այնպես, ինչպես ինքներդ եք ցանկանում. և նա, ով հանուն ինձ և հանուն այս սբ. Կարապետի՝ թշվառությամբ իր կյանքը անցկացնի, պիտի բարությամբ նրան հատուցեմ օրն հատուցման և նրանց բոլոր հանցանքները պիտի ներեմ, որովհետև մարդասեր եմ բոլոր հավատացյալների նկատմամբ**: Եվ դուք տեսնելու եք այն լուսավոր կյանքը, որ ինքներդ պատրաստեցիք ձեր իսկ տքնությամբ: Այս բանը լսելով՝ սրբերը բոլոր ծունկի եկան սուրբ սեղանի առջև: Ապա Պողիկարպոսը դուրս եկավ , գնաց կանգնեց սուրբ խաչի առջև և սկսեց աղաչել աստծուն, **որ գալիք թշնամուն կործանում բերի**, աշխարհին խաղաղություն լինի և աղքատ ու տանջվող մարդիկ իրենց տան ու տեղի տերը մնան: **Այնժամ հանկարծակի խուժեցին պարսից զորքերը. և երբ տեսան Պողիկարպոսին, բռնեցին, կտրեցին նրա գլուխը և նետեցին առջև խաչին**: Իսկ իրենք շուտափույթ դեպի եկեղեցու դուռը շտապեցին, տեսան այնտեղ արտասվող և առ աստված պաղատող կրոնավորներին: **Անմիջապես հարձակվեցին սրբերի վրա և յոթին էլ սպանեցին...** Սրբերի **ոսկորները երեք օր շարունակ ընկած էին անթաղ...** Իսկ նա (Մուշեղ իշխանը) լսելով՝ երեք օր շարունակ գլխահակ նստած մնում էր: Իսկ **զորքերը** քրիստոնեավայել օրինոք և մխիթարական այս թուղթը մատուցեցին նրան: - Ով երանելի լույսի ճշմարիտ շառավիղ, երջանիկ սպարապետ, **մի՛ տրտմիր նրանց համար, ովքեր իրենց աղոթքներով ամուր աշտարակ եղան աշխարհիս և օգնական ու բարեխոս մեզ համար առ Աստված**: **Բայց դու ավելի ևս գոհություն հայտնիր հայր Աստծուց, որ հենց քո օրերում, այնտեղի բազում տառապանքներից հետո, այդ աստիճան հանգստությամբ, մարտիրոսական մահվամբ առ Աստված փոխվեցին, խոտաբուտ կյանքից՝ անցան դեպի դրախտը փափկության. և մեզ համար էլ բարեխոս եղան**» (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ., էջ 68-72):

Վանականների այն աղերսին, որ Քրիստոսը թշնամուն կործանում բերի, իսկ իրենց փրկի և վերին Երուսաղեմում տեղ հատկացնի, «մարդասեր» Քրիստոսը երկնքից ձայնում է,

թե *թող լինի այնպես, ինչպես ինքներդ եք ցանկանում:* Եվ փաստորեն Քրիստոսի կամոք՝ նրանք հենց աղոթելիս էլ սպանվեցին: Այսինքն, ըստ քրիստոնեական կրոնի, աղոթողը աշխարհիկ բարիքներ, առողջություն, չարիքից փրկվել աղերսելով պետք է հասկանա, որ դրանով կորստի ու մահվան է արժանանալու:

Ստորև բերվող քաղվածքը հիմք ընդունելով, կարելի է ասել, որ քրիստոնեությունը տարածելու նպատակով պարթև Գրիգորի հետ Հայաստան ներխուժած յոթ խստաճարակ խափանարարներից, հավանաբար միայն գլխատված Պողի-կարպոսը հնարավորություն կունենա Քրիստոսի հետ հազար տարի թագավորել, մյուս վեց մեռելների հարցը մնում է անորոշ. *«Յիսուսին վկայութեան ու Աստուծոյ խօսքին համար գլխատուածներուն հոգիները տեսայ: Անոնք, որ երկրպագութիւն չըրին գազանին, ո՛չ ալ անոր պատկերին ու անոր դրոշմը իրենց ճակատներուն վրայ չընդունեցին եւ ապրեցան ու Քրիստոսին հետ հազար տարի թագաւորեցին: Միւս մեռելները չապրեցան մինչեւ հազար տարին լրացաւ» (Յայտն Յովհաննու 20:4-5):*

Մի ողորմելի տպավորություն է թողնում նաև սպարապետին հղած՝ հայոց բանակի ուղերձը, որի մեջ հույս է փայփայվում, որ աղոթելիս նահատակվածները մեռելների աշխարհում բարեխոս կլինեն նաև իրենց համար: Պարզ չէ՞, որ այսպիսի գաղափարախոսության ենթակա բանակ ունեցող երկիրը աստիճանաբար պետք է զրկվեր իր բարգավաճությունից և հողատարածքներից, իսկ բնակչությունն էլ, «հանգրվան» գտներ օտար, նույնիսկ թշնամի երկրներում (հասկանալի է, թե որ կազմակերպության թելադրանքով է, որ այժմ, այս օրհասական պահին, հայոց բանակում, պրոֆեսորներից 4-5 անգամ բարձր աշխատավարձով, վխտում-աղոթում են տերտերները՝ իրենց կեղծ հայրենասիրական քարոզներով: Նույն տերտերներին տեսնում ենք գիտության և կրթության, պաշտպանության, ներքին գործերի, գյուղատնտեսության, առողջապահության նախարարություններում աղոթքով թշնամու արձակած կրակոցների, կարկուտի, առանձին վտանգավոր վիրուսների դեմ պայքարելիս):

Ահա թե ինչպես պետք է հասկանալ վերահաս վտանգից ու արհավիրքից փրկվելու աղոթքով Քրիստոսին դիմելը:

Փաստորեն, քրիստոնեական կրոնում, օրինակ, փրկությունը հոմանիշ է մահվան: Եթե հարց լինի, թե Գլակից և Սինայեցուց հղումներ կատարելով մեղադրում եմ քրիստոնեությանը, ապա կարող եմ ասել, որ երկու հեղինակների գրվածքն էլ ամբողջովին բխում է քրիստոնեական կրոնի դոգմաներից:

Գիտությունը ժխտող և գիտության թշնամի է նաև քրիստոնեական այն դոգման, ըստ որի եթե մեկը հիվանդ է, եկեղեցու սպասավորի աղոթքով կառողջանա: Միայն պետք է պատկերացնել, թե քանի միամիտ հավատացյալներ ու նրանց անգիտակ մանուկներ են խեղվել կամ կյանքից զրկվել ու դեռևս կզրկվեն՝ խափանարար ու ավերիչ այս դոգմայի պատճառով: Ի դեպ, «Եհովայի վկաներ» սիոնիստական կառույցը նույնպես մերժում է բժշկությունը: Այդուհանդերձ, ժողովուրդը քրիստոնեական եկեղեցուց պահանջում է, որ նա պայքարի «Եհովայի վկաների» դեմ, մոռանալով, որ «վկաներ» կոչված խափանարար կառույցի՝ բացահայտ բիրտ դրսևորումներով գաղափարախոսությունը համահունչ է Աստվածաշնչի տառին ու ոգուն: Եհովայի վկաների դեմ առաջին հերթին պետք է պայքար մղի պետությունը, քանի որ սիոնիստական այդ կազմակերպության գլխավոր թիրախներն են ընտանիքը և պետությունը, իսկ եկեղեցին ինչո՞ւ պետք է պայքարի մի կազմակերպության դեմ, որը նույն նպատակն ունի և նպաստում է իր իսկ բարգավաճմանը: Ուղղակի զարմանալի է, որ Հայաստանում նրանք հեշտությամբ գրանցվեցին, և այժմ էլ այդ ծայր աստիճան վտանգավոր կազմակերպության նկատմամբ մեր իշխանությունները լոյալ են («Ընդամենը մեկ տասնամյակից էլ պակաս ժամանակահատվածում «Եհովայի վկաներ» կազմակերպության ներկայացուցիչները մեր փոքր երկրում իրենց շարքերը համալրեցին ավելի քան 8000 «համոզված» անդամներով և 10000 համակիրներով, մինչդեռ Վրաստանում այդ թիվը 94 է, Ադրբեջանում 74՝ իրենց իսկ «Դիտարանի» տվյալներով», «Ազգ», 06.11.2004 թ.):

Վերադառնալով հիվանդներին կախարդանքով ու թովչությամբ բուժելու հարցին՝ նշեմ, որ, ընդհանուր առմամբ, Նոր կտակարանի գաղափարական ուղղվածությանն օտար է մարդկանց բուժելը և մահացածներին վերակենդանացնելը: Ուրեմն, Քրիստոսի կողմից մարդկանց բուժելը և մահացածներին նորից կյանք պարգևելը հակասում է քրիստոնեական կրոնի

ուսմունքին և բազում հարցեր առաջացնում: Նախ, Քրիստոսը չի ընդունում իրական կյանքը և կարևորում է միայն հանդերձյալ աշխարհը, որտեղ էլ թագավորելու է մեռելների վրա: Այս դեպքում ինչպե՞ս հասկանալ մարդկանց բուժելու և առանձին դեպքերում էլ՝ մեռելներին հարություն տալու Քրիստոսի առաքելությունը. չէ՞ որ նրա ուսմունքը մահը երանություն է համարում, իսկ ինչպես հայտնի է, հիվանդությունը մարդուն դեպի մահն է տանում: Նաև պետք է հիշել, որ մարդուն հնարավորինս շուտ գերեզման չտանելը նշանակում է, որ Քրիստոսը այդ մարդուն չի սիրում կամ քիչ է սիրում: Ավետարաններում նկարագրված բուժման ու վերակենդանացման խաբկանքը, թերևս վերաբերում է միայն քրիստոնեությունը լիովին չընդունող տատանվողներին, որպեսզի նրանք ընդունեին քարոզվող կրոնը:

Ավետարաններում ներկայացված՝ Հիսուսի ձեռամբ մարդկանց հարություն տալը շատ նման է դրանից դարեր առաջ գոյություն ունեցող հին եգիպտական բանահյուսության ավանդույթներին. «Իմաստության աստծու խորհուրդով Իսիսը ապաստան գտավ Նեղոսի գետաբերանի պապիրուսների մացառուտներում: Փախուստի ժամանակ նրան ուղեկցում էին յոթ կարիճ: Մի անգամ հոգնած դիցուհին երեկոյան եկավ մի կնոջ տուն, որը կարիճները տեսնելով՝ սարսափից փակեց դուռը նրա առաջ: Կարիճներից մեկը իսկույն դռան տակից ներս սողաց և մահացու խայթեց այդ կնոջ որդուն: Մոր ողբը հուզեց Իսիսի սիրտը, նա ձեռքերը դրեց երեխայի վրա և հմայախոսք ասաց, թույնը դուրս եկավ երեխայի մարմնից, և նա կենդանացավ: Իսիսը օգնության աղոթքով դիմեց արևի աստված Ռային: Նա, անսալով մոր պաղատանքներին, կանգնեցրեց իր երկնային նավը և երկիր ուղարկեց Թոտին, որպեսզի սա Իսիսին սովորեցնի այն հմայախոսքը, որի միջոցով հնարավոր է վերստին կյանքի կոչել որդուն: Իսիսը արտաբերեց հզոր հմայախոսքը, և թույնը իսկույն հեռացավ Հորի մարմնից. նրա մեջ օդ մտավ, նա կենդանացավ» (Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989 թ., էջ 428):

Հին և Նոր կտակարաններից բերված քաղվածքների բաղդատումով կարելի է ասել, որ Աստվածաշունչը հրեաներին պարտադրում է լինել բանական, առողջ, սիրել աշխարհն իր հարստություններով հանդերձ, տիրանալ ուրիշ ժողովուրդների ունեցվածքին, ուրախ ու լիարժեք կյանք վայելել, իսկ

քրիստոնյաներին՝ օտար ժողովուրդներին պարտադրում է մերժել իրական բուժումը, ամեն գործի մեջ ջերմեռանդ աղոթել, աղոթքից չձանձրանալ: Փաստորեն, Աստվածաշունչը հրաշալիորեն մշակված մի ծրագիր է, որի իրականացման համար հրեաներին և օտար ժողովուրդներին պարտադրվում է կատարել իրենցից պահանջվողը: Այդ ծրագրի իրականացման առաջին փուլում անհրաժեշտ է, որ հրեաների և քրիստոնյաների միջև հոգեբանական հաշտեցում կայանա: Այսինքն՝ հրեաներն ու քրիստոնյաները ընդունեն Եհովայի և Քրիստոսի կողմից իրենց մատուցված պարտադրանքը, որը հրեաների գերակայությունն է և քրիստոնյաների ստորադաս, զիջող լինելը և երկնային արքայություն փափագելն է: Նշված հոգեբանական հաշտեցումը, քրիստոնեական եկեղեցու նրբագույն աշխատանքի շնորհիվ, այսօր արդեն կայացել է, քանզի առանձնապես մեծ ջանք պետք չէր թափել, որպեսզի հրեաները համոզեին, որ աշխարհը պատկանում է իրենց:

5. Հրաժարվել աշխատանքից ու հարստությունից, չմտածել ապրուստի և լիարժեք կյանքի մասին, ապրել ինչպես կպատահի. ապագայի մասին հոգ չտանել, իրական կյանքը չկարևորել, միայն հոգալ անդրշիրիմում ապահով ու բարեկեցիկ կյանքով ապրելու համար պայմաններ ստեղծելու մասին՝

*«**Երկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք**, ուր ցեցը ու ժանգը կ՛ապականեն, ուր գողերը պատը կը ծակեն ու կը գողնան: Հապա **ձեզի գանձեր դիզեցէք երկինքը**, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ՛ապականեն ու ո՛չ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան: Քանզի ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ: Մարդ մը չի կրնար երկու տիրոջ ծառայութիւն ընել. վասն զի կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի՝ եւ միւսը պիտի արհամարհէ. **չէք կրնար ծառայել Աստծոյ ու մամոնային**: Ուստի կ՛ըսեմ ձեզի. «**Հոգ մի՛ ընեք ձեր կեանքին համար թէ ի՛նչ պիտի ուտէք, կամ ի՛նչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ի՛նչ պիտի հագնիք**. չէ՞ որ կեանքը կերակուրներէն աւելի է ու մարմինը հագուստէն: **Նայեցէք երկնքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն***

եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ամբարի մէջ կը ժողվեն, բայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: *Չէ՞ որ դուք անոնցմէ լաւ էք: ...**վաղուան համար հոգ մի ընէք,** վասն զի վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ. հերիք է օրուան իր նեղութիւնը»* (Մատթ 6:19-34):

*«**Աղէ՛ հիմա, հարուստներ, լացէ՛ք, ողբացէ՛ք ան թշուառութիւններուն համար՝ որոնք ձեր վրայ պիտի գան:** Ձեր հարստութիւնը ապականած է ու ձեր հանդերձները՝ ցեցի կերակուր եղած: **Ձեր ոսկին ու արծաթը ժանգոտած են եւ անոնց ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս»*** (Թուղթ Յակոբու 5:1-3):

*«Երբ Գալիլիացիներու ծովուն քովերը կը պտըտէր, տեսաւ Սիմոնը ու Սիմոնին եղբայրը Անդրէասը, ծովը ուռկան ձգած, վասն զի ձկնորս էին: Յիսուս ըսաւ անոնց. «**Իմ ետեւէս եկէք ու ես ձեզ մարդոց որսորդ ըլլալու պիտի պատրաստեմ**»: Անոնք ալ շուտ մը **իրենց ուռկանները թողուցին ու անոր ետեւէն գացին»*** (Մարկ 1:16-18):

*«Մարդ մը վազեց ու անոր (Քրիստոսի,- Հ.Ս.) առջեւ ծունկի գալով՝ ըսաւ. «Բարի՛ վարդապետ, **ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ**»: .... **գնա՛, ունեցածդ ծախէ՛, տո՛ւր աղքատներուն ու երկինքը գանձ պիտի ունենաս եւ խաչը վերցրու ու եկուր իմ ետեւէս»*** (Մարկ 10:17-21):

Իրական աշխարհում հարստություն չկուտակելու պարտադրանքը «հիմնավորվում» է այն բանով, որ գողերը կուտակված հարստությունը կգողնան, իսկ հանդերձյալ աշխարհում իբր ամեն ինչ դրված է լինելու ազնվության վրա, ուստի հավատացյալներին ասվում է, որ իրենց գանձերը կուտակեն երկնքում, ուր դրանք չեն փչանա և այնտեղ գող էլ չկա:

Սա քարոզում է մի կրոն, որը իր գոյությունը և իր սարսափազդու ուժն ու կարողությունը պահպանում է միայն ու միայն բացահայտ սուտը ճշմարտություն ներկայացնելով և ուրիշի ունեցվածքի կողոպուտով, իրականում թալան ու գողություն կատարելով: Օրինակ, Հայաստանում զանգվածային կոտորածների և բնակչության զգալի մասին երկրից

արտաքսելու միջոցով քրիստոնեությունը պարտադրելիս, մեր ազգային սրբավայրերում-տաճարներում հազարամյակների ընթացքում կուտակված ոսկին, արծաթը, թանկարժեք քարերը, ինչպես նաև ժողովրդից խլած հողատարածքներն ու մյուս հարստությունները դարձան քրիստոնեական եկեղեցու ու նրա գործիչների սեփականությունը, իսկ դրանից հետո էլ հայ մարդուն մեռյալ հրեայի առջև խոնարհեցնելով ու նրա կողմից իբր սպառնացող ահ ու սարսափի ճնշմամբ՝ հարկեր ու նվերներ կորզելով: Արդյո՞ք սա ծրագրված գողություն-կողոպուտ չէ:

Մի պահ ընդունենք, ինչպես ներկայացնում է **Ընդհանուր հուդայականությունը** (հուդայական և քրիստոնեական դավանանքները), որ Եհովան ու Քրիստոսն են ստեղծել Երկրագունդը, մարդկանց, ինչպես նաև՝ ամդրշիրիմյան աշխարհն իր՝ դրախտով ու դժոխքով: Թողնելով այստեղ առկա նենգորեն հորինված սուտը, միայն անդրադառնանք այն առասպելական հարցին, թե ի՞նչ երաշխիք կա, որ անդրշիրիմյան կյանք կոչվածում (ստիպված եմ նորից կրկնել այն բացարձակ ճշմարտությունը, որ մահվանից հետո ցանկացած կենդանի օրգանիզմ, այդ թվում և մարդը վերածվում է հիմնականում ջրի և ածխաթթու գազի), օրինակ, գողություն չի լինելու, երբ այդ երևակայական աշխարհում նույնպես թագավորում են հրեաների աստված Եհովան և ազգությամբ հրեա Հիսուս Քրիստոսը, իսկ նրանց օգնականներն են՝ ստախոսությունը, անբարո վարքը, գողություն-կողոպուտը, անմեղ մարդկանց սպանելն աստվածային պարգև համարող և հրեա հեղինակների կողմից երկինք բարձրացրած հաբիրու-եբրայեցի-հրեաները՝ Աբրահամը, Սառան, Իսահակը, Հակոբը, Մովսեսը և այլ սարքովի կերպարներ: Սակայն քրիստոնեական ուսմունքն իր հետևորդներին հավաստում է, որ անդրշիրիմյան աշխարհի դրախտ մասնաճյուղում արդարություն է տիրելու:

Գոնե այն հավատացյալը, ում համար իրական աշխարհն իր արժեքը դեռևս լիովին չի կորցրել և մեռնելուց հետո կյանքի գոյությանն էլ լիովին համոզված չէ, թող համարձակվի ինքն իրեն հարցնի. եթե դրախտում մեռելների համար ապրուստի, վայելքի, անվտանգության հարցերում իդեալական պայմաններ են լինելու, ապա ինչո՞ւ մեր աշխարհի որևէ տարածքում Եհովան ու Քրիստոսը այդպիսի պայմաններ չեն ստեղծում, որպես ցուցադրական մի նմուշ: Այդ պարագայում կվերջանային դրախտին հավատալ-չհավատալու խնդիրները,

իսկ հավատացյալն էլ կանխավ կիմանար, թե հանուն ինչի՛ է զոհաբերելու իր իրական կյանքը: Մյուս կողմից, պրպտող միտքը լիովին չկորցրած հավատացյալը գիտի, որ Հին կտակարանում Եհովան դաժանության և արյունարբության մի ավերիչ ուժ է և ցանկանում է աշխարհը դարձնել հրեաների սեփականությունը, և հենց ինքը Եհովան է հրեաներին մղում գողության, հաճախ էլ մատնանշում, թե ումից գողանալ և գողոնից էլ իրեն բաժին հասցնել: Հետաքրքիր է, թեկուզ այսքանը իմացող քրիստոնյա հավատացյալները ի՞նչ հիմնավորմամբ պետք է վստահեն նման վարքագիծ ունեցող աստծուն և դրախտին արժանանալու հույս փայփայեն:

Երկնքի, Երկրի և անդրշիրիմի մյուս կառավարիչ Հիսուս Քրիստոսի պարագայում խնդիրը բարդ է ու մշուշապատ: Որոշ գիտական գիտելիքների տեր հավատացյալները դժվար թէ հուսան, որ Քրիստոսը իր ծնող ժողովրդի վարք ու բարքից շատ հեռու է, քանզի նրանք լավ գիտեն, որ նա թլփատվել է հրեական ծեսով, իսկ ինչպես այդ մասին խոսվել է սույն գրքի առաջին մասում, ռաբբին նորածնի մատը թաթախում է տանջամահ արված քրիստոնյայի և թլպատված նորածնի արյուններ խառնած գինու մեջ, ապա մտցնում երեխայի բերանը և ասում՝ «Քեզ եմ ասում, ով մանուկ, կյանքդ քո արյան մեջ է»: Հրեաները Հիսուսին նաև ռաբբի են կոչել, ինչից կարելի է ենթադրել, որ նա նույնպես նման ծեսեր է իրականացրել: Բացի սրանից, նա պետք է որ ժառանգած լիներ նաև իր հոր որոշ հատկանիշները, իսկ ինչպես ցույց է տալիս Աստվածաշունչը, Եհովայի մեջ դիվայինից զատ ուրիշ հատկանիշներ չկան: Նույն Աստվածաշնչից պարզորոշ հասկացվում է, որ Եհովայի և Քրիստոսի նպատակները նույնական են, նրանք (նրանց գաղափարախոսությունները՝ հուդայական և քրիստոնեական կրոնները) համատեղ ջանքերով իրականացնում են աշխարհը հրեաների սեփականությունը դարձնելու ծրագիրը:

Քրիստոնյա հավատացյալները պետք է ըմբռնեն, որ ինչպես իրական կյանքում զրկվելով սեփական աստվածներից, մեռյալ հրեային են պաշտել, այնպես էլ երևակայական՝ մեռյալների աշխարհում իրենց ատողն է աստված համարվելու: Մեռելների մեռյալ աստված: Ծայրահեղ անհեթեթություն: Այսպիսին է քրիստոնեության՝ ջհուդապաշտության իրական դեմքը:

Ստացվում է, որ քրիստոնյա մեռելների համար երկնային տեր ունենալու հարցը մութ է ու անհեռանկար: Ժողովրդական այն առածը, թե «ուրիշի պարանով հոր մի՛ իջիր», նաև, այսպես ասած, կշրջանառվի քրիստոնեական անդրաշխարհում: Քրիստոնեական կրոնը այնպես է հյուսված, որ այդ պարանը օտարինն է և գտնվում է օտարի ձեռքում՝ թե՛ իրական կյանքում, թե՛ երևակայական անդրշիրիմում: Այսքանից հետո, հավանաբար, որոշ հավատացյալներ կարող են ենթադրել, որ քրիստոնյաների կողմից երկնքում կուտակած «գանձերը», այսինքն՝ իրական կյանքում գիտակցաբար կրած զրկանքներն ու տառապանքները, բնության պարգևած հաճույքներից, վայելքներից զրկվելը, ունեցվածքից, հարազատներից հրաժարվելը, թշնամուն սիրելը և ի վերջո՝ սեփական անձի ինքնաոչնչացումը, մեռյալ Քրիստոսը չի վերագրելու վերին Սիոն հասած իր արյունակիցներին՝ հրեաներին: Հետաքրքիր է, ի՞նչը կարող է նրան խանգարել, որ երկրային կյանքում կողոպտելու, զավթելու և սպանելու արտոնություն ստացած ժողովրդին՝ հրեաներին, անդրշիրիմում նույնպես չպարգևվի ուրիշ ազգերի «ձեռքբերումները»: Չմոռանանք, որ Քրիստոսը հրեաների հավերժ թագավորն է: Այդ մասին Ղուկաս ավետարանիչը գրում է, որ Գաբրիել հրեշտակը օրիորդ Մարիամին ասել է, թե պիտի հղիանա ու Հիսուս անունով որդի ծնի, որին աստվածը պիտի հանձնի Դավթի աթոռը, որպեսզի հավիտյանս թագավորի հրեաներին (քրիստոնեական կրոնում ընդունված է, որ Քրիստոսին խաչելիս խաչի վրա իբր գրված է եղել. «Հրեաների թագավոր Հիսուս Քրիստոս»): Իսկ տերտերները քրիստոնյաներին համոզել են, որ Քրիստոսը միայն իրենց փրկիչն է և միայն իրենց է սիրում, երբ Աստվածաշնչում Քրիստոսը միաժամանակ և՛ հրեաների թագավորն է, և՛ քրիստոնյաների փրկիչը (այս կրոնի որոշ դոգմաներում «փրկելը» հոմանիշ է «կյանքից զրկել»-ուն):

Հիսուս Քրիստոսի հրեաների թագավոր լինելու հանգամանքը կարող է և քրիստոնյա հավատացյալների մեջ նաև զայրույթ առաջացնել կամ ոմանց էլ գուցե թվա, որ միաժամանակ նրա կողմից երկու պաշտոնների իրականացումը անհնար է: Սակայն միայն առաջին հայացքից է այդպես թվում: Քրիստոսը համարվում է իրական կյանքով ապրող հրեաների թագավորը և քրիստոնյա մեռելների փրկիչը: Պարզից էլ պարզ է, որ հրեա ժողովրդի զավակ, մահացած և իբր կենդանացած՝

աստված դարձած Քրիստոսը կարող է զբաղվել միայն թագավորական խնդիրներով, քանզի մեռելների խնդիրներով զբաղվելու անհրաժեշտություն չկա, այն պարզ ու հասկանալի պատճառով, որ մահացածներն, ինչպես արդեն ասվել է, արագորեն վերածվում են քիմիական միացությունների և տարրալուծվում՝ բուսակենդանական աշխարհին, բնական ապարներին և բնական այլ համակարգերին: Նա՝ ի՞նչ հնարքով մեռելը կկարողանա փրկել մեռելներին: Մեռած-տարալուծված անհատին նորից վերակազմելու ու կյանք վերադարձնելու հարցը թողնում եմ փորձառու սիոնիստներին և անկեղծորեն նրանց վստահող քրիստոնյա հավատացյալների խղճին:

Անդրշիրիմում արժանապատիվ ու բարեկեցիկ կյանք փափագող քրիստոնյա հավատացյալները, եթե ուշադիր ընթերցեն Հայտնության հետևյալ քաղվածքը, կհամոզվեն, որ քրիստոնեական կրոնի քարոզչության համար նահատակվածները այնքան էլ գոհ չեն իրենց նկատմամբ փրկչի ցուցաբերած վերաբերմունքից. *«Երբ հինգերորդ կնիքը քակեց, սեղանին տակ տեսայ այն մարդոց հոգիները,* ***որոնք սպանուած էին Աստծոյ խոսքին համար ու անոր վկայութեան համար՝*** *որ իրենք տուած էին: Եւ մեծ ձայնով աղաղակեցին. «Ո՛վ սուրբ ու ճշմարիտ Տէ՛ր, մինչեւ ե՞րբ պիտի չդատես եւ մեր արեան վրէժը չլուծես երկրի բնակիչներէն»* (Յայտն Յովհաննու 6:9-10):

Քրիստոսի այն պարտադրանքը, թե գնա ունեցվածքդ վաճառիր, տուր աղքատներին, խաչդ վերցրու և հետևիր ինձ, կարելի է ենթադրել, որ սա նաև իրենց կազմակերպության համար գումար ձեռք բերելու միջոց է: Ըստ պատմիչների, քրիստոնեության ձևավորման շրջանում, այդ կրոնի հետևորդներ էին հիմնականում մտավոր թերություններ ունեցողները, աղքատները, աշխատանքից խորշողները, Հռոմի օրենքը մերժողները, հետևաբար այդ համայնքի-կազմակերպության համար ապրուստի միջոցներ ճարելը, հավանաբար, լուրջ խնդիր է եղել: Ինչից կարելի է անել այն ենթադրությունը, որ ունեցվածքը վաճառած խաբվածների գումարները հոսել են քրիստոնեական կազմակերպության դրամարկղը:

Ասածս ինչ-որ չափով հիմնավորելու համար մի քաղվածք բերեմ Աստվածաշնչից (Նոր կտակարանից). *«Մարդ մը՝ Անանիա անունով՝ իր կնոջ Սափիրայի հետ ստացուածք*

*մը ծախեց, անոր գինէն խորեց, մինչ կինն ալ գիտէր որ միայն մէկ մասը բերաւ առաքեալներուն ոտքը դրաւ: Եւ Պետրոս ըսաւ. «Անանիա՛, **ինչո՞ւ Սատանան քու սիրտդ լեցուց, որ դուն Սուրբ Հոգիին սուտ խօսիր ու ագարակին գինէն խորես**: Չէ՞ որ քուկդ էր այն՝ քանի որ կեցեր էր ու ծախուած ալ՝ քու իշխանութեանդ տակ էր. Ինչո՞ւ քու սրտիդ մէջ այն բանը դրիր: Ո՛չ թէ մարդոց սուտ խօսեցար, հապա Աստուծոյ»: Եւ **Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգին տուաւ** եւ մեծ վախ ինկաւ ամենուն վրայ, որոնք ասիկա լսեցին: Ու երիտասարդները ելան ու պատանքով փաթթեցին զանիկա եւ դուրս հանելով թաղեցին: Երեք ժամու չափ անցաւ, երբ կինը չգիտենալով ինչ որ եղեր էր՝ ներս մտաւ: Պետրոս ըսաւ անոր. «**Ըսէ՛ ինծի, ագարակը ա՞յնչափ գինով ծախեցիք**»: Ան ալ ըսաւ. «**Այո՛, այնչափ**»: Պետրոսը ըսաւ անոր. «Այդ ի՞նչ է որ դուք միաբանեցաք Տէրոջը Հոգին փորձելու. **Ահա քու այդդ թաղողներուն ոտքերը դրանը քով են, քեզ ալ դուրս պիտի հանեն»: Եւ իսկոյն կինը անոր ոտքերուն քով ինկաւ ու հոգին տուաւ** եւ երիտասարդները ներս մտնելով՝ զանիկա մեռած գտան ու հանեցին իր էրկանը քով թաղեցին»* (Գործք Առաքելոց 5:1-10):

Նախկինում ձկնորս, իսկ նկարագրված օրերում՝ ստի և, հավանաբար, հոգեմետ գործողությունների, հիպնոսի միջոցով մարդ որսող Պետրոսի կողմից կատարված սպանությունը, անկախ այն բանից, դա իրականություն է եղել թե հորինված, լիովին համապատասխանում է կրոնների ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների այն տեսակետին, որ կրոնական ներշնչմամբ հավատացյալին հեշտությամբ սպանելը տարածված է եղել բազում ժողովուրդների մեջ: Պետրոսը, ինչպես և իրենց գաղափարակիցները, ուրիշների ունեցվածքն ու կյանքը իրենց սեփականությունն են համարել:

Հին կտակարանում հրեաներին հորդորվում-պարտադրվում է գողանալ, կողոպտել, զավթել օտար ժողովուրդների ունեցվածքը, իսկ քրիստոնեություն ընդունած օտար ժողովուրդներին Նոր կտակարանը հորդորում-պարտադրում է ունեցվածքը ուրիշներին հանձնել, իսկ եթե անգամ խլել են, ապա ետ չպահանջել. ինչից կարելի է գալ այն եզրահանգման, որ քրիստոնեությունը հրեաների համար տնտեսական

խնդիրներ է լուծում, ապահովում է նրանց սոցիալ-տնտեսական անվտանգությունը:

Ինչ վերաբերում է *խաչդ վերցրու և հետևիր ինձ* պարտադրանքին, ապա այստեղ խաչը պետք է հասկացվի դագաղ (այսինքն՝ հաշտվել մահվան հետ), իսկ իր խաչը վերցրած և Հիսուս Քրիստոսի ետևից գնացող հավատացյալը գուցե համարձակվի հարցնել, թե՝ սիրելի փրկիչ, դու ո՞ւր ես գնում և դա ի՞նչ ճանապարհ է և այն ո՞ւր է տանում: Սակայն այսպիսի հարց տվող հավատացյալի կյանքը, ինչպես ցույց է տալիս քրիստոնեության անցած ճանապարհը, կընդհատվի հենց հարցը տալու պահին...

Ավետարանիչ Մատթեոսի վկայությամբ Քրիստոսը իր հետևորդներին պարտադրում է, թե ձեր կյանքի համար մի հոգացեք, մի մտածեք, թե ինչ պիտի ուտեք, ինչ պիտի հագնեք, չէ՞ որ *կյանքը* ուտելիքից ու հագուստից կարևոր է և, ընդհանրապես, ապագայի մասին մի՛ մտածեք. աստվածը այս բոլոր խնդիրները ձեր փոխարեն կլուծի: Ահա, թե սիոնիստ հեղինակները սարքովի աստծո անունից ինչ նենգ ու կյանքը կազմալուծող գաղափարներ են լցնում միամիտ մարդկանց գլուխները: Չեմ կարող ինձ զսպել ու չասել, որ սրանք անարգանքի սյունին գամելի դոգմաներ են: Այն միտքը, թե *կյանքը* ուտելիքից ու հագուստից կարևոր է, պետք է հասկացվի, որ Քրիստոսի համար կյանք ասածը միայն անդրշիրիմում մեռելների «վայելելիք» *կյանքն* է: Մի՞թե պարզ չէ, որ նաև աշխատանքից ու ստեղծագործելուց հրաժարվելու ավետարանական դոգմաները նույնպես թշնամանք են կյանքի հանդեպ: Փաստորեն, կյանքը կազմալուծող գաղափարախոսությամբ մարդկանց նենգամտորեն հիմարացնում և շեղում են կյանքի բնականոն ընթացքից: Հայտնի է, որ իր հարստությունը ուրիշներին հանձնող, հարստություն չկուտակող յուրաքանչյուր անհատ-ընտանիք-համայնք դատապարտված է՝ ինքն իր ձեռքով գլխատում է իրեն: Բացարձակորեն նույնը կարելի է ասել պետության մասին: Եթե պետությունն իր հարստությունները՝ ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներն ու օբյեկտները հանձնում է անհատների ու օտար ընկերությունների տնօրինման, դա արդեն պարզորոշ նշանակում է՝ տնտեսության սնանկացում, գիտության, կրթության, մշակույթի անկում, նաև՝ երկրի կառավարման իշխանական լծակների փոշիացում, այսինքն՝ «պետություն»

անվանումը կա, սակայն իրականում այն գոյություն չունի: Կարճ ասած՝ գլխատված պետականություն:

Աշխատանքից խորշելու և հրճվանքով ու հաղթական տրամադրությամբ դեպի մահը գնալու տխուր պատկերն է նկարագրվում «Ոսկե ճյուղը» գրքում. «13-րդ դարում գոյացավ Ազատ ոգու եղբայրների ու քույրերի աղանդը, որի անդամներն այն կարծիքին էին, թե տևական ու ջանադիր հայեցողության միջոցով ամեն մարդ կարող է խորհրդավոր կերպով միանալ աստվածությանը և մի ամբողջություն դառնալ ամենայն գոյի աղբյուրի և նախածնողի հետ, որ նա, ով բարձրացել է մինչև աստված ու ձուլվել նրա երանելի էությանը, իրոք աստվածության մասն է կազմում, այսինքն՝ հանդիսանում է աստծու որդին հենց նույն իմաստով, ինչ որ ինքը՝ Քրիստոսը, և դրա շնորհիվ վայելում է մարդկային ամեն տեսակ կապանքներից և աստվածային օրենքներից միանգամայն զերծ լինելու հաճույքը: Թեև աղանդավորների արտաքին տեսքն ու վարքագիծը նմանվում էր ցնորության, հավատացած լինելով, որ ամեն ինչ թույլատրելի է, նրանք ամենազավեշտական հագուստներով տեղից տեղ էին թափառում, վայրի աղաղակներով հաց խնդրում: Նրանք զայրույթով մերժում էին ամեն մի ազնիվ աշխատանք, այն համարում էին խոչընդոտ աստվածությանը հայելու և հոգու՝ դեպի հոգևոր հայր համբառնալու ճանապարհին: Հավատաքննությունը հաճախ կրճատում էր աստծու հետ միստիկ հաղորդակցման նրանց ճանապարհը, նրանք խարույկների վրա մեռնում էին ոչ միայն անխռով անվրդովությամբ, այլև ուրախության և հրճվանքի հաղթական զգացումով» (Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989 թ., էջ 125):

Ավետարանները քարոզում են, որ Քրիստոսի գալստյան օրը, ի տարբերություն աղքատների, հարուստները տանջալի տառապանքների ու սոսկալի պատիժների են արժանանալու: Հետաքրքիր է, սեփական խելքի ու ջանասիրության շնորհիվ հարստացածների՞ն էլ այդ նույն պատիժն է սպասվում: Ցանկալի է իմանալ, թե այս խնդրում ինչ են մտածում գերհարստացած քրիստոնեական եկեղեցու սպասավորները, որոնք խաբեբայությամբ ու պարտադրանքով կողոպտում են միամիտ մարդկանց: Քրիստոնեությունը փաստորեն թշնամաբար է տրամադրված գիտուն, իմաստուն, աշխատասեր ու բանական մարդկանց, բարեկեցիկ և իրական կյանքի նկատմամբ, սակայն

փառաբանում է պորտաբուծությունը, չքավորությունը, ավուր և ապագայի խնդիրների մասին չմտածելը, մեռյալի «կյանքը»:

Այս կետում շոշափված ավետարանական դոգմաները եթե համադրենք Հին կտակարանից առաջին բաժնում կատարված մեջբերումներին, նորից կտեսնենք վերոհիշյալ՝ **գիշատիչ-զոհ** (տեր-ստրուկ, հարձակվող-նահանջող, գրավող-զիջող, սպանող-սպանվող) հարաբերությունները, որտեղ՝ տիրոջ-հարձակվողի-գրավողի դերը պարգևված է հուդայականներին, իսկ ստրուկի-նահանջողի-զիջողի-զոհի դերը տրվել է քրիստոնյաներին: Փաստորեն, նույն արմատի վրա աճած և նույն նպատակը հետապնդող այդ երկու կրոնների գլխավոր «առաքելությունն» այն է, որ իրենց հետևորդներին պարտադրեն առկա դոգմաները և նրանց հոգեբանորեն հաշտեցնեն Հին ու Նոր կտակարանների պահանջների հետ և ի վերջո, որպեսզի նշված կրոնների հետևորդների միջև կայանա գաղափարական ու բարոյահոգեբանական այնպիսի համերաշխություն ու միակարծիքություն, երբ գիշատիչը համոզված լինի, որ կողոպտելով-գողանալով իր խղճի դեմ ոչ մի վատ բան չի անում, այլ միայն կատարում է աստծո պատգամը, իսկ զոհը կողոպտվելիս համոզված լինի, որ դա կատարվում է աստծո կամոք և երախտապարտ լինի իրեն կողոպտողին, չէ՞ որ, ըստ քրիստոնեական կրոնի, այդպիսի վերաբերմունքը դրախտի ճանապարհ է հարթում:

Այս հատվածում նույնպես քրիստոնյաների համար շահեկան ոչինչ չկա: Սակայն քրիստոնյաները զոհ են ու բավարարված:

6. Ատել ինքն իրեն, ուրանալ սեփական անձը, մահը բարիք համարել, հրաժարվել կյանքից, այս պատվիրանները բարեխղճորեն կատարողները մեռնելուց հետո անդրշիրիմյան աշխարհում կապրեն լիարժեք կյանքով, իսկ իրենց ծնողներին, ամուսիններին, զավակներին, հարազատներին լքողները, ինչպես նաև ունեցվածքից հրաժարվողները մեռնելուց հետո Քրիստոսից կստանան լքած-կորցրածի՝ հարյուրապատիկը՝

*«Այն ատեն Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «**Եթէ մէկը իմ ետեւէս գալ կ՚ուզէ, թող իր անձը ուրանայ եւ իր խաչը վերցնէ ու իմ յետեւէս գայ:** Վասն զի **ով որ կ՚ուզէ իր անձը ապրեցնել պիտի կորսնցնէ զանիկա** ու ով որ*

ինձի համար իր անձը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա» (Մատթ 16:24-25):

«Ով որ ինձի ու աւետարանի համար իր անձը կը կորսցնէ, պիտի ապրեցնէ զանիկա» (Մարկ 8:35):

«Ան որ իր անձը կսիրէ, պիտի կորսնցնէ զանիկա եւ ***ան որ իր անձը այս աշխարհին մէջ կ՛ատէ, յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զանիկա»*** (Հովհ. 12: 25):

«Ամէն ատեն վստահութիւն ունենանք, քանզի գիտենք թէ ***որչափ մարմնի մէջ ենք, Տիրոջմէն հեռու ենք****... Ուստի վստահութիւն ունենանք եւ ալ* ***աւելի ուզենք մարմնէն հեռանալ ու Տէրոջը քով կենալ»*** (Բ Կորնթացիս 5:6-8):

«Մի՛ կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ: Խաղաղութիւն ձգելու չեկայ, հապա՝ սուր: *Վասն զի* ***եկայ տղան իր հօրմէն զատելու,*** *ու* ***աղջիկը՝ իր մօրմէն ու հարսը՝ կեսուրէն: Մարդուն թշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան: Ան որ հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ եւ ան որ տղան կամ աղջիկը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ»*** (Մատթ 10:34-37):

«Պետրոս ըսաւ անոր. «Ահա մենք ամէն բան թողուցինք ու քու ետեւէդ եկանք»: Յիսուս պատասխան տալով ըսաւ՝ «Ճշմարիտ կ՛ըսեմ ձեզի, ***Մէկը չկայ որ թողուց տուն, կամ եղբայրներ, կամ քոյրեր կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր՝ ինձի ու աւետարանին համար, Որ պիտի չառնէ հարիւրապատիկ հիմա՝ այս ատենս տուներ ու եղբայրներ եւ քոյրեր ու մայրեր եւ որդիներ ու արտեր հալածանքներու հետ եւ գալու աշխարհին մէջ՝ յաւիտենական կեանքը»*** (Մարկ 10:28-30):

(Հիսուս)՝ *«Ան որ ինձի* ***կը հավատայ,*** *յաւիտենական կեանք ունի»* (Յովհանու 6:47):

*«Տէ՛ր էր, ի՞նչ պետք է ընեմ, որ փրկուիմ»: Անոնք ալ ըսին. «****Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուիք դուն եւ քու տունդ»*** (Գործք Առաքելոց 16:30-31):

«Ձեր ամեն հոգը անոր (աստծո,- Հ.Ս.) ***վրայ ձգեցէ՛ք, վասն զի անիկա ձեզի համար կը հոգայ»*** (Ա Թուղթ Պետրոսի 5:7):

Այս դոգմաները կարդալիս զարմացած ես մնում, թե հավատացյալները ինչո՞ւ են ասում, որ «Քրիստոսը կյանք է», երբ

Քրիստոսը անկեղծորեն ասում է, որ ինքը իրական աշխարհն իր բոլոր դրսևորումներով չի ճանաչում և այս աշխարհը ճանաչողին ու սիրողին էլ չի ընդունում:

Քրիստոսն իր հետևորդներին քարոզում է, որ ատեն և ուրանան իրենց անձը և հաշտվեն մահվան հետ, և որպես փոխհատուցում՝ խոստանում է անդրշիրիմում նրանց կյանք պարգևել: Ահա թե մարդկանց ինչ նողկալի, զարհուրելի ու գերեզման ուղղորդող գաղափարներ են մատուցվում: Ինչպես տեսնում ենք, սիոնիստ հեղինակները ստեղծել են օտար ժողովուրդների մեջ քայքայում ու մահ սփռող մի աստված և նրա անունից գրում են այն, ինչը համապատասխանում է սիոնիզմի ծրագրին: Սա ընթացքի մեջ դրված ոճրագործություն է, որի դատապարտման ու կասեցման ուղղությամբ որևէ աշխատանք չի կատարվում:

Քրիստոսը իր հետևորդներին անկեղծորեն ասում է, որ նպատակ չունի ընտանիքում խաղաղություն, համերաշխություն ու միասնություն հաստատելու, այլ՝ հակառակը, իր նպատակն է, որ ընտանիքի անդամները միմյանցից մեկուսացված լինեն և միմյանց թշնամաբար վերաբերվեն: Սա ընտանիքը պառակտելու, քայքայելու, փոշիացնելու, հետևաբար և պետությունը ի չիք դարձնելու մի գարշելի ցեց է: Փաստորեն, քրիստոնեությունը հավատացյալին զատում, օտարում է կյանք երաշխավորող միջավայրից և դարձնում թշվառության ու մահվան թիրախ: Սա շատ նման է այն տեսարանին, երբ առյուծները, օրինակ, գոմեշ են որսում: Մի առյուծ հավանական զոհին նախ անջատում, մեկուսացնում է նախիրից և ապա մի քանի առյուծներ նրան տապալում են և ուտում:

Քրիստոսը կտրականապես հրաժարվում է նաև այն հետևորդից, ով իր ծնողներին, զավակներին, հարազատներին ավելի շատ է սիրում, քան իրեն՝ Քրիստոսին: Այս կրոնի համար միայն եբրայեցի Քրիստոսն է, որ արժանի է բարձրագույն սիրո: Այստեղ զարմանալու ոչինչ չկա, եբրայեցի հեղինակները կարողացել են մարդկանց (օտար ժողովուրդներին) համոզել, որ իրենց մեռած արյունակիցը վերակենդանացել ու աստծո կարգավիճակով երկինք է բարձրացել և ամեն հարցում պաշտպանված լինելու համար պետք է հավատալ ու պաշտել նրան:

Այլ հարց է, եթե վերը նշված դոգման ունենար, ասենք, հետևյալ բովանդակությունը, որ Քրիստոսս եկել եմ ընտանիքում թշնամանքն արմատախիլ անելու համար և ով իր զավակներին, ծնողներին, հարազատներին, ազգին, հայրենիքին իր աստծուց պակաս է սիրում, ուրեմն նա մարդ կոչվելու իրավունք չունի: Այս պարագայում մենք արդեն գործ կունենայինք սովորական կրոնի, այլ ոչ թե խափանարար ու մարդակուլ մի ծրագրի հետ, ինչպիսին քրիստոնեությունն է:

Իրական կյանքից շեղելու և ակնհայտ խաբեության ևս մեկ օրինակ: Քրիստոսը խոստանում է, որ ով հանուն իրեն և ավետարանի կհեռանա իր տնից, ծնողներից, ամուսնուց, եղբայրներից, քույրերից, գույքից՝ անդրշիրիմում կստանա դրանց հարյուրապատիկը: Ինչպիսի՛ զառանցանք:

Հետաքրքիր է, քրիստոնյա հավատացյալն ինքն իրեն չի հարցնում, թե Քրիստոսին ինչո՞ւ ձեռնտու չէ, որ մարդը (ոչ հրեան) սիրի իր հարազատներին ու նրանց հետ իր կյանքն անցկացնի և իր ունեցվածքը վայելի կամ, եթե ծնողներից հրաժարվողը մեռյալների աշխարհում հարյուրապատիկը պիտի ստանա, ապա ինչո՞ւ հենց ինքը՝ Հիսուս Քրիստոսը չի ցանկացել հետևել իր իսկ ուսմունքին, որպեսզի անդրշիրիմում հարյուր հայր Եհովա ու նույնքան էլ մայր՝ կույս Մարիամ ունենա: Նաև՝ եթե Քրիստոսը ենթարկվեր իր առաջարկած շուկայի կանոններին, ապա անդրշիրիմում կունենար երեքհարյուր քույր և չորսհարյուր եղբայր (նրա քույրերի անուններն են՝ Մարթա, Եսթեր, Սողոմե, եղբայրներինը՝ Հակոբ, Սիմոն, Հուդա, Հովսեփ):

Եբրայեցի հեղինակները օտար ժողովուրդների ինքնաոչնչացումը դրել են քրիստոնեության հիմքում, որը և դարձել է այդ կրոնի առանցքային շարժիչ ուժը: Ինքնաոչնչացման հետ հաշտեցնելուց բացի, սիոնիստ հեղինակները իրենց իսկ հորինած աստծո անունից հավատացյալներին մոլորեցնելով, հաշտեցնում են նաև իրենց իսկ սպանողների հետ. *«Իրենց ժողովարաններէն դուրս պիտի ձգեն ձեզ ու ժամանակ ալ պիտի գայ, որ ամէն ո՛վ որ ձեզ սպաննէ, այնպէս պիտի սեպէ թե Աստծոյ պաշտամունք կը մատուցանէ»* (Յովհաննու 16:2): Ինչպիսի անկեղծ ու դաժան ցինիզմ:

Այստեղ նպատակահարմար եմ համարում մեջբերել ազգագրագետ Սերինեի «Իմ երկրային ուղին» ինքնակենսագրականից, ուր նկարագրվում են Վանում և

Արճակում կատարված եղելությունները. «Այս Ավետարանը ես մեծ կոտորածի ժամանակ (խոսքը վերաբերում է 1894-96 թթ. կոտորածներին,- Հ.Ս.) թալան եմ բերել՝ Արճակ գյուղի ամենաեզրի տնից: Տան մի կողմը ջաղաց էր, մի կողմը՝ ձիթհան, դիմացը՝ եկեղեցի, մեջը լիքը ժողովուրդ: Դուռն էլ ներսից կողպել էին իրենց վրա: Դուռը ջարդեցինք ու բոլորին կոտորեցինք: Դա անասելի անխիղճ բան էր, ասում է քուրդը, **բայց դեհ, ոչ ոք մեղք չունի դրանում**: **Աստծո կամեցողությունն էր, որ ձեր ազգը մեր ձեռքով պատժվեր**: **Տերն ինքը թող հերիք համարի ու սրանից հետո ո՛չ ձեր ազգին դրա նման պատիժ ուղարկի, ո՛չ էլ մեզ այդպիսի դժոխային աշխատանքի դնի: Դժվար, շատ դժվար բան է անմեղ մանուկներին ոտի տակ տրորելն ու հետո էլ աշխարհի երեսին մտիկ տալը**» (Սերինե, Իմ երկրային ուղին, Երևան, 2005 թ., էջ 88): Սերինեի գրքից բերեմ նաև հետևյալ քաղվածքը. «- Իսկ որ ասում էինք զենք առեք, չէիք հավատում, չէ՞: Տնից յոթ տղամարդ էինք, է՛, յո՛թ տղամարդ և այսօրվա օրը մի հատիկ զենք չունենք: Հավի նման ենք մորթվելու, է՛, հավի նման: - **Օրհնյալնե՛ր, անտրտունջ տանենք հայազնյա մեր խաչը դեպի մեր Գողգոթա լեռը, ինչպես անտրտունջ տարավ Տերը մեր Հիսուս Քրիստոս**: - Հայր ու որդու՞ն, թե՞ պապ ու թոռանն էր ուղղում իր խրատականը ետևից եկող ինչ-որ մեկը: Ետ նայեցի: Ձեռնափայտին հենված, ալեխառն մազ-մորուքով, խիստ գունաթափ փարաջայով մի քահանա էր» (էջ 294):

Ահա և քրիստոնյա ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին բաժին հասած, ավելի ճիշտ, սիոնիստ հեղինակների «նվիրած» ճակատագիրը՝ օրհասի պահին ապավինել Հիսուս Քրիստոսին՝ պատսպարվել եկեղեցում և այնտեղ աղոթելով կիզվել կամ մորթոտվել, իսկ մինչ վերջին շունչ փչելը աղոթել ու շնորհակալություն հայտնել Քրիստոսին, որ հենց իր մատնանշած ճանապարհով է կյանքը ընդհատվում: Նմանատիպ պատմություններ հաճախ եմ լսել իմ մանկության ու պատանեկության տարիներին, երբ բնակչության հիմնական մասը ականատես էր եղել եղեռնին: Պատմողները միշտ էլ ափսոսանքով շեշտում էին զենքի և ամրակուռ բերդերի բացակայության ողբերգական հետևանքների մասին: Դժբախտաբար ոչինչ չփոխվեց: Այսօր մեր իշխանավորների որդեգրած գերակա խնդիրներն են՝ եկեղեցաշինությունը, բնակչության կրոնականացումը, մարդուն կյանք պարգևող

բնական համակարգի ավերումն ու թունավորումը և արտագաղթը:

Քրիստոնեական գաղափարախոսությանը ճշտորեն համահունչ է այն իրավիճակը, երբ զոհը իր պարանոցը ընդառաջ է տանում գիշատչի սրին: Այստեղ թե՛ գիշատիչը, թե՛ զոհը, իրենց պատկերացմամբ, դրախտում իրենց տեղը ապահովելու են, քանզի նրանցից յուրաքանչյուրը, իր դավանած կրոնի դոգմաներին համապատասխան, սրբորեն կատարելու է իր աստծո պատգամը՝ **հուդայականը սպանելու է, իսկ քրիստոնյան՝ հնարավորինս նպաստելու է իր նահատակողին՝ սպանողին**: Ահա և այդ երկու կրոնների հետևորդների հոգեբանական հաշտեցման արդյունքը:

Կենսաբանները նկարագրվածը հեշտությամբ կգտնեն գիտությանը հայտնի՝ ֆերմենտ-սուբստրատ փոխազդեցության մեխանիզմում: Օրինակ, օրգանիզմում շաքարի մոլեկուլը, այսպես ասած, «հոգեբանորեն» նախապատրաստված լինելով, հոժարակամ մոտենում է համապատասխան ֆերմենտի ակտիվ կենտրոնին, որտեղ և կնքում է իր մահկանացուն՝ «սպանվում»-«նահատակվում» է՝ ճեղքվելով գլյուկոզայի և ֆրուկտոզայի: Ֆերմենտին հասնելու ճանապարհին եթե շաքարի մոլեկուլին հարցնեն, թե «ո՞ւր ես շտապում», ապա նա, ըստ օրորոցից ստացած կրոնական դաստիարակության, պետք է որ պատասխանի. «Գնում եմ նահատակվելու», իսկ «Ինչո՞ւ և ի՞նչն է քո երջանիկ, հաղթական ու հպարտ կեցվածքի պատճառը» հարցին, կարծում եմ ամեն մի քրիստոնյային հասկանալի կլինի նրա պատասխանը. «Որպեսզի անդրշիրիմյան աշխարհում դժոխքից փրկվեմ և արժանանամ իմ աստծո արքայությանը, նրա սեղանակիցը լինեմ և հավերժորեն բարեկեցիկ կյանք վայելեմ»: Հնչում է վերջին հարցը. «Ինչո՞ւ չես ցանկանում վայելել քո իրական կյանքը և ի՞նչ հիմնավորմամբ ես հավատում անդրշիրիմյան կյանքի անհիմն ու կործանարար ստին»: Այս հարցն արդեն շաքարի մոլեկուլին պետք է որ հավասարակշռությունից հանի և դժվար չէ պատկերացնել, թե ինչպես նա, արդեն ապակի դարձած աչքերը երկինք հառած, կարծես օգնություն է փնտրում, երկար լռելուց հետո, կաս-կարմիր կտրած նա ճչում է. «Անբարոյակա՜ն, անաստվա՜ծ, սրբապի՜ղծ, դու անպատվում ես նաև իմ նախնիներին, որոնք անվերապահորեն հավատացել են մեր աստծուն և նահատակվելով սրբորեն կատարել են մեր

կրոնի գլխավոր ծեսերը»: Այս հեքիաթը՝ մոլեկուլների միջև տեղի ունեցած զրույցը, այնքանով է իրականությանը մոտ, ինչքանով իրականությանը մոտ են Աստվածաշնչում ներկայացվող առավել ցնդաբանական հեքիաթները, որոնք մեզ են մատուցում որպես անառարկելի ճշմարտություն ու խորիմաստություններ և պարտադրում են, որ խոնարհաբար ընդունենք այդ կործանարար ստերը և դրանցով էլ կառավարվենք: Ինչը և հազարամյակներ շարունակ, սիրով ու խոնարհաբար, ընդունել ու ընդունում ենք:

Մահը երանելի բարիք համարելու խնդրում ուշագրավ, սակայն նողկալի ու զարհուրելի է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» կրոնական, մշակութային, լրատվական պաշտոնաթերթի (2004 թ. մայիս Ա, թիվ 9, 173) «Հայելի Վարուց» հոդվածը, որտեղ կարդում ենք. «Մի փոքրիկ երեխա, իր մորից հաց առնելով, դուրս ելավ և ուտելով այստեղ-այնտեղ էր շրջում, ինչպես այդ տարիքի երեխաների սովորությունն է: Պատահեց, որ այդ մանուկը եկավ մի տեղ, ուր կար Կույս Մարիամ Աստվածածնի պատկերը, որ գրկում ուներ մանուկ Քրիստոս Աստծուն: Նրան նայելով՝ մանուկը երեխայաբար և քաղցրությամբ ասաց մանուկ Քրիստոսին.

-Սիրելի՛, աղաչում եմ, ընդունի՛ր այս, որ հոժարությամբ ընծայում եմ քեզ:

Իսկ այն պատկերը, թեպետև գեղեցիկ էր նկարված, սակայն, որովհետև անզգա էր, ո՛չ հացն էր առնում և ո՛չ պատասխան տալիս: Իսկ մանուկը չէր դադարում աղաչելուց, որ իր հետ հաց ուտի: Եվ երբ երկար ժամանակ անցավ, իսկ նա ստեպ-ստեպ աղաչում էր, - որպեսզի հայտնի լինի, թե Աստծուն ինչպես հաճելի են անմեղների խնդրանքները,- պատկերն Աստծո զորությամբ ձեռքը երկարեց, երեխայից հացն ընդունեց՝ ասելով.

- **Ահա այդ հացը վերցնում եմ քեզանից, ինչպես կամենում ես, բայց երեք օրից այն քեզ հատուցել եմ կամենում**:

Իսկ մանուկը, լսելով այդ պատասխանը, ուրախությամբ տուն դարձավ և նույն ժամին հիվանդացավ: Երբ եկավ երրորդ օրը, Տերն (Եհովան,- Հ.Ս.) **ու Կույս Մարիամի Որդին կանչեց նրան, և մանուկն ավանդեց իր հոգին առ Աստված, որպեսզի առնի հավիտենական կյանքի հացն ու երկնքի արքայության բնակարանը**»:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի պաշտոնաթերթում, ինչպես տեսնում ենք, լավություն անելու փոխհատուցում և

գերագույն բարիք է համարվում նույնիսկ նկարը իրական մարդուց տարբերել չկարողացող մանկան մահը, իրականում՝ սպանությունը: Այս զազրելի սրբապղծությունը համահունչ է քրիստոնեական գործիչ Տերտուլիանոսի գաղափարներին, ով ասել է, թե այս կյանքում մեր սրտին ավելի մոտ բան չկա, քան որքան կարելի է շուտ մեռնելը: Նույն միտքն է արտահայտում նաև քրիստոնեական սուրբ կոչվող Կեպրիանոսը. «**Քրիստոնյայի համար ոչինչ այնքան օգտակար չէ, որքան մոտալուտ մահը**»:

Զարմանալու հարկ չկա, քանզի ավետարանիչը գրում է, որ մարդը ողջ վիճակում աստծուց հեռու է, իսկ մեռնելուց հետո կհայտնվի նրա մոտ (*«Ամէն ատեն վստահութիւն ունենանք, քանզի գիտենք թէ* ***որչափ մարմնի մէջ ենք, Տիրոջմէն հեռու ենք****... Ուստի վստահութիւն ունենանք եւ ալ* ***աւելի ուզենք մարմնէն հեռանալ ու Տէրոջը քով կենալ***»), այսինքն, հեռանալ մարմնից՝ մահանալ:

Ծայրահեղ մարդատյացություն և կյանքի բացարձակ մերժում համարելով Տերտուլիանոսի և Կեպրիանոսի նշված մտքերը, միաժամանակ պետք է գնահատվեն կրոնական այն գործիչները, որոնք իրենց մահաբեր մտքերը չեն քողարկել գեղեցիկ բառերի ու մտավարժանքների թիկունքում, ինչպես դա արված է ավետարաններում: Վերը բերված հոդվածում նույն անկեղծությունն է ցուցաբերում նաև սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը: Միայն նշեմ, որ եթե Տերտուլիանոսն ու Կեպրիանոսը իրենց քարոզչությամբ գերեզման են ուղարկում քրիստոնյա հավատացյալներին, այսինքն՝ չափահաս մարդկանց, ապա Մայր Աթոռի քարոզչությամբ՝ գերեզման է կանչվում նույնիսկ դեռևս գիտակցության չհասած մանուկներին:

Անգամ մանուկների մահվան հետ հաշտեցումը, նույնն է թե՝ մարդկության վերացումը, «շնորհիվ» քրիստոնեական կրոնի, դաջված է հայ կրոնական գործիչների և հավատացյալների մտածելակերպում: Այս առումով նորից որոշ քաղվածքներ բերեմ Սերինեի ինքնակենսագրական գրքից. «Սրտանց ասա՝ **փառք քեզ, Տեր, իմ երեխան մի վարդ էր, դու քաղեցիր Վարդի ծոցով**, - խրատում է սկեսուրս» (էջ 275): «Փաթաթված սկեսրոջս մեծ շալի մեջ, գնում եմ հերանցս թաղը: Գյուղի (Արճակ) զիգզագ փողոցներում ո՛չ հայ է երևում, ո՛չ թուրք: Կատարյալ ամայություն է: Ջանիկ մամիկենց տանից կանացի ձայն է լսվում: Ներս եմ մտնում: Կարապետ աղայի կինը՝ գրկած երեքամյա դստեր

կապտած դիակը, մղկտում է. -**մեր Մայրանուշը արդար էր, լուսավոր օրով գնաց երկինք**,- կրկնում էր Կարապետ աղան» (Սերինե, Իմ երկրային ուղին, Երևան, 2005 թ., էջ 286):

Ի հակադրություն մահը փառաբանող քրիստոնեական կրոնի, ահա թե ինչ է քարոզում հուդայականությունը. *«Ողջ շունը մեռած առիւծէն աղէկ է: Որովհետեւ անոնք որ կ՚ապրին, գիտեն թէ պիտի մեռնին. Բայց մեռելները բան մը չեն գիտեր ու ալ վարձք մը չեն առներ. Վասն զի անոնց յիշատակը մոռցուեցաւ: Թէ՛ անոնց սէրը, թէ՛ ատելութիւնը և թէ՛ նախանձը արդէն կորսուեցան ու* ***անոնք արեւուն տակ եղող բաներէն ա՛լ յաւիտեան բաժին չունին: Գնա հացդ ուրախութեամբ կե՛ր ու գինիդ ուրախ սրտով խմէ՛****, վասն զի Աստուած քու գործերուդ հաւանեցաւ:* ***Հանդերձներդ ամէն ատեն ճերմակ թող ըլլան*** *ու գլխուդ վրայէն իւղը պակաս թող չըլլայ:* ***Քու սիրածդ կնոջդ հետ կեանքը վայլէ Քու ունայն կեանքիդ բոլոր օրերուն մէջ****, որ Աստուած քեզ տուաւ արեւուն տակ, բոլոր ունայն օրերուդ մէջ:* ***Վասն զի այս կեանքին մէջ քու բաժինդ անիկա է արեւուն տակ կատարած աշխատանքդ:*** *Ձեռքդ ինչ որ գտնէ ընելու, բոլոր ուժովդ ըրէ,* ***քանզի գերեզմանիդ մէջ գործ, խորհուրդ, գիտութիւն ու իմաստութիւն չկայ»*** (..Ժողովողի 9:4-10): Կամ՝ ***«Ո՛վ երիտասարդ, քու մանկութեանդ մէջ ուրախ եղիր ու երիտասարդութեանդ օրերուն մէջ սիրտդ թող քեզ զուարճացնէ և քու սրտիդ ճամբաներովը ու աչքերուդ նայուածքով քալէ... Քու սրտէդ տրտմութիւնը վերցո՛ւր»*** (Ժողովողի 11:9-10):

Քրիստոնեական կրոնում մահվան փառաբանումը հայտնի է իր սկզբնավորումից սկսած: Շախնովիչը գրում է, որ «**վաղ շրջանի քրիստոնյաները տոնում էին ոչ թե ծննդյան օրը, ինչպես հիմա, այլ՝ մահվան օրը**» (Մ.Ի. Շախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմ, Երևան, 1979 թ., էջ 139): Այսօր նույնը քարոզում են Եհովայի վկաները, որոնց գործունեությունը մենք մեր կարճատեսության պատճառով, համարում ենք քրիստոնեության դեմ ուղղված խափանարարություն, այն դեպքում, երբ երկուսն էլ՝ թե՛ քրիստոնեական եկեղեցին և՝ թե՛ Եհովայի վկաները ներքին համերաշխությամբ գործող սիոնիստական կառույցներ են, որոնց գործունեությունը ուղղված

է անձի, ընտանիքի և պետության դեմ: Եհովայի վկաներն այլ անվանակոչումներով նույն ավերիչ գործունեությունն են ծավալում նաև այլ դավանանքի երկրներում. պղծում են սրբավայրերը, ծաղրում են հավատքի մատյանները, ամենուրեք ահ ու սարսափ են տարածում՝ Երկրագնդի մոտակա կործանման և անդրշիրիմյան աշխարհում լքված լինելու սպառնալիքներով: Եհովայի վկաների այդպիսի գործելակերպը առավել ջերմեռանդ են դարձնում քրիստոնյա և այլ դավանանքի հավատացյալներին, պետությունները պետական գանձարաններից լրացուցիչ միջոցներ են հատկացնում պաշտոնական եկեղեցու հզորացման համար, միամիտ ու անհեռատես անհատներն իրենց միջոցները ուղղում են եկեղեցաշինության գործին: Արդյունքում ավելանում է կույր հավատացյալների և իբրև իրենց ազգային ավանդույթների պահպանությամբ մտահոգ անհատների թիվը, աղքատանում են պետություններն ու անհատները, իսկ սիոնիզմը գրանցում է իր հերթական հաղթանակն ու առաջընթացը: Եվ սիոնիզմը՝ ուռկանները ձեռքին՝ մեկ ցանցից մեկ ուրիշի մեջ է տեղափոխում իր համար փորձարարական կենդանիներ դարձրած ժողովուրդներին՝ ուղղորդելով նրանց դեպի... մահ: Քրիստոնեական եկեղեցին մշտապես սիոնիզմինն է եղել, իսկ այժմ՝ պետությունների օրենսդրությունը, միջազգային դաշնագրերը, իսկ երբեմն էլ բարձրաստիճան պաշտոնյաները ղեկավարվում են նրա կողմից:

Եթե համատարած գրագիտության և գիտության մեծ նվաճումների պայմաններում տիրում է այս անտրամաբան ու դեպի կործանումը տանող անելանելի իրավիճակը, ապա ամենևին զարմանալու իրավունք չունենք, երբ գրական աղբյուրներից տեղեկանում ենք, որ բազում են կրոնական պարտադրանքով ժողովրդի ոչնչացման փաստերը: Բերեմ դրանցից մի քանիսը. «Գոյություն են ունեցել շատ ժողովուրդներ և մարդիկ, որոնք համառորեն հետևել են այնպիսի սովորույթների, որոնք վերջիվերջո կործանարար են դարձել նրանց համար: Պոլինեզիացիները տարի առ տարի սպանում են իրենց երեխաների երկու երրորդին: Ինչպես վկայում են, նույնքան է նաև Արևելյան Աֆրիկայում սպանվող նորածին երեխաների թիվը: Ողջ են թողնում միայն որոշակի դիրքերով ծնվածներին: Հաղորդում են, որ Անգոլայի յագերի ռազմաշունչ ցեղը իր բոլոր երեխաներին առանց բացառության

ոչնչացնում էր, որպեսզի երթի պայմաններում ծանր բեռ չլինեն կանանց համար: Ցեղը իր շարքերը համալրում էր որդեգրելով ուրիշ ցեղերի 13-14 տարեկան տղաների ու աղջիկների, որոնց ծնողներին սպանում և ուտում էին: **Հարավամերիկյան մբայա ցեղի կանայք սպանում էին բոլոր երեխաներին, բացի վերջինից կամ նրանից, որին համարում էին վերջինը: Եթե դրանից հետո կինը նորից հղիանում էր, նորածինը դատապարտված էր: Հազիվ թե հարկ կար զարմանալու, որ այս սովորույթի հետևանքով ոչնչացավ մբայա ժողովուրդը, որը երկար տարիներ իսպանացիների ամենասարսափելի թշնամին էր:** Լենգուա ցեղի հնդկացիների մոտ (Գրան Չակո) քարոզիչները հայտնաբերել են մանկասպանության, վիժումների և այլ միջոցներով ժողովրդի ինքնասպանության մանրակրկիտ մշակված մի համակարգ: Վայրի ցեղերի համար մանկասպանությունը ինքնասպանության միակ միջոցը չէր: Պակաս արդյունավետ միջոց չէր թունավորումով ինքնաոչնչացման ձևը: Մի որոշ ժամանակ առաջ ուվետների փոքր ցեղը (Արևմտյան Աֆրիկա) իջավ լեռներից և բնակություն հաստատեց Կալաբար գետի ձախ վտակի ափերին: Իրենց առաջին այցելության ժամանակ ցեղի երեք գյուղերում քարոզիչները տեսել էին զգալի քանակությամբ բնիկների: Բայց այդ ժամանակներից ի վեր թույնով փորձության ենթարկելու սովորույթը հանգեցրել է ուվետների գրեթե լրիվ վերացմանը: Մի անգամ, հապացույց իրենց անմեղության, թույն էին ընդունել ցեղի բոլոր անդամները: Դրա հետևանքով ցեղի մոտ կեսը մեռել էր, իսկ մնացած բնիկները թույնի տևական չարաշահման հետևանքով գտնվում էին ոչնչացման եզրին: **Աչքի առաջ ունենալով նման օրինակներ, կարելի է առանց վարանման ենթադրել, որ շատ ցեղեր առանց խղճի խայթի կարող էին հետևել այնպիսի սովորույթի, որի հետևանքը լիներ ամեն մի ընտանիքի մահացումը:** Վայրենուն խղճի խայթ վերագրելը նշանակում է աշխարհի նման հին, տափակ մի սխալ գործել, նրանց նկատմամբ կիրառել քաղաքակիրթ եվրոպացիների չափանիշը: Եթե իմ ընթերցողներից որևէ մեկը, ձեռնամուխ լինելով սույն աշխատության ընթերցմանը, կարծում է, թե բոլոր ռասաներին պատկանող մարդիկ դատում ու գործում են այնպես, ինչպես կրթված անգլիացիները, ապա մեր բերած տվյալները

բավական են այդ կեղծ, կանխակալ կարծիքը փարատելու համար» (Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989 թ., էջ 349):

Այս քաղվածքը, հավանաբար, քրիստոնյաների շրջանում ափսոսանք, խղճմտանք ու արհամարհանք կառաջացնի սնոտիապաշտորեն ինքնաոչնչացում որդեգրած ժողովուրդների նկատմամբ: Սակայն հենց նույն մբայա ժողովուրդը, եթե մինչ ոչնչանալը ծանոթանար քրիստոնեական կրոնի մահաբեր դոգմաներին, ապա արդյո՞ք չէր զարմանա քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում՝ հազարամյակների իրենց մշակույթով և ժամանակակից գիտական նվաճումներով հպարտացող քաղաքակիրթ եվրոպացիների կարճատեսության, թերի տրամաբանության և անճարակության վրա: Կամ արդյո՞ք այդ նույն մբայա ժողովուրդը հեգնանքով ու արհամարհանքով չէր վերաբերվի քաղաքակիրթ եվրոպական երկրների ղեկավարներին, որոնք ժողովրդին հավատարմության երդում տալու ժամանակ՝ ձեռքը դնում են Աստվածաշնչի վրա, որի մեջ ամփոփված է սիոնիստների կողմից աշխարհի ժողովուրդների ստրկացումն ու բնաջնջումը:

Խոնարհվելով մեծանուն գիտնականի առջև, այդուհանդերձ դժվար է համաձայնել նրա արտահայտած այն մտքի հետ, թե «վայրենուն» խղճի խայթ վերագրելը նշանակում է սխալ գործել և նրանց նկատմամբ կիրառել քաղաքակիրթ եվրոպացիների չափանիշը: Հաշվի առնելով թեկուզ վերջին հազարամյակի տխուր պատմությունը, կարելի է ասել, որ «քաղաքակիրթ եվրոպացիներ»-ը իրենց սնոտիապաշտությամբ առանձնապես ետ չեն մնում նշված «վայրենի»-ներից: Նաև՝ այդ նույն «քաղաքակիրթ եվրոպացիները» չէի՞ն, որ սնոտիապաշտությունը՝ քրիստոնեությունը զենք դարձնելով և համակցելով ալկոհոլի ու սիֆիլիսի հետ, քայքայեցին և ոչնչացման եզրին հասցրին, օրինակ, հյուրասեր ու բարեպաշտ գրենլանդիական էսկիմոսներին, այդ նույն «քաղաքակիրթ եվրոպացիները» չէի՞ն, որ մարդակերության դեպքերը հանցագործություն չէին համարում, իսկ իրենց կողմից սպանվածների գանգից սափորներ էին պատրաստում և ջուր կամ գինի ըմպելիս՝ իրենց արածով հպարտանում:

Վերջին քսան տարիներին տարբեր ազգության շատ եվրոպացիների հետ եմ հանդիպել և, եթե խոսվել է կրոնի մասին, ապա ոչ մի անգամ նրանցից չեմ լսել, որ ափսոսանք

հայտնեին իրենց բուն ազգային հավատքի կորստի համար: Այս առումով ուշագրավ է ավստրալական բնիկ Վալպանդուլյայի (քաղաքակիրթ կոչված եվրոպացիների ընկալմամբ՝ վայրենու) վերաբերմունքը իր բուն հավատքի նկատմամբ. «Այո՛, ես հավատում եմ քրիստոնեական կրոնի աստծուն, բայց ես հավատում եմ նաև Մայր Օձին ու Օձ Ծիածանին, իսկ իմ պաշտամունքի կենդանին կենգուրուն է: Սրանք մեզ տվել են այն ամենը, ինչ որ ունենք. ցեղի հողը, սնունդը, ամուսնուն, երեխաներին, մշակույթը... Եվ ոչի՛նչ, ո՛չ մի բան չի կարող այս կարգը փոխել: «Երազատեսության ժամանակներից» սերնդեսերունդ փոխանցված այս ժառանգությունն իմ անքակտելի մասն է: Ինիցացիայի ժամանակ դրանք սուր պողպատով փորագրել-դաջել են իմ մարմնի ու հոգու մեջ... Սրանք փոխանցվում են նոր սերունդներին: Եվ միշտ այդպես կլինի» (Мифы и легенды Австралии, Москва, «Наука», 1976, стр. 57):

Ցավոք, Վալպանդուլյան չի նշել, որ քաղաքակիրթ եվրոպացիները քրիստոնեության, զենքի և այլ միջոցներով են իրենց ոչնչացնում:

Եվրոպացիների կողմից մայաների և հարյուրավոր այլ ժողովուրդների ու նրանց մշակույթի ոչնչացման-բնաջնջման մասին... չխոսենք: Իսկ ինչ վերաբերում է մբայա ժողովրդի ինքնաոչնչացման փաստին, ապա այդտեղ չի կարելի բացառել այն, որ այդ մահաբեր կրոնը հորինվել ու մատուցվել է այդ ցեղի չլինելուն շահագրգիռ ուժի ձեռքով: Կարևորը կրոնական ցեցը մարդկանց ուղեղում մտցնել-դաջելն է, որից հետո, ինչպես ցույց է տալիս կյանքը, ամեն ինչ կանխորոշված է: Մբայա ժողովուրդը կարգապահորեն ենթարկվեց նոր կրոնին և կարճ ժամանակահատվածում ինքնաոչնչացվեց: Քրիստոնյաները չունենալով մբայա ժողովրդի կոլեկտիվ կարգապահությունը՝ դանդաղորեն են ոչնչանում:

Հուդայականությանը վերաբերող նախորդ բաժնում Աստվածաշնչից բերված քաղվածքներից համոզվեցինք, որ Եհովա աստվածը հավատարիմ է միայն հրեական էթնոսին. Եհովան՝ հանուն հրեաների բարգավաճման, աշխարհի մյուս ժողովուրդների մի մասին արդեն ոչնչացրել է, իսկ դեռևս ապրողներին էլ պետք է ոչնչացնի:

Քարոզվում է, որ քրիստոնեությունը հուդայականությանը հակակշիռ կրոն է, այն դեպքում, երբ քրիստոնեությունն ամբողջականացնում է հուդայականությունը: Այսպես, քրիստոնեական կրոնի նպատակն է իր հետևորդներին տանել դեպի ստրկություն և ապա գերեզման, իսկ հրեաների կրոնի՝ հուդայականության նպատակն է աշխարհը հանձնել հրեաներին: Նորից ասեմ, որ Հին և Նոր կտակարաններով քարոզվող կրոնները՝ հուդայականությունը և քրիստոնեությունը իրականում, նույն կրոնն են և ինչպես արդեն ասվել է, այն կարելի է անվանել Ընդհանուր հուդայականություն: Սիոնիստները քրիստոնյա ժողովուրդների ընկալումները նկատի ունենալով կարող են ասել հետևյալը՝ «Ժողովուրդ չունեցող Երկրագունդը՝ Երկրագնդի կարիք ունեցող ժողովրդին», ինչպես ժամանակին, արաբների հողերը զավթելիս, ասում էին. «Ժողովուրդ չունեցող հողերը՝ հող չունեցող ժողովրդին»:

Այս հատվածում բերված ավետարանական դոգմաները համադրելով նախորդ բաժնի՝ հինկտակարանյան որոշ դոգմաներին, նորից ականատես ենք լինում հիշյալ «գիշատիչ-զոհ» հարաբերություններին:

7. Հիսուս Քրիստոսը իր հետևորդներին պարտադրում է՝ չարին չհակառակվել, վրեժխնդիր չլինել, հրաժարվել ինքնապաշտպանությունից, կողոպտվել ու օգնել կողոպտողին, ձեզ սիրողներին մի՛ սիրեք, այլ սիրեք ձեր թշնամիներին և օրհնեք նրանց, ձեզ բարիք անողներին բարիք մի՛ արեք, այլ բարիք արեք ձեզ ատողներին, աղոթեք ձեզ չարչարողների և հալածողների համար, մի՛ դատեք, որպեսզի չդատվեք՝

*«Լսեր էք որ ըսուեցաւ. «Աչքի տեղ՝ աչք ու ակռայի տեղ՝ ակռայ»: **Բայց ես ձեզի կ՛ըսեմ. «Չարին հակառակ մի՛կենար, հապա եթէ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձրու անոր միւսն ալ:** Եթէ մէկը ուզէ քեզի հետ **դատ վարել** ու քու շապիկդ առնել, թող տուր անոր քու վերարկուդ ալ: Լսէր էք որ ըսուեցաւ. «**Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ատես»: Բայց ես ձեզի կ՛ըսեմ. «Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ՛ատեն եւ աղօթք ըրէք անոնց***

համար որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն. Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որդիներն ըլլաք» (Մատթ 5:38-45):

«Եթէ մէկը քու վերարկուդ քեզմէ հանէ, մի՛ արգիլեր անկէ շապիկդ ալ: Ամէն ինչ, որ քեզմէ կ՛ուզէ՝ տուր ու քու բաներդ առնողէն զանոնք մի՛ պահանջեր: Եթե դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ շնորհք կ՛ունենաք. վասն զի մեղաւորներն ալ կը սիրեն զիրենք սիրողները»: *Եթե դուք ձեզի բարիք ընողներուն բարիք ընէք, ի՞նչ շնորհք կ՛ունենաք. վասն զի մեղաւորներն ալ նոյն բանը կ՛ընեն:* ***Այլ սիրեցէք դուք ձեր թշնամիները ու բարիք ըրէք եւ փոխ տուէք առանց փոխարէնը բան մը սպասելու եւ ձեր վարձքը շատ պիտի ըլլայ: ...Մի՛ դատէք ու պիտի չդատուիք»*** (Ղուկաս 6:29-37):

Չարին չհակառակվելու դոգման քրիստոնյաներին մատուցված հերթական մահաբեր հաբերից է: Ինչպե՞ս է հնարավոր ապրել-գոյատևել, առանց չարին ընդդիմանալու: Ընդհակառակը, յուրաքանչյուր մարդ պետք է չարին ոչ միայն հակառակվի, այլև այնպիսի հակահարված տա, որպեսզի չարը իրեն զսպի և ուրիշի արժանապատվության, ունեցվածքի և կյանքի նկատմամբ այլևս ոտնձգություններ չկատարի: Արդյոք կա՞ որևէ կենդանի, որը կենսապայքարում չարին չհակառակվելով կարողանում է ապահովել իր գոյությունը: Հարկավ, բնության մեջ այդպիսի կենդանի գոյություն չունի: Եվ բոլոր այն ժողովուրդները, որոնք կհաշտվեն չարին չհակադրվելու դոգմայի հետ, ուրեմն այդ պահին նրանք հաշտվում են նաև իրենց չլինելու՝ մահվան հետ:

Քրիստոնեական դաստիարակության հետևանքով հեզ, խոնարհ, կամազուրկ դարձած մարդը կկատարի նաև չարին չդիմակայելու պատվիրանը: Իսկ այդպիսի հոգեբանությամբ ժողովրդի նկատմամբ նույնիսկ ամենաեղերականը՝ ցեղասպանություն իրականացնելը, որևէ դժվարություն չի ներկայացնի:

Չարին չհակառակվելու պատվիրանը քրիստոնյա հավատացյալի համար առավել վտանգավոր է դառնում, երբ նա համոզվում է, որ Քրիստոսը վրեժխնդրությունը հրեաների համար թույլատրելի է համարում, իսկ քրիստոնյաների՝ օտար ժողովուրդների համար՝ ոչ (Լսեր էք որ ըսուեցաւ. «Աչքի տեղ՝ աչք ու ակռայի տեղ՝ ակռայ»: Բայց ես ձեզի կ՛ըսեմ. Չարին

հակառակ մի՛ կենար): Բացի սրանից, քրիստոնյաների համար մի կործանարար վիրուս է նաև Քրիստոսի կողմից պարտադրվող՝ չդատելու պատվիրանը (**Մի՛ դատէք ու պիտի չդատուիք)**, որով նա խոստանում է ներել այս պատվիրանին ենթակա հավատացյալների կատարած հանցանքները: Քրիստոնեությունը փաստորեն դրախտային պայմաններ է ստեղծում անիշխանության, անարխիայի և քաոսի համար: Սա իրոք խափանարարություն է, ինչպես ըմբռնել է փիլիսոփա Սպինոզան. «Քրիստոսը չփոխեց Մովսեսի օրենքները, քանզի հասարակության մեջ նոր օրենքներ մտցնելու ցանկություն չուներ և **մտահոգված չէր ուրիշ մեկ այլ բանով, քան հասարակությանը բարոյական չափանիշներ սովորեցնելով և նրանց շեղել պետական օրենքներից**» (Б. Спиноза, Богословско-политический трактат, Москва, 2003, стр. 96):

Եթե մի ծնոտիդ ապտակեն, ապա թույլ տուր, որ մյուս ծնոտին էլ ապտակեն պատվիրանը, հնարավոր է, որ առանձին դեպքերում կիսով չափ կատարվի, այն իմաստով, որ հեզ քրիստոնյան երկրորդ գործողությունը, այսինքն՝ մյուս ծնոտը չկարողանա մատուցել, ասենք այն դեպքում, եթե առաջին հարվածը նրան արդեն այն աշխարհն է ուղարկել: Կարծում եմ, դա կարող է իրականանալ այն պարագայում, եթե հարվածողը լինի հինկտակարանյան դոգմաներով դաստիարակություն ստացած մոլեռանդ հավատացյալ, իսկ նորկտակարանյան մամլիչում հեզացած քրիստոնյա հավատացյալն էլ իր ծնոտը ամենանպաստավոր դիրքադրմամբ մատուցի:

Թշնամիներին սիրելու, անիծողներին օրհնելու, ատողներին բարիք անելու, չարչարողների ու հալածողների համար աղոթելու, հարազատին ատելու Քրիստոսի պատվիրաններում առկա է բացահայտ թշնամանք քրիստոնյա, իմա՝ օտար ժողովուրդների նկատմամբ: Թշնամուն սիրելու պատվիրանի առումով Սպինոզան գրում է, որ ավետարաններում «սիրիր թշնամուդ» դոգման նախկինում եղել է՝ «ատիր թշնամուդ»: Հրեաները այդ փոփոխությունը կատարել են այն ժամանակ, երբ կորցրին իրենց պետականությունը և ցրվեցին աշխարհով մեկ: Այսպիսի գործելակերպը ցույց է տալիս, որ մարդկության նկատմամբ

թշնամաբար տրամադրված, մահվան ճարտարապետ սիոնիստները հարյուրամյակներ շարունակ իրավիճակի տերն են:

Քրիստոնյա հավատացյալները պետք է գիտակցեն, որ արժանապատիվ, իր ունեցվածքը ուրիշներին չհանձնող, իր կյանքի ու ապրուստի մասին հոգ տանող, թշնամուն ատող և նրան չօգնող, հարազատին ու ընկերներին սիրող հավատացյալը Քրիստոսի համար անընդունելի է:

Մեր ձեռքբերովի կարճատեսությունը մեզ թույլ չի տալիս հասկանալ, որ Բիբլիան (Աստվածաշունչը) գրվել է աշխարհին տիրանալու սիոնիստական ծրագիրը լիովին ձևավորված լինելուց հետո, և ինչո՞ւ ենք զարմանում, որ Բիբլիան եբրայեցիներին դարձնում է դաժան, քարսիրտ, նախահարձակ ու ագրեսոր, իսկ քրիստոնյաներին (օտար ժողովուրդներին)՝ հլու հնազանդ ու նահանջող, չարին չհակառակվող, հանցագործին-թշնամուն չդատապարտող:

Այսօր մենք ականատես ենք ուրիշին ծառայելու, հնազանդ լինելու, իրական կյանքը չկարևորելու, ապագայի մասին հոգ չտանելու, մահը բարիք համարելու, չարին չհակառակվելու դոգմաների՝ հայոց կյանքում կատարած ավերիչ աշխատանքին, որի հետևանքով ձեռք ենք բերել կամազրկություն, կրավորական վարքագիծ, ինչպես նաև ստրուկի, սեփական բնաշխարհը, ազգն ու հայրենիքը երկրորդականացնող թափառաշրջիկի հոգեբանություն: Ահա թե ինչու, շարունակաբար մեզ ուղեկցում են նահատակություններ, պետականության և տարածքների կորուստներ: Այն դեպքում, երբ մինչ քրիստոնեական լծի տակ պարտադրաբար մտնելը, հայ մարդը բացարձակորեն այլ կերպար է ունեցել: Օրինակ, աշխարհահռչակ պետական, քաղաքական, ռազմական գործիչ, պատմագիր Հուլիոս Կեսարը (մ.թ.ա. 100-44 թթ.) գրել է. «Երբ այդ մարդիկ, այդ Հայերը, իրենց թմբուկների և ծիրանենի գործիքների ձայնի տակ միմյանց ձեռքն են բռնում և ուս ուսի տված գետինն են դոփդոփում, ավելի շուտ իմ պալատի սյունաշարերը փոշի կդառնան, քան հնարավոր կլինի կասեցնել նրանց» (строки Юлия Цезаря, Глава Армения или Земля Величия):

Կեսարից 12 դար հետո, հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին (1203-1271 թթ.), պետականորեն քրիստոնեացածությամբ մշտապես հպարտացող հայի այլ պատկեր է ներկայացնում. նկարագրելով մոնղոլների արշավանքը Հայաստանում, գրում է. «Լքվում էր արանց արին, աղեղնավորի կորովի ձեռքերը թուլանում էին: Թշնամիների ձայնը հալում էր նրանց: Յուրաքանչյուր աչք իր օրհասը եկած էր տեսնում, և իրենց սրտերը ներսում մեռնում էին: Մանուկները սրի ահից փախչում էին ծնողների մոտ, իսկ ծնողները նրանց հետ վախից ընկնում էին նախքան թշնամիների վար գցելը» (Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982թ., էջ 173): Կարծես Գանձակեցու ասածն է հաստատում հռչակավոր փիլիսոփա Ֆ. Նիցշեն (1844-1900 թթ.)՝ գրելով. «**Քրիստոնեությունը նույնիսկ արիական ցեղի կայուն և ուժեղ հետևորդ հայերին վերածեց ենթակա, խղճուկ և թուլամորթ վիճակի, միանգամից կոտրելով, վերացնելով անսահման մշակութային փառքի և ազնվական փայլի հասած այդ ազգը**»:

Վերը բերված ավետարանական դոգմաները հինկտակարանյան դոգմաների հետ համեմատելով նորից ականատես ենք լինում նույն ողբերգական փաստին՝ հուդայականներին գիշատչի, իսկ քրիստոնյաներին զոհի հոգեբանությամբ դաստիարակելու գաղափարախոսությանը:

8. Հրաժարվել մարմնավոր ցանկություններից, չսիրել իրական աշխարհը, այսինքն՝ կյանքն իր բոլոր դրսևորումներով, իսկ այս աշխարհն ընդունողը աստծո թշնամին է՝

*«Միրե՛լիներ, կ՛աղաչեմ պանդուխտներու եւ օտարականներու պէս **մէկդի՛ կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն**, որոնք հոգիին դէմ կը պատերազմին»* (Ա. թուղթ Պետրոսի 2:11):

*«**Մի՛ սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է**: Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսիդին Հօրը սէրը չկայ. քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է՝ մարմնի*

ցանկութիւնը ու աչքերուն ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ Հօրմէ չէ, հապա այս աշխարհէն է: Աշխարհս էլ կ՛անցնի, անոր ցանկութիւնն ալ. ***բայց ան որ Աստուծոյ կամքը կը կատարէ, յաւիտեան պիտի մնայ»*** (Ա. Թուղթ Յովհաննու 2:15-17):

«Շնա՛ցողներ, չէ՞ք գիտեր թե այս աշխարհին սէրը Աստծոյ դէմ թշնամութիւն է, ուստի ով որ կո՛ւզէ աշխարհին բարեկամ ըլլալ, ինքզինք Աստծոյ թշնամի կ՛ընէ» (Թուղթ Յակոբու 4:4):

Ավետարանիչ Պետրոսը աղաչում է, որ քրիստոնյաները հեռու մնան մարմնավոր ցանկություններից, այսինքն՝ դրանք չիրականացնեն, նույն կարգավիճակ ունեցող Հովհանը սահմանում է, թե մի՛ սիրեք աշխարհը, իսկ աշխարհ սիրողը Եհովային չի կարող սիրել: Մահաշունչ դոգմաներ: Բացահայտ ատելություն ու թշնամանք կյանքի նկատմամբ:

Այս ի՞նչ կրոն-գաղափարախոսություն է, որ կյանքի նկատմամբ սերը համարում է ամբարտավանություն-լկտիություն, մարմնավոր ցանկությունը՝ հոգու դեմ պատերազմող... Եթե այս դոգմաները համեմատենք առաջին բաժնում հրեական-եբրայական կրոնի որոշ դրույթների հետ, ապա կտեսնենք, որ, ի հակադրություն Քրիստոսի, Եհովան կարևորում է իրական աշխարհը և նրա մեջ եղած նյութական արժեքի նկատմամբ սերը և իր հետևորդներին՝ հրեաներին դատարկ խոստումներով չի կերակրում, նա Քրիստոսի պես չի ասում՝ թե մեռեք, որպեսզի մեռնելուց հետո լավ ապրեք: Եհովան իր հետևորդ հրեաներին անդրշիրիմյան աշխարհի դժոխքում տանջանք ու տառապանք կրելու կամ դրախտում բարեկեցիկ ապրելու հեքիաթներից հեռու է պահում: Հրեաներին հողատարածքներ, հարստություններ և երկրային ամեն կարգի բարիք տալու համար նա ջանք չի խնայում՝ այդ նպատակով նաև դիմում է խորամանկությունների, խարդավանքների ու ամենանողկալի կոտորածներ ու նախճիրներ է իրականացնում մյուս ազգերի նկատմամբ: Հասկանալի է, Եհովայի կողմից ֆիզիկական աշխարհի ընդունումն ու մարդու նկատմամբ դրսևորած հոգատարությունը միմիայն վերաբերում է հրեաներին-եբրայեցիներին: Ուրեմն կարելի

է եզրակացնել, որ սիոնական ծրագրում Քրիստոսը լիովին տիրապետում է խնդրին և օտար ժողովուրդների համար աստված է դարձել միայն այն նպատակով, որպեսզի տեղում սաբոտաժ ու դիվերսիա կազմակերպի և այդ ժողովուրդներին տանի այնտեղ, ուր մատնացույց կանի Իսրայելը: Ահա թե քրիստոնյա ժողովուրդներն իրենց ազգային աստվածներին՝ բնապաշտությունը ինչի հետ են փոխարինել: Ավետարաններից պարզ հասկացվում է, որ Քրիստոսի նպատակը աշխարհում եհովայապաշտություն հաստատելն է: Նա փաստորեն կեղծ աստված է ներկայանում, որպեսզի մարդաորսի ճանապարհով մարդկության մեծ զանգված իր ետևից տանի դեպի գերեզման:

Պարզ է, թե ինչ նպատակ է հետապնդում մարմնավոր ցանկություններից հրաժարվելու քարոզչությունը, երբ մարդկային կյանքի գոյությունը պայմանավորված է հենց այդ ցանկությունների իրականացմամբ: Ուրեմն, պետք է ասվի, որ այդ ամբարտավանությունը վերաբերում է կյանքը ժխտող քրիստոնեական ուսմունքին:

Սիոնիստ հեղինակների անպատկառությունը և համարձակությունը սահմաններ չեն ճանաչում: Նրանք կարողացել են իրենց իսկ ստեղծած գաղափարախոսության միջոցով մարդկության զգալի զանգվածին դարձնել ձեռնասուն և նրան մատուցել այն, ինչը համապատասխանում է աշխարհը զավթելու իրենց ծրագրին:

Քրիստոնեական ուսմունքի վտանգավորությունը ակնառու է եղել նաև այդ կրոնի ձևավորման հենց առաջին փուլում: Օրինակ, Տակիտոսը (I-II դ.) արժանի գնահատական է տալիս իր ժամանակի քրիստոնյաներին: Նա գրում է, որ Հռոմի 64 թ. ահռելի հրդեհից հետո լուրեր էին շրջում, որ քաղաքը հրդեհվելու մեղավորը Ներոնն է. «Եվ որպեսզի այդ լուրերը վերացնի, Ներոնը մեղավորներ էր փնտրում և մահվան դատապարտում նրանց, **ովքեր նողկալիության պատճառով իրենց վրա էին բևեռել համընդհանուրի ուշադրությունը**: **Ամբոխը նրանց քրիստոնյաներ է անվանում**: Քրիստոսին, որի անունից առաջացել է այդ անվանումը, Տիբերիոսի օրոք մահապատժի էր ենթարկել Պոնտիոս Պիղատոսը: Ժամանակին ճնշված, **այդ**

կործանարար դատարկապաշտությունը նորից սկսեց դուրս ժայթքել ոչ միայն Հուդայում, **որտեղ այդ չարիքը սկիզբ էր առել**, այլև Հռոմում, ուր ամեն կողմից հոսում ու միանում են ամենազզվելին ու ամոթալին, որտեղ նրանք գտնում են իրենց համախոհներին: Եվ այսպես, սկզբում ձերբակալվեցին նրանք, ովքեր խոստովանում էին այդ աղանդի նկատմամբ իրենց համախոհությունը, իսկ հետո, նրանց ցուցմունքով՝ հսկայական քանակությամբ ուրիշներ, որոնք մերկացվեցին ոչ այնքան եղերական հրդեհի, ինչքան **մարդկային ցեղի նկատմամբ ատելության մեջ**» (Корнелий Тацит, Сочинения (в двух томах), Ленинград, Наука, 1969, том I, стр. 298):

Ուշագրավ է նաև քրիստոնեական ուսմունքի մասին հրեա հոգևորականներից մեկի՝ Տրիփոնի կարծիքը. «Մոտավորապես 2-րդ դարի կեսերին քրիստոնեության ջատագով Հուստինոսը գրել է Տրիփոն անունով հրեա մի ռաբբու և իր միջև երևակայական զրույցը: Այդ զրույցում Տրիփոնը հարձակվում է քրիստոնեության վրա, իսկ Հուստինիոսը պաշտպանում է: Տրիփոնը ասում է. «Իսկ ինչ վերաբերում է Քրիստոսին, եթե Նա ծնվել և գտնվում է որևէ տեղ, ապա Նա անհայտ է ուրիշներին և ո՛չ ինքն իրեն գիտե, ո՛չ էլ որևէ ուժ ունի, մինչև չգա Եղիան, չօգնի և Նրան չհայտարարի բոլորի համար: **Իսկ դուք, քրիստոնյաներդ, սուտ լուրն ընդունել և ինչ-որ Քրիստոս եք երևակայել և նրա սիրուն թեթևամտորեն կործանում եք ձեզ**» (Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ., էջ 167; «Сочинения святого Иустиана философа и мученика», «Разговор с Трифоном Иудеем», М., 1864, стр. 157):

Հին և Նոր կտակարաններից այս կետում բերված քաղվածքների համադրումից նորից ի հայտ են գալիս վերը նշված՝ գիշատիչ-զոհ (տեր-ստրուկ, հարձակվող-նահանջող, գրավող-զիջող, սպանող-սպանվող) հարաբերությունները: Այդ հարաբերություններում հուդայական և քրիստոնյա հավատացյալները հաշտեցվում են իրենց պարտադրվող դերակատարումների հետ: Նշված դերակատարման մեջ հուդայականներին պարտադրվում է՝ խաբեության, գողության, սպանության և այլ միջոցներով սեփականել ուրիշ

ժողովուրդների ունեցվածքը, բարեկեցիկ կյանք վայելել, ոչնչացնել այդ ժողովուրդներին և տիրել ամբողջ աշխարհին, իսկ քրիստոնյաներին՝ հրաժարվել հարստությունից, բնական կրքերից, սերունդ տալու դեպքում՝ ապաշխարել, սեփական կամք չդրսևորել, հրաժարվել աշխատանքից, հարազատներից, համայնքից, կյանքը աստծո դեմ հանցանք համարել, հնարավորինս շուտ՝ հրաժարվել կյանքից:

Ահա թե ինչպիսին է նրբագույնս մշակված հոգեբանական պատերազմի ռազմավարությունը: Հաղթողն էլ, պարտվողն էլ, գործում են աստվածաշնչյան դոգմաներով և աստվածահաճո, այսինքն՝ Եհովային և Քրիստոսին հաճո գործ են կատարում: Այստեղ զարմանալու հարկ չկա, քանզի աշխարհի բնական պաշարները և մյուս հարստությունները աշխարհի ժողովուրդներից խլելու և մի փոքրաթիվ խմբին հանձնելու համար կա թերևս երկու ճանապարհ. կա՛մ այդ չնչին փոքրաթիվը պետք է կոտորի-ոչնչացնի իրենից հազարավոր անգամ հզորին (աշխարհի ժողովուրդներին), կա՛մ էլ մոլորեցնող գաղափարներով կարողանա այդ ժողովուրդներին հիվանդացնելով համոզել, որ իբր աստվածահաճո է ունեցվածքից ու կյանքից ինքնակամ հրաժարվելը: Նրանք գտել են անհավանականն իրականություն դարձնելու թերևս եզակի մեթոդը. իրենց աշխարհակալ ծրագիրը ներկայացրել են որպես կրոն և մատուցել իրենց հավանական զոհերին՝ բազում ժողովուրդներին:

Հրեաները կրոնի օգնությամբ կարողացել են միլիոնավոր մարդկանց օգտագործել որպես լծկան. սեփական ծրագիրը իրականացնելու գործում: Այս խնդրի վրա լույս է սփռում օրերս հրապարակված ստորև հոդվածը. «Ամերիկյան հոգեբանական ասոցիացիան (American Psychological Association, (APA)) հրապարակել է 5-ամյա հետազոտությունների արդյունքները, որոնց համաձայն անմնացորդ հավատքը բարձրագույն ուժերի հանդեպ նվազեցնում է գիտակցական որոշումներ կայացնելու մարդու կարողությունը և պետք է որակվի որպես հոգեկան հիվանդություն: Ինչպես գրում է The News Nerd-ը, փորձագետները եկել են այն եզրակացության, որ կրոնական ապրումները կարող են առաջացնել մարդկանց մոտ տագնապի

զգացում, հուզական սթրես, զգայախաբություններ, հոգեկան խանգարումներ և այլն: Հետազոտությունը ցույց է տվել, որ աստծո ընկալումը՝ որպես վերահսկող և պատժիչ մարմնի՝ ուղղակիորեն կապված է թույլ առողջության հետ, այն դեպքում երբ հատուկ հոգեկան խնդիրների բացակայությունը ենթադրում է նրա հանդեպ վերաբերմունքը՝ որպես դրականի աղբյուրի: Այնուամենայնիվ, գիտնականներն ընդգծում են, որ երկու խմբերի կրոնական հայացքներն էլ հաճախ բերում են իրականության հետ կապի կորստի: Հոգեբանության պրոֆեսոր Լիլիան Էնդրյուսը՝ որպես օրինակ, բերում է Եհովայի վկաներին, որոնք ծանր հիվանդության դեպքում նախընտրում են մահը, քան արյան ներարկումը: «Ամեն տարի հազարավոր մարդիկ են մահանում բուժումից հրաժարվելու պատճառով՝ կրոնական հայացքներից ելնելով: Անգամ երբ ասում են, որ նրանց մահ է սպասվում, այդպիսի հաճախորդները շարունակում են ապավինել աստծուն: Նրանց հնարավոր կլիներ փրկել, եթե համարվեին ինքնուրույն որոշում կայացնելու համար անկարող մարդիկ»,- նշել է Էնդրյուսը: Նա գտնում է, որ շատերը կարծում են, թե շփվում են աստծո հետ հատուկ լեզվով, որն իրենցից և աստծուց բացի ոչ մեկին հայտնի չէ: Շատերը հաճախ ասում են, որ ոգիների են տեսնում: «Այդ ամենը հոգեկան շեղման և իրականության հետ կապի կորստի նշաններ են: Կրոնը և աստծո ցասումի գաղափարը դարերի ընթացքում բերում էին քաոս, ավերածություն, մահ և պատերազմներ: Բայց ժամանակը տեղում չի կանգնում, և ժամանակակից հասարակության մեջ վաղուց արդեն հասունացել է անհրաժեշտությունը որակել այդ արխաիկ հավատալիքները որպես հոգեկան հիվանդություն» (http://mamul.am/am/news/88494/, 2016.07.28):

Հուսանք, որ ամերիկյան հոգեբանական ասոցիացիան քննության առարկա կդարձնի քրիստոնեական կրոնը և մարդկությանը ցույց կտա ժողովուրդներին գերեզման ուղղորդող նրա իրական նպատակը:

Ամփոփելով այս կետում քննվող նյութը, կարելի է ասել, որ քրիստոնեությունն իր հետևորդներին հաշտեցնում է կյանքից

հրաժարվող զոհի կարգավիճակի հետ, ինչը առկա է այս բաժնի նաև նախորդ բոլոր հատվածներում:

9. Ցմահ պահպանել կուսությունը՝

*«Արդ՝ այն բաներուն համար, որ դուք ինծի գրեցիք, **աղէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ**: Բայց **պոռնկութիւնը արգիլելու համար ամէն մարդ թող իր կինը ունենայ ու ամէն կին՝ իր այրը**: Բայց չամուսնացածներուն ու որբեւայրիներուն կ՚ըսեմ. «**Աղեկ է անոնց՝ եթէ ինծի պէս կենան**»: Բայց եթէ ժուժկալութիւն չունին՝ թող ամուսնանան, վասն զի աղէկ է ամուսնանալ, քան թէ կրքով բորբոքիլ: Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ, ո՛չ թէ ես, հապա՝ Տէրը, որ կինը այրէն չզատուի: (Իսկ եթէ զատուի ալ՝ առանց ամուսնանալու մնայ): Բայց կոյսերուն համար Տէրոջմէն հրաման մը չունիմ, միայն թէ Տէրոջը շնորհքով խրատ կուտամ, որ վստահելի է: Ուրեմն ես կը խորհիմ թէ ասիկա աղէկ է հիմակուան նեղութեանը համար, այսինքն՝ աղէկ է մարդուս որ մնայ այնպէս, ինչպես որ է: Կապուա՞ծ ես կնոջ, մի՛ փնտռեր արձակուիլ: Արձակուա՞ծ ես կնոջմէ, կին մի՛ փնտռեր: Բայց ա՛յս կ՚ըսեմ, ե՛ղբայրներ, թէ որոշումի ժամանակը կարճցած է. ալ **անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին**: Բայց ես կ՚ուզեմ որ դուք անհոգ ըլլաք. վասն զի **չամուսնացած մարդը Տէրոջը գործով մտահոգ է, թէ ի՞նչպէս Տէրոջը հաճելի ըլլայ**: Իսկ **ամուսնացածը աշխարհիս բաներով մտահոգ է, թէ ի՞նչպէս իր կնոջ հաճելի ըլլայ**: Եւ ամուսնացած կինը ու կոյսը կը տարբերին իրարմէ. վասն զի **կոյսը Տէրոջը բաներով կը մտահոգուի, որպէս զի ինք սուրբ ըլլայ հոգիով ու մարմնով**, իսկ ամուսնացած կինը՝ աշխարհիս բաներով կը մտահոգուի, թէ ի՞նչպէս իր էրկանը հաճելի ըլլայ: Ան որ իր կոյսը կ՚ամուսնացնէ; աղէկ կ՚ընէ, ու ան որ չամուսնացներ **աւելի աղէկ կ՚ընէ**»* (Ա. Թուղթ Կորնթացիս 7:1-38):

*«Ձեզի կ՚ըսեմ. «Ով որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ՚ընէ: Եւ **ով որ արձակուածը առնէ, շնութիւն կ՚ընէ**»:*

Իր աշակերտները ըսին իրեն. «Եթէ այդպիսի բան կայ էրկան ու կնոջ մէջտեղ, չամուսնանալը աւելի աղէկ է»: Ինքն անոնց ըսաւ. «Ամենուն չի յարմարի ատիկա, հապա անոնց՝ որոնց տրուած է: Վասն զի կան ներքիններ՝ որոնք իրենց մօրը որովայնէն այնպես ծնան եւ կան ներքիններ՝ որոնք մարդոցմէ ներքին եղան եւ կան ***ներքիններ որոնք ինքզինքնին ներքին ըրին երկնքի թագաւորութեանը համար****: Ով որ կրնայ տանիլ՝ թող տանի» (Մատթ 19:9-12):*

«Ով որ կին մարդու կը նայի անոր ցանկալու համար, ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ»: Արդ եթէ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներէդ մէկը կորսուի, բայց քու բոլոր մարմինդ դժոխքը չձգուի» (Մատթ 5:27-29):

«Տեսայ, որ Գառնուկը կայներ էր Սիօն լեռան վրայ ու ***անոր հետ հարիւր քառասունըչորս հազարը, որոնք ունէին անոր անունը եւ անոր Հօրը անունը իրենց ճակատներուն վրայ գրուած****: Եւ նոր երգ մը կ՚երգէին աթոռին ու չորս կենդանիներուն ու երէցներուն առջեւ եւ մէ՚կը չէր կրնար այն երգը սորվիլ բացի այն հարիւր քառասունըչորս հազարէն, որոնք երկրէն գնուած էին:* ***Ասոնք անոնք են որ կիներու հետ չիաղտակուեցան, քանզի կոյս են****: Ասոնք Գառնուկին ետեւէն կ՚երթան՝ ուր որ ան երթայ. ասոնք մարդոց մէջէն գնուեցան Աստծոյ ու Գառնուկին երախայրի ըլլալու: Եւ անոնց բերանը սուտ չգտնուեցաւ, վասն զի անբիծ են»* (Յայտն Յովհաննու 14:1-5):

Ինչպես տեսնում ենք, Պողոս առաքյալը Քրիստոսի անունից քարոզում է, որ տղամարդը կնոջ չմոտենա (աղէկ է մարդուս որ կնոջ չմօտենայ), սա պետք է նաև հասկացվի, որ կինը տղամարդու չմոտենա, սակայն գուշակելով, որ պոռնկությունը կարող է տարածվել, թույլ է տալիս, որ ամուսնանան, ընտանիք կազմեն, սակայն իրենց այնպես պահեն, որ կարծես կին ու ամուսին չունեն (անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին): Այսինքն՝ քրիստոնեությունը ամուսնությունը թույլատրում է ոչ թե մարդկային կյանքի շարունակականությունը ապահովելու, այլ պոռնկության ճանապարհը փակելու համար, նաև պարտադրում է, որ ամուսինները միմյանց նկատմամբ

անտարբեր լինեն: Պետք է ասվի, որ պոռնկությունը կանխելու նրանց մտահոգությունը դժվար ընկալելի է և պարզ չէ, քանզի ավետարաններից հասկացվում է, որ Քրիստոսը, ավետարանիչ-առաքյալները և այդ կրոնի մյուս երևելի դեմքերը հարաբերությունների մեջ են եղել հենց պոռնիկ կանանց հետ և հաճախ, հանրության առաջ, նրանց պաշտպանել են: Պողոսը չամուսնացածներին և որբևայրիներին խորհուրդ է տալիս, որ ընդհանրապես չամուսնանան, իսկ եթե ամուսնացել ու բաժանվել են, ապա այլևս չամուսնանան: Կույսերին խորհուրդ է տալիս, որ մարդը մնա այնպես, ինչպես կա (աղէկ է մարդուս որ մնայ այնպէս, ինչպես որ է), քանի որ միայն չամուսնացածները՝ թե՛ կին, թե՛ տղամարդ հնարավորություն ունեն ամբողջովին նվիրվել աստծուն: Ըստ Մատթեոսի, կամքի ուժով ինքն իրեն կրտելով կույս մնացողին Քրիստոսը խոստանում է դրախտ տանել: Հովհաննու հայտնությունից բերված քաղվածքից հասկացվում է, որ երբ Քրիստոսի հրամանով այրվում, ավերվում, ոչնչացվում է Երկրագունդն ու նրա մերձակա մոլորակներն ու աստղերը, փրկվում են միայն հարյուր քառասունչորս հազար կույս տղամարդիկ, որոնք հանուն այդ նպատակի՝ կանանց չեն մերձեցել: Քրիստոսը նաև քարոզում է, որ համաշխարհային ջրհեղեղով բուսականությունն ու կենդանական աշխարհը ոչնչացնելու որոշումը կայացվել է այն բանից հետո, երբ հայտնի է դարձել, որ մարդիկ «*կ՛ուտէին, կը խմէին, կին կ՛առնէին, էրկան կը տրուէին*» (Ղուկաս 17:27):

Աստվածաշնչից բերված այս քաղվածքների բովանդակությունը արդյո՞ք քրիստոնյա հավատացյալներին չի հուշում ու չի զգոնացնում, որ քրիստոնեական կրոնի գլխավոր նպատակն է՝ արգելել իր հետևորդների սերնդատվությունը, այսինքն՝ ոչնչացնել քրիստոնյա ժողովուրդներին:

Հետաքրքիր է, քրիստոնյա հավատացյալները արդյո՞ք իրենց այգիները կվստահեին այնպիսի մի այգեպանի, որը գաղափարապես մերժում է ծաղիկների փոշոտում-բեղմնավորումը, այսինքն՝ պտուղների-սերմերի առաջացում-ձևավորումը և ամեն կարգի միջոցներով փորձում է խոչընդոտել բնական այդ գործընթացին:

Հայաստանում քրիստոնեությունը պարտադրող (նախ՝ խորամանկությամբ, ապա բռնություններով ու կոտորածով) պարթև Գրիգորի «Կանոններում» (IV դարի սկիզբ) մի քանի

հոդվածներ վերաբերում են կուսության և ամուսնության խնդիրներին. «Բ. Կուսակրոն քահանան եթե կին առնի, թող հինգ տարի դրսում, երկու տարի ներսում ապաշխարի, ապա հաղորդվի», «Ե. Եթե ամուսիններից մեկը երկակ (երկրորդ անգամ է ամուսնանում,- Հ.Ս.) է, մյուսը՝ կույս, թող երկու տարի դրսում, մի տարի ներսում ապաշխարեն», «Զ. Եթե մեկը թողնի երկրորդ կնոջը և առաջին թողնվածին վերադառնա, թող 8 տարի ապաշխարի», «ԺԳ. **Ով կուսություն խոստացավ Աստծուն** և պոռնկություն արավ, թող յոթ տարի ապաշխարի», «Լ. **Կույսը**, **մենակյացը** (մոնոզոն, մոնազն) **թե իրեն Աստծուն է նվիրում, չհամարձակվի ամուսնանալ**, իսկ ամուսնացողը թող հաղորդությունից մերժվի, նրանց ընդունելությունը թող կախված լինի եպիսկոպոսի մարդասիրությունից» (Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, մ.թ.ա. IX դ- մ.թ. XIX դ, Երևան, 2001, էջ 95-98):

Նշածս կանոններից պարզորոշ հասկացվում է, որ Գրիգորը քրիստոնեությունը Հայաստանում հաստատելուց անմիջապես հետո ամլությունը քարոզող կանոններ է ստեղծել, ինչը լիովին համապատասխանում է իր ուսուցչի՝ Ղևոնդի հորդորին՝ թե «անձամբ առաջնորդելով հոտդ՝ կարողանաս բանավոր փարախը դեպի վերին Սիոնը փոխադրել» (Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 23): Եվ միայն պետք է պատկերացնել Հայաստան նոր մուտք գործած խափանարարի անպատկառությունն ու համարձակությունը՝ կարգադրել է, որ կուսությունը Քրիստոսին խոստացածները **չհամարձակվեն ամուսնանալ**: Այդ մեծագույն չարագործի կատարած կրոնափոխությունից ու ցեղասպանությունից հարյուրամյակներ հետո Գրիգոր Նարեկացին (X դար) գրել է, թե **երանի այն ժողովրդին՝ որ իր Աստծուն է պաշտում, ինչից կարելի է ենթադրել, որ նա** ակնհայտորեն իր կսկիծն է արտահայտել, որ հայ ժողովուրդը քրիստոնեությամբ է կառավարվում: Իսկ Նիցշեն (XIX դար) գրել է, որ **քրիստոնեությունը նույնիսկ արիական ցեղի կայուն և ուժեղ հետևորդ հայերին վերածեց ենթակա, խղճուկ և թուլամորթ վիճակի, միանգամից կոտրելով, վերացնելով անսահման մշակութային փառքի և ազնվական փայլի հասած այդ ազգը (ցեղը):**

Այստեղ քննարկվող խնդրի առումով ուշագրավ է 11-12-րդ դարերում Անգլիայում տիրող իրավիճակին վերաբերող

ստորև քաղվածքը. «Տամպլիերներն իրենցից ներկայացնում էին վանական կուսակրոն կազմակերպություն, իսկ այն ժամանակներում **կուսակրոնությունը սովորական հոգևորականությունից անհամեմատ բարձր և աստծուն մոտ կանգնած էր համարվում**... **Կուսակրոնությունը ծնունդ է առել վաղ քրիստոնեական շրջանում որպես անհատական ճգնավորություն**: Մարդը ունայն կյանքը թողնելով որոնում էր մի ճանապարհ, որը, համաձայն քրիստոնեական ուսմունքի, համապատասխանում էր Տիրոջ կամքին: Նա թողնում էր իր տունը, հարազատներին, բարեկամներին և խուսափում էր նրանց հետ ամեն կարգի շփումներից և ապրում էր ամբողջովին մենակության մեջ: Այդպիսի ճգնավորի գլխավոր նպատակն էր՝ մարել մարմնական բոլոր ցանկությունները և ընդդիմանալ գայթակղություններին: Եպիսկոպոս Աֆանասիի կենսագրականում բերվում է 3-րդ դարում կուսակրոն կյանք վարող սբ. Անտոնիի ճգնավորության օրինակը: **Ապրելով Եգիպտոսի շոգ կլիմայի պայմաններում, նա ամբողջ կյանքում կաշվե անճոռնի հագուստ էր կրում, իսկ դրա տակ՝ կոշտ մազազգեստ, երբեք չէր լողանում** և ամբողջովին հյուծված վիճակում՝ պաս էր պահում: **Սակայն նրան ամենասարսափելի տառապանքները պատճառում էին** ոչ թե երկրային՝ աշխարհիկ բարիքներից զրկված լինելը, այլ՝ **սեռական բուռն կիրքը**: Նրա խոսքերով, նրան փորձող սատանան նրան երևում էր գայթակղող կանանց տեսքով՝ դրանով այնպիսի տառապանքներ էին մատուցում, որ Անտոնին գայթակղություններին չդիմանալով բարձրաձայն ճչում էր: Մեղսական ցանկությունները իրենից հեռացնելու համար նա հնարել էր ինքնախարազանման բազմապիսի եղանակներ: Մեղքի դեմ պայքարի այդ հալումաշ անող պայքարը Անտոնիին սրբի փառք բերեցին, և ուխտավորներն ամբոխներով նրա մոտ էին գնում խորհուրդների և օրհնվելու համար: **Տամպլիերների կյանքում առաջին պատվիրաններն էին՝ կուսությունը**, աղքատությունը և հնազանդությունը: **Կուսությունը վերաբերում էր երկու սեռին էլ**: Տամպլիերը չպետք է համբուրեր կամ դիպչեր որևէ կնոջ՝ լիներ դա նրա հարազատ մայրը կամ քույրը: Չէր թույլատրվում և խստիվ արգելվում էր կնոջ հետ նույնիսկ խոսելը: **Տամպլիերը հագնում էր կաշվե անդրավարտիք, որը երբեք չէր հանվում**: Կանոնադրությունը տամպլերներին արգելում էր լողանալ կամ լոգանք ընդունել,

իսկ **ցմահ անդրավարտիք կրելը դիտարկվում էր որպես ամեն կարգի սեռական կապերից զսպվածության պայման**» (Д. Робинсон, Масонство, Забытые тайны, Москва, 2000, стр. 107-112):

Փաստորեն արվում է ամեն ինչ, որպեսզի ընդհատվի մարդկային կյանքը: Ահա թե ինչպիսին է քրիստոնեական կրոնի վերաբերմունքը իր իսկ հետևորդների նկատմամբ: Ուշագրավ է Նարեկացու աղերսանքն առ Քրիստոս. «Կորցրո՛ւ ապական ցանկութիւնները զազիր կրքերիս» (Գ. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, Գասպրինտ, 2015, էջ 191):

Սերնդատվության նկատմամբ քրիստոնեական եկեղեցու անհանդուրժողականության առումով բերեմ հետևյալ մեջբերումը. «Վախտով-ժամանակով կ՚ելնի մի տերտեր: Էտա (այդ) տերտեր ի ունի քառասուն լաճ (որդի): Անապատանավերով մեկ վարդապետմ կուգա տերտերոջ տուն հյուր: Երեկոյան վարդապետ կնստի սեղան հաց ուտելու: Այդ ժամանակ դռնեն մարդմ՝ ներս կմտնե, հայր սուրբին աջն առնելով՝ կնստի: Վարդապետ կհարցնի տերտերոջ կ՚ասի, էս մարդն ո՞վ է: Տերտեր կ՚ասի. Ծառա եմ, ծառատ իմ որդին է: Այսպես քառասուն որդիներ կուգան հայր սուրբին աջն առնելով սեղանին չորս բոլոր կնստին, և ամենին համար կ՚ասի վարդապետին, թե՝ «Ծառատ քո որդին է, ծառատ քո որդին է»: **Նվիրակ վարդապետը զարմացած կմնա, տեսնելով, որ մեկ կրոնավորին քառասուն հատ լաճ կա. մեծ շնություն (անբարոյականություն) կսեպե (համարել) և, տերտերի հացն հարամ (անարժան) համարելով, կելնե տունեն, կհեռանա**: Տերտերն ի, կինի (կընկնի) վարդապետի ետևեն կկանչե: Բայց վարդապետը անեննին չուզեր ո՛չ ետև նայել և ոչ շնացյալ քահանայի հետ խոսել: Վարդապետը կուգա կխասնի գյոլի մոտ: Էտա գյոլի մեջն էլ խազար-խազար գորտեր կկռան: Ձեն չի խասնի վարդապետի ականջ: Տերտեր ի, կդառնա գորտերաց կ՚ասի. Այ օրհնածներ, ձեներդ կտրեք, ես նվիրակ հայր սուրբին բանմ պիտի ասեմ: Էն գյախ ինի (հենց նույն ժամին) էտա զըմեն (բոլոր) գորտեր ձեները կկտրեն: Վարդապետը կդառնա իտև (ետև) կիրիշկա (կնայի), որ տերտերը իրեն կկանչի, գորտերն էլ ձեները կտրեր ին, լուռ ու մունջ: Տերտերը կխասնի վարդապետին կասի. Հայր սուրբ, ինչի՞ կնացիր իմ տնեն, իմ խացն ինչի՞ խարամ արիր. ես քառասուն տարի ի, որ կարգվեր իմ, ամա տարին մեկ անգամ իմ տիրուհու մոտ պառկեր իմ, աստված

տարին մեկ տղա տվեր ի ինձ: Վարդապետ-նվիրակ կտեսնի, որ իր պիղծ կարծված տերտերն իրմե (իրանից) ավելի սուրբ է, մանավանդ որ ինոր (նրա) հրամանով գյոլի գորտերը ձեները կտրեցին... մեղա կուգա են տերտերոջ և կդառնա ետ, նոր կնստի տերտերոջ հաց կուտի» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969 թ., էջ 84-85): Բանահյուսության այս նմուշում կուսակրոն հոգևորականի զայրույթը, տերտերին անբարոյական անվանելը գալիս է նրանից, որ տերտերը չի կատարել Քրիստոսի պատվիրաններից մեկը՝ ***անոնք որ կին ունին՝ այնպէս ըլլան որպէս թէ չունին:*** Ի վերջո, նա տերտերի հետ ճաշում է, սակայն այն բանից ետո, երբ տեղեկանում է, որ տերտերը տարին միայն մեկ անգամ է իր կնոջ անկողին մտնում:

Կուսություն քարոզող մահաշունչ ուսմունքի մասին իր արժեքավոր խոսքն է ասում հռչակավոր գիտնական Ջեյմս Ֆրեզերը. «Արևելյան կրոնների տարածման հետ, որոնք այն միտքն էին ներշնչում, թե կյանքի միակ արժանի նպատակը աստծո հետ միանալը և անձնական փրկությունն է, իսկ պետության բարօրությունն ու նույնիսկ նրա բուն գոյությունը դրանց համեմատությամբ ոչինչչարժեն, իրադրությունը կտրուկ փոխվեց: **Այդ եսամոլական ու բարոյազուրկ ուսմունքը ընդունելու անխուսափելի հետևանքը եղան հավատացյալների հարաճուն նահանջը հասարակությանը ծառայելուց**, անձնական, հոգևոր ապրումների վրա սևեռվելը և արհամարհանքի երևան գալը շրջապատող կյանքի նկատմամբ, որի մեջ նրանք սկսում են տեսնել ոչ ավելին, քան հավիտենական կյանքին նախորդող ժամանակավոր փորձություն: **Ժողովրդի պատկերացմամբ մարդու բարձրագույն իդեալը դարձավ երկրային ամեն ինչի նկատմամբ լիակատար արհամարհանքով համակված** և կրոնական հայեցողության մեջ հափշտակության աստիճանի խորասուզված սուրբ ճգնավորը. **այդ կատարելատիպը եկավ փոխարինելու ինքնամոռաց հայրենասեր հերոսի հին կատարելատիպին, որը պատրաստ էր կյանքը զոհաբերել հանուն իր հայրենիքի բարօրության**: Մարդկանց, **որոնց հայացքը ուղղված էր աստծու երկնային արքայությանը, երկրային կյանքը սկսեց թվալ աննշան ու խղճուկ**: Այսպես ասած ծանրության կենտրոնը ներկա կյանքից փոխադրվեց գալիք կյանքը, և ինչքան այս փոխադրումից շահեց մի աշխարհը,

մյուսը նույնքան էլ տուժեց: **Սկսվեց հասարակության համընդհանուր տրոհումը, պետական ու ընտանեկան կապերը թուլացան, հասարակության կառուցվածքը սկսեց մասնատվել բաղկացուցիչ հատվածների**, հասարակության վրա վերստին կախվեց բարբարոսության սպառնալիքը: Չէ՞ որ քաղաքակրթությունը հնարավոր է միայն քաղաքացիների ակտիվ աջակցության, իրենց մասնավոր շահերը ընդհանուրի բարօրությանը ենթարկելու պատրաստակամության դեպքում: **Այնինչ մարդիկ հրաժարվում են պաշտպանել իրենց հայրենիքը և նույնիսկ շարունակել իրենց սերունդը**» (Ջեյմս Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989 թ., էջ 420-421): Սույն աշխատության 426 էջում հեղինակը նաև գրում է, թե չպետք է մոռանալ, որ աղքատություն ու կուսակրոնություն փառաբանելով՝ հատում են ոչ միայն քաղաքացիական հասարակության, այլև հենց բուն մարդկության գոյության արմատները:

Պարզվում է, որ կուսությունը փառաբանող, տղամարդու և կնոջ մերձեցումը՝ սերունդ տալը մեղք, պոռնկությունը չարիք համարող Նոր կտակարանի հեղինակները, իրենք իրենց քրիստոնյա չեն համարել, հետևաբար և իրենց կենցաղը չեն համապատասխանեցրել քրիստոնեության պահանջներին ու պարտադրանքներին: Օրինակ, Պողոս առաքյալը գրում է. *«Չէ՞ որ ես առաքյալ եմ, չէ՞ որ **ես ազատ եմ**, չէ՞ որ մեր Տեր Յիսուս Քրիստոսը աչքովս տեսայ... Իմ պատասխանս անոնց որ զիս կը քննեն, այս է. «Միթէ մենք իրաւունք չունի՞նք ուտելու եւ խմելու: **Միթէ մենք իրաւունք չունի՞նք Քրիստոսով քոյր եղող կին մը մեզ հետ պտըտցնելու**, ինչպէս միւս առաքեալներն ու Տէրոջը եղբայրները ու Կեփաս կ՛ընեն: ... Ո՞վ այգի կը տընկէ ու անոր պտուղէն չուտե, կամ ո՞վ ոչխարներ կ՛արածէ ու ոչխարներուն կաթէն չուտեր... Չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կ՛ըսէ: Քանզի Մովսէսին օրէնքին մէջ ալ գրուած է. «Կալին մէջ աշխատող եզին դունչը մի՛ կապեր»: ... **Եթէ մենք ձեզի հոգեւոր բաներ սերմանեցինք, մե՞ծ բան է՝ եթէ ձեզմէ մարմնաւոր բաներ հնձենք**: ... Չէ՞ք գիտեր թէ տաճարին մէջ աշխատողները տաճարէն կ՛ուտեն ու անոնք որ սեղանին պաշտօնեաներն են՝ սեղանէն բաժին կ՛առնեն: Նոյնպէս ալ **Տէրը հրաման տրաւ**, որ*

աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին» (Ա Կորնթացիս 9:1-14)

Ուտելու և ջուր խմելու իրավունք ունենալուց բացի, Պողոսը պահանջում է, որ իրեն և մյուս քարոզիչներին չկշտամբեն՝ իրենց հետ քրիստոնյա մկրտված կանանց պտտեցնելու համար, ինչպես դա անում են Քրիստոսի եղբայրները (Հակոբ, Սիմոն, Հուդա, Հովսեփ) և առաքյալ Պետրոսը (Կեփաս): Քրիստոնյաների կամքի, բնատուր պահանջների ու ցանկությունների վրա կողպեք դնողը, իրական կյանքից տպավորիչ օրինակներ բերելով, հավատացյալներին համոզում է, որ մեծ բան չէ, երբ քրիստոնեություն քարոզելու դիմաց ձեզանից մարմնավոր բաներ ենք հնձում: Այսինքն՝ քրիստոնեություն քարոզողների համար ձրիակերությունը և անբարոյականությունը թույլատրելի ու օրինական է համարում:

Ինչպես տեսանք, Նոր կտակարանի հեղինակները՝ հրեաները, քրիստոնեական կրոնի առանցքում դրել են կուսությունը, իսկ ամուսնանալիս էլ, ամուսնուն կորցնելու դեպքում՝ չամուսնանալը: Սակայն հրեաները իրենց կրոնում՝ Հին կտակարանում բացարձակորեն հակադիր մոտեցում են ցուցաբերել. *«Եթէ մէկը կին մը առնէ ու ամուսնանայ եւ անոր վրայ անարգութեան բան մը գտնելուն համար անիկա իր աչքին հաճոյ չըլլայ, այն ատեն անոր արձակման թուղթ մը թող գրէ ու անոր ձեռքը տայ եւ իր տունէն ճամբէ: Երբ կինը անոր տունէն ելլելով երթայ ուրիշի մը հետ ամուսնանայ»* (Բ Օրինաց 24:1-2): Կամ. *«Երբ եղբայրներ մէկտեղ բնակին ու անոնցմէ մէկը առանց զաւակի մեռնի, մեռնողին կինը դուրսը օտար մարդու հետ թող չկարգուի, այլ տագրը անոր հետ թող ամուսնանայ ու տագրութեան պարտաւորութիւնը անոր հատուցանէ: Անոր ծնած անդրանիկ տղան թող մեռնող եղբօրը անունովը կոչուի, որ անոր անունը Իսրայէլէն չջնջուի: Եթէ այն մարդը իր հարսը առնել չուզէ այն ատեն հարսը թող դիմէ ծերերուն ու ըսէ. «Իմ տագրոս Իսրայէլի մէջ իր եղբօրը անունը հաստատելէն կը հրաժարի՝ տագրութեան պարտաւորութիւնը ինծի հատուցանել չուզեր»: Այն ատեն անոր քաղաքին ծերերը զանիկա թող կանչեն ու անոր խօսին եւ եթէ անիկա հաստատ կենալով ըսէ՝ «Ասիկա չեմ ուզեր առնել», այն ատեն հարսը անոր*

թող մօտենայ ծերերուն առջեւ եւ անոր ոտքէն կոշիկը հանէ ու անոր երեսը թքնէ եւ ըսէ. «Իր եղբօրը տունը շինել չուզող մարդուն այսպէս պէտք է ըլլայ»: Անոր անունը՝ Իսրայէլի մէջ՝ «Կօշիկ հանուած մարդուն տունը» թող կոչուի» (Բ Օրինաց 25:5-10): *«Քու Տէր Աստուածդ ալ քեզ պիտի շատցնէ եւ քու որովայնիդ պտուղը, քու երկրիդ պտուղը... ձեր մէջ եւ ձեր անասուններուն մէջ, թէ՛ արուներէն և թէ՛ էգերէն, ամուլ պիտի չգտնուի»* (Բ. Օրինաց 7:13-14):

Հրեական կրոնում կուսության ցմահ պահպանումը հանցագործություն է համարվում, օրինակ, Թալմուդում ասվում է, որ սերնդատվության կորստի տարիքին հասած և կուսությունը պահպանած կինը պետք է սպանվի, որպեսզի հրեա մայրացուների համար վատ օրինակ չծառայի:

Քրիստոնեությունը կուսություն է քարոզում միայն իրական կյանքում, քանզի ըստ այդ կրոնի՝ կույս մահացած աղջիկները հարսնանալու են երկնային փեսային՝ Հիսուս Քրիստոսին: Հետաքրքիր է, սիոնիստ հեղինակները ինչո՞ւ չեն աստվածացնում և երկինք բարձրացնում հրեա որևէ օրիորդի կամ բազմազավակ կույս տիկնոջ՝ եբրայուհու, իրենց ոճով ասած՝ որպես երկնային հարսնացուի, որպեսզի նա հարսնանա իրական կյանքից կույս հեռացած քրիստոնյա տղամարդկանց: Այս առումով ուշագրավ է հետևյալը. *«Երկնքի թագավորութիւնը կը նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները առնելով՝ փեսային դիմաւորելու ելան: Անոնցմէ հինգը իմաստուն էին իսկ հինգը՝ յիմար: Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ իւղ չառին: Սակայն իմաստունները իրենց լապտերներուն հետ ամաններով իւղ ալ առին: Երբ փեսան (այստեղ պետք է հասկանալ՝ Հիսուս Քրիստոսը,- Հ.Ս.) ուշացաւ, ամենքն ալ թմրեցան ու քնացան: Կէս գիշերին ձայն մը եղաւ. «Ահա փեսան կու գայ. զանիկա դիմաւորելու ելէք»: Այն ատեն բոլոր կոյսերը ելան ու իրենց լապտերները շտկեցին: Յիմարները ըսին իմաստուններուն. «Տուէք մեզի ձեր իւղէն, վասն զի մեր լապտերները մարելու վրայ են»: Պատասխան տուին իմաստունները ու ըսին. «Չըլլայ թէ մեզի ու ձեզի չբաւականանայ, այլ ծախողներուն գացէք եւ գնեցէք ձեզի համար»: Երբ անոնք գացին գնելու, փեսան եկաւ*

ու պատրաստ եղողները անոր հետ հարսանիքը մտան եւ դուռը գոցուեցաւ: Եւոքը միւս կոյսերը եկան ու ըսին. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզի՛: Բայց անիկա պատասխան տուաւ ու ըսաւ. «Ճշմարիտ կ՛ըսեմ ձեզի. Ես ձեզ չեմ ճանչնար»: Ուրեմն արթուն կեցէք, վասն զի ո՛չ օրը գիտէք եւ ո՛չ ժամը» (Մատթ 25:1-13):

Շուրջ 1700 տարի հարատեւող քրիստոնյա ժողովուրդները, իրենց գոյությամբ ցույց են տալիս, որ հավատացյալները բնակչության փոքրամասնությունն է, սրա հետ մեկտեղ, նրանց ճնշող մեծամասնությունը, բարեբախտաբար, միայն ձևացրել ու ձևացնում է, որ ապրում է քրիստոնեական դավանանքի կանոններով: Եթե քրիստոնեական կրոնի լծի տակ մտած ժողովուրդների խոսքն ու գործը միմյանց համապատասխանեին, ապա առանց վարանելու կարելի է ասել, որ կարճ ժամանակահատվածում նրանք լիովին կվերանային:

10. Վախ, տագնապ, սարսափ՝

*«**Տէրոջը օրը գիշերվա գողի պէս պիտի գայ**, ան ատեն երկինք սաստիկ շառաչիւնով պիտի անցնի... **երկիրն ալ ու ինչ որ անոր մէջ կը գտնուի, պիտի այրուին**»* (Բ Թուղթ Պետրոսի 3:10):

*«Եօթը ոսկեղէն աշտարակներուն միջեւ՝ մէկը Որդի Մարդոյ նման՝ պճնաւոր պատմուճան մը հագած ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կապած: Իր գլուխը եւ մազերը բուրդի ու ձիւնի պէս ճերմակ էին եւ իր **աչքերը՝ կրակի բոցի պէս**: Իր ոտքերը՝ ոսկեպղնձի նման, որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած ու իր ձայնը՝ շատ ջուրերու ձայնի պէս եւ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղ ուներ ու **իր բերնէն սրած երկբերան սուր մը կ՛ելլէր** եւ իր երեսը արեւու պէս էր... իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ ու ըսաւ ինծի... Ես ա՛ն եմ որ մեռայ եւ ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից եւ **ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները**»* (Յայտն Յովհաննու 1:13-18):

*«Երբ Գառնուկը կնիքներէն մէկը՝ քակեց... ուրիշ ձի մը ելաւ շառագոյն ու անոր վրայ հեծնողին իշխանութիւն տրուեցաւ, որ **երկրէն խաղաղութիւնը վերացնէ, որպէս զի իրար սպաննեն**... Տէսայ դեղին ձի մը: Անոր վրայ*

հեծնողին անունը ***Մահ էր և Դժոխքը անոր ետեւէն կ՚երթար*** *ու անոնց իշխանութիւն տրուեցաւ երկրին չորրորդ մասին վրայ, որ* ***սրով ու սովով եւ մահով ու երկրի գազաններով սատկեցնեն...*** *Երբ վեցերորդ կնիքը քակեց, մեծ երկրաշարժ մը եղաւ,* ***արեւը սեւացաւ*** *մազեղէն քուրձի մը պէս,* ***լուսինը բոլորովին արիւնի պէս եղաւ,*** *ու* ***երկնքի աստղերը գետինը թափվեցան****... բոլոր* ***լեռները եւ կղզիները իրենց տեղերէն շարժեցան****: Երկրին թագաւորները եւ մեծամեծերն ու հարուստները եւ զորաւորներն ու բոլոր ծառաներն ու բոլոր ազատները քարայրներու եւ լեռներու ապառաժներուն մէջ պահուտեցան: Եւ լեռներուն ու ապառաժներուն կ՚ըսէին. «Մեր վրա՛յ ինկէք ու մեզ ծածկեցէ՛ք անոր երեսէն՝ որ աթոռին վրայ կը նստի ու* ***Գառնուկին բարկութենէն: Վասն զի անոր բարկութեանը մեծ օրը եկաւ եւ ո՞վ կրնայ դիմանալ****»* (Յայտն Յովհաննու 6:1-17):

«Երկնքէն աստղ մը ինկաւ երկրի վրայ... Ծուխէն մարախներ կ՚ելլէին երկրի վրայ: ***Անոնց զօրութիւն տրուեցաւ երկրի կարիճներուն ունեցած զօրութեանը պէս****: Անոնց ըսուեցաւ, որ չվնասեն երկրի խոտին...* ***հապա միայն ա՛յն մարդկանց, որոնք իրենց ճակատներուն վրայ Աստծոյ կնիքը չունին****: Անոնց հրաման տրուեցաւ, որ* ***չսպանեն զանոնք, հապա չարչարեն զանոնք*** *հինգ ամիս ու անոնց տուած չարչարանքը կարիճի տուած չարչարանքին պէս էր՝ երբ մարդը կը խայթէ: Այն օրերը մարդիկ մահը պիտի փնտռեն ու պիտի չգտնեն: Պիտի ուզեն մեռնել, բայց մահը անոնցմէ պիտի փախչի... ձիերը ու անոնց վրայ հեծնողները՝ որոնք ունէին հրեղէն ու յակնթեղէն ու ծծմբեղէն զրահներ: Ձիերուն գլուխները առիւծներու գլուխներու պէս էին. անոնց բերնէն կրակ ու ծուխ եւ ծծումբ կ՚ելլէր: Այս երեք հարուածներէն մարդոց երրորդ մասը մեռաւ»* (Յայտն Յովհաննու 9:1-18):

«Ուրիշ զօրաւոր հրեշտակ մը, որ երկնքէն կ՚իջնէր: Ամպ հագած էր եւ իր գլխուն վրայ ծիածան կար: Իր երեսը արեւի պէս էր եւ իր ոտքերը՝ կրակի սիւներու պէս... Իր աջ ոտքը ծովուն վրայ դրաւ եւ ձախը՝ ցամաքին վրայ: Եւ մեծ ձայնով աղաղակեց առյուծի մը մռնչիւնի պէս» (Յայտն Յովհաննու 10:1-3):

«Տաճարեն մեծ ձայն մը լսեցի, որ եօթը հրեշտակներուն կ՚ըսեր. «Գացէ՛ք, Աստուծոյ բարկութեան սկուառակները երկրի վրայ թափեցէք»: Առաջին հրեշտակը գնաց ու իր սկուառակը երկրի վրայ թափեց ու չարաչար պալարներ ելան այն մարդկանց վրայ, որոնք գազանին դրոշմը ունէին... Երկրորդ հրեշտակը իր սկուառակը ծովուն վրայ թափեց ու ջուրերը մեռած մարդու արիւն դարձան եւ ծովուն մէջի բոլոր կենդանիները մեռան... Չորրորդ հրեշտակը իր սկուառակը արեւին վրայ թափեց: Անոր զօրութիւն տրուեցաւ որ խորշակահար ընէ մարդիկը կրակով... Հինգերորդ հրեշտակը իր սկուառակը գազանին աթոռին վրայ թափեց ու անոր թագաւորութիւնը խաւարեցաւ: Մարդիկ ցաւէն լեզուներին կը ծամէին... Վեցերորդ հրեշտակը իր սկուառակը մեծ գետին՝ Եփրատին վրայ թափեց ու անոր ջուրերը ցամաքեցան, որպէս զի արեւելքի թագաւորներուն ճամբան պատրաստու» (Յայտն Յովհաննու 16:1-12):

*«Երանելի են անոնք, որ Գառնուկին հարսանիքին ընթրիքին կանչուած են... Տեսայ երկինքը բացուած եւ ճերմակ ձի մը: Անոր վրայ հեծնողը Հաւատարիմ ու Ճշմարիտ կը կոչուի: Արդարութեամբ դատաստան կը տեսնէ ու կը պատերազմէ: Անոր աչքերը կրակի բոցի պէս էին... Արիւնով ներկուած հանդերձ մը հագեր էր... Երկնքի մէջ եղող զօրքերը անոր ետեւէն կ՚երթային ճերմակ ձիերով... **Անոր բերնէն սրած սուր մը կ՚ելլէր, որպէս զի անով ազգերը զարնէ...** Եվ հրեշտակ մը ալ տեսայ, որ արեւին մէջ կայներ էր ու մեծ ձայնով աղաղակեց երկնքի մէջ թռչող բոլոր թռչուններուն՝ ըսելով. «**Եկէք, մեր Աստծոյ մեծ ընթրիքին՝** հաւաքուեցէ՛ք **որպէսզի ուտէք թագաւորներուն մարմինները ու հազարապետներուն մարմինները ու ձիերուն եւ անոնց վրայ հեծնողներուն մարմինները ու ամենուն մարմինները, թէ՛ ծառաներուն եւ թէ՛ մեծերուն»*** (Յայտն Յովհաննու 19:9-18):

Աստվածաշնչում հուդայականներին (հրեաներին) և քրիստոնյաներին պարտադրված վախի ու սարսափի դրդապատճառները միմյանցից տրամագծորեն տարբերվում են և բացարձակորեն տարբեր շարժառիթներ ունեն: Այսպես, հրեաների Եհովա աստվածը հրեաներին վախեցնում ու

սարսափի է մատնում. որ եթե նրանք իրենից բացի այլ աստվածների պաշտեն, օտար ժողովուրդներին չոչնչացնեն ու չտիրանան նրանց հարստություններին, անընդհատ չմեծացնեն հրեաների թվաքանակը, չապրեն լիարժեք ու բարեկեցիկ կյանքով կամ, եթե հրեաները միմյանց շահագործեն ու չօգնեն կարիքավոր հրեաներին, ապա ինքը՝ Եհովա աստվածը հրեաներին ամենադաժան պատիժների կենթարկի, նույնիսկ՝ կոչնչացնի նրանց: Եհովան իր հետևորդներին՝ Իսրայելին նաև ասում է. «**Քու անունիդ վախն ու սոսկումը բոլոր երկնքի տակ եղող ազգերուն վրայ պիտի դնեմ, այնպես որ քու համբաւդ լսողները քու երեսէդ պիտի դողան ու տագնապին**» (Բ Օրինաց 2:25): Այն դեպքում, երբ քրիստոնյաների աստված Հիսուս Քրիստոսը, իր հետևորդներին ահ ու սարսափի մեջ պահելով՝ սպառնում է, որ դուք մեռնելուց հետո դժոխքում հավերժորեն կչարչարվեք ու կտառապեք, եթե կարևորեք իրական աշխարհը, սեփական անձը կամ հարստություն կուտակեք, ունեցվածքը ուրիշներին չտաք, ատեք թշնամուն, հեզորեն չծառայեք ուրիշներին, բարեկեցիկ ու լիարժեք կյանքով ապրեք, ուրախանաք, առանց մեղքի զգացողության բազմանաք: Այստեղ զարմանալու բան չկա, քանզի նշված երկու կրոնն էլ ստեղծել են հրեաները, վստահորեն կարելի է ասել՝ նույն կազմակերպության շրջանակներում և, բնականաբար, կյանք երաշխավորող կրոնը իրենց, իսկ նահանջ, քայքայում ու մահ քարոզող-պարտադրող կրոնը՝ օտար ժողովուրդների համար:

Իսկ թե սարսափը ինչ ազդեցություն է գործում մարդու վրա, բոլորին է հայտնի, օրինակ, հոգեբանական պատերազմում սարսափը եղել ու կա որպես գլխավոր զենք: Ահա թե սարսափի մասին ինչ է ասում Հայոց թագաժառանգ Տիգրանը (Տիգրան Երվանդյանը Հայոց թագավորության գահը ժառանգել իր հորից՝ Երվանդ Ա Սակավակյացուց և թագավորել է մ.թ.ա. 560-525-ին), պարսիկների թագավոր Կիրոսի հետ զրույցում.

-«**Բայց ինչ՞ը կարող է մարդուն ավելի շատ խեղել-շշմեցնել, քան զորեղ սարսափը**: Կիրոս, միթե՞ դու չգիտես, որ պատժի ամենաուժեղ միջոցով՝ սրից վերք ստացած մարդիկ, չնայած ահավոր ցավերի, վառվում են այն ցանկությամբ, որպեսզի նորից կռվեն իրենց թշնամիների հետ, այն ժամանակ, երբ իրենց հակառակորդներից մեծ սարսափ ունեցողները չեն

համարձակվում անգամ նրանց աչքերին նայել, նույնիսկ երբ նրանց քաջալերում են:

-Տիգրան, դու հաստատո՞ւմ ես, որ **մահապատժից առաջ սարսափը մարդկանց վրա ավելի ուժեղ է ազդում, քան ինքը՝ մահապատիժը**:

-Կիր, չէ՞ որ քեզ հայտնի է, որ այն ժամանակ, երբ անհրաժեշտ է, որ մարդիկ մարտնչեն, արտաքսման կամ պարտության երկյուղից նրանք միշտ իրենց փոքրոգի (թուլակամ) են պահում: Նրանք, ովքեր վախենում են ստրկության մեջ կամ բանտ ընկնել և այդ սարսափից չեն կարողանում ո՛չ ուտել, ո՛չ խմել, հակառակը, դառնալով աքսորյալ կամ պարտություն կրելով, և նույնիսկ՝ ստրկության մեջ ընկնելով, նրանք կարող են հանգիստ ուտել և քնել, ընդ որում, ավելի շատ՝ քան ազատ կյանքում: Թե սարսափը մարդկանց ինչքան ուժեղ է շշմեցնում (ճնշում), այդ առանձնապես պարզ կարելի է տեսնել հետևյալից: **Լինում է, երբ վախենալով, որ իրենց գերի կվերցնեն և կսպանեն, մարդիկ այդ սարսափից կանխավ իրենց մեռցնում են. իրենց գցում են անդունդները, մյուսները կախվում են, ոմանք խողխողվում-մորթոտվում են**: Այնպես որ, **սարսափը հոգուն ավելի ուժեղ է շշմեցնում-ճնշում, քան մյուս դժբախտությունները**» (Ксенофонт, Киропедия, Москва, «Наука», 1976, էջ 62-63):

Հռչակավոր փիլիսոփա Պլատոնի (մ.թ.ա. 427-347 թթ.) երևակայական կիրճի բնակիչների կենսակերպը նկարագրող «Քարանձավի խորհրդանիշ» (Платон, Собрание сочинений, Москва том 3, стр. 297) աշխատությունում ցույց է տալիս, թե ինչ կործանարար հետևանք ունեն վախն ու սարսափը, երբ դրանք մարդուն մատուցում են, մանավանդ նրա մանկության տարիներից (Հավելված):

Փիլիսոփա Սպինոզան սարսափի մասին գրում է, որ միապետական իշխանության բարձրագույն գաղտնիքը և նրա բարձրագույն շահը նրանում է, որպեսզի մարդկանց պահի խաբեության մեջ, իսկ սարսափը, որի մեջ նրանք պետք է զսպված պահվեն՝ սքողել կրոնի անվամբ: Սարսափն այն պատճառն է, որի շնորհիվ սնոտիապաշտությունը առաջանում, պաշտպանվում ու պահպանվում է: Ամբոխի վրա ոչ մի բան այնքան լավ չի իշխում, քան սնահավատությունը: Ամբոխին ազատել սնոտիապաշտությունից անհնար է, ինչպես և անհնար է նրան ազատել սարսափից: Ամեն տեսակ դատարկապաշտություն

բոլորից շատ հաղորդակից է լինում (փոխանցվում է) այն անձանց, որոնք չափից ավելին են ցանկանում ինչ-որ կասկածելին և աստվածային օգնության են դիմում միայն այն ժամանակ, երբ նրանք վտանգի մեջ են և չգիտեն ինչպես իրենք իրենց օգնեն: Այդ ժամանակ նրանք երդում են տալիս, կանացի արցունքներ են թափում, բանականությունը կույր, իսկ մարդկային իմաստությունը դատարկություն են անվանում և, ընդհակառակը, երևակայության զառանցանքը-ցնորքը, երազները, մանկական անմտությունը նրանք աստվածային հրահանգ են համարում: Սնոտիապաշտությունը, ինչպես և հոգու քմահաճությունն ու խելագարության նոպաները տարատեսակ են լինում և ոչ կայուն: Վերջապես, այն կենսունակ է միայն հույսով, ատելությամբ, զայրույթով և խորամանկությամբ, քանի որ այն ծնվում է ոչ թե բանականությունից, այլ՝ միայն հուսահատության նոպայից, ընդ որում՝ ամենաուժեղ նոպայից: Հավատքը այժմ դարձել է ոչ այլ ինչ, քան նախապաշարմունք, այն էլ այնպիսի նախապաշարմունք, որը մարդուն բանական էակից դարձնում է անասուն, քանի որ յուրաքանչյուրին բացարձակորեն արգելում է օգտվել իր սեփական դատողություններից և իրականը ստից տարբերելուց, և այս ամենը կարծես մտածացին է, որպեսզի վերջնականապես մարվի բանականության լույսը (Спиноза, Богословско-политический трактат, Москва, 2003, стр. 4-9):

Հայտնի է, որ պատերազմների և այլ արհավիրքների ժամանակ վախն ու սարսափն ինչքան էլ որ մարդու վրա մեծ ներգործություն ունենան, միևնույն է՝ ժամանակի ընթացքում կմարեն, կվերանան, սակայն կրոնի միջոցով մատուցած վախն ու սարսափը դառնում են համարյա անշրջելի և մշտապես ուղեկցում են մարդուն ամբողջ կյանքի ընթացքում: Բացի կրոնից, դժվար թե գտնվի մեկ այլ միջոց, որի օգնությամբ հնարավոր լինի սարսափը խորությամբ ու հիմնարար դաջել մարդու մտածելակերպում՝ անգամ ենթագիտակցության մակարդակում: Պատահական չէ, որ ամբողջովին սարսափով են հագեցած Հին ու Նոր կտակարանները և դրանց մեջ վախ է քարոզվում, օրինակ, «**Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է**» (Առակաց 1:7):

Քրիստոնեական եկեղեցին՝ սիոնիզմի ծրագրի իրականացման ամենագլխավոր կառույցը, նրբին ու համակարգված կարողանում է վախն ու սարսափը ներարկել մարդկանց

մեջ, և դա արվել ու արվում է ստի ու խաբեության միջոցով: Դժբախտաբար, եկեղեցին այստեղ մեծ հաջողություններ է գրանցել, որին հասնում է ամենագարշելի միջոցներով ու մեթոդներով: Հավատացյալներին սպառնում են դժոխքով, իսկ բանական մարդկանց՝ հասարակությունից օտարումով, բանտերով, խարույկով, ոտքերի ջիլերի հատումով...

Դարեր շարունակ քայքայում ու կործանում քարոզող եկեղեցու սպասավորները մշտապես փայլել են սուտը ճշմարտություն ներկայացնելու գործում, իսկ անպատժելիությունը նրանց երբեմն դարձրել է անկեղծ անպատկառ: Այս առումով ուշագրավ է, թե իր «Ինկվիզիցիա» գրքում ինչ է գրում Գրիգուլևիչը. «**Ովքե՞ր են եղել ինկվիզիցիայի ղեկավարները**. «պարտականության զոհե՞ր», եկեղեցուն ենթադրյալ կամ իրական թշնամիներից պաշտպանելու համար, ամենահրեշավոր հանցագործություններ կատարելու պատրաստ մոլեռանդ մարդի՞կ էին, **թե՞ իրենց ղեկավարության պատվերը կատարող եկեղեցական անհոգի ոստիկաններ**: Ովքե՞ր էին զոհերը: Ո՞ւմը և ի՞նչի համար էր հետապնդում ինկվիզիցիան: Այս բոլոր հարցերին պատասխանում է «սրբազան» արտակարգ դատարանի պատմաբանը: Սրանից երկու հարյուր տարի առաջ իսպանական ինկվիզիտոր Նիկոլաս Էյմերիկի (XIV դարի երկրորդ կես) «ձեռնարկի» հրատարակիչը բացահայտելով «սրբազան» արտակարգ դատարանի մեթոդները, գրում է. «Հավանաբար կգտնվեն ազնիվ մարդիկ և զգայուն հոգիներ, որոնք մեզ կնախատեն այն բանի համար, որ մենք հրապարակել ենք նախկինում գրված զարհուրելի պատկերներ: Նրանք կհարցնեն, թե ի՞նչ օգուտ կամ ի՞նչ հաճույք կարելի է ստանալ այն բանից, որ ծանոթանում ենք այդպիսի գարշելի գործերի հետ: Որպեսզի մեզնից հեռացնենք նրանց նախատինքը, մեզ բավարար է պատասխանել՝ **հենց նրա համար, որ այդ պատկերները գարշելի են: Մեզ անհրաժեշտ է այդ նկարները մարդկանց ցուցադրել, որպեսզի դրանք սարսափ առաջացնեն**» (И.Р. Григулевич, Инквизиция, Москва, 1985, էջ 7):

Ամեն առիթով ասվում է, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին իր մարդասիրությամբ իբր տարբերվել է քրիստոնեական աշխարհի այլ ժողովուրդների եկեղեցիներից, և օրինակ է բերվում, որ մարդկանց խարույկի վրա կիզող ինկվիզիցիան Հայաստանում չի գործել: Սակայն հարց է

ծագում, թե արդյոք ավելի մարդասիրական չէ՞ մարդուն այրելով վերացնելը, քան ոտքերի ու ձեռքերի ջիլերը կտրելը, ճակատին աղվեսադրոշմ դնելը և բորոտանոցում պահել-մեռցնելը: Պարթև Գրիգորի Հայաստան ներխուժելուց ավելի քան տասնյոթ դար է անցել, սակայն այսօր էլ եկեղեցու ծիսակատարության մասնակից նույնիսկ ոչ դատարկապաշտը՝ բանական մարդը, «շունչը պահած» ու խոնարհ լսում է քարոզի մեջ ասվող բացարձակ սուտն ու անհեթեթությունը և չի համարձակվում որևէ կերպ արտահայտել իր անհամաձայնությունը: Եվ դա, կարծում եմ, այն պատճառով, որ եկեղեցու պատժի ու աններում վերաբերումի սարսափն արդեն ամրագրված է մեր ենթագիտակցության մեջ: Հայաստանում առավել խիստ են եղել նախկին հավատքի հետևորդների պատիժները: Օրինակ, Շահապիվանի համաժողովում (444 թ.) մծղնեության դեմ ընդունված կանոններում ասվում է. «Եթե մեկը մծղնեության (արևապաշտություն, միհրականություն,- Հ.Ս.) մեջ գտնվի՝ լինի դա երեց, սարկավագ կամ աբեղաներից. պիտի հոգևոր կոչումներից կարգալույծ լինի, պիտի աղվեսադրոշմ դրվի ճակատին և տարվի ճգնավորների մոտ ապաշխարության: Իսկ եթե կրկին նա գտնվի մծղնեության մեջ, **նրա երկու ջիլերը պիտի կտրել և ուրկանոց տանել**, քանի որ «**Մարդը պատվի մեջ էր և չհասկացավ**»: Այդ նույն պատիժը վերաբերում է նաև աբեղաներին: Իսկ եթե տղամարդն իր կնոջ և որդիներով գտնվի այդ աղանդի մեջ, տղամարդկանց, կանանց **և գիտակցության հասած <u>մանուկների</u> ջիլերը պետք է կտրել**, աղվեսադրոշմ դնել ճակատներին **և տանել գոդենոց՝ ապաշխարության համար**: Իսկ **այն մանուկները, որոնք դեռ չեն գիտակցում պղծությունը, նրանք պետք է վերցվեն և տրվեն Աստծու սուրբ պաշտոնյաների ձեռքը, որպեսզի կերակրեն և սովորեցնեն նրանց ճշմարիտ հավատը և Տիրոջ երկյուղը**» (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981 թ., հատոր 1, էջ 594): Կարծում եմ, ջիլերը կտրելուց ու բորոտանոց տանելուց պակաս պատիժ չէ մանուկներին խեղելը՝ սովորեցնել, այսպես կոչված, «ճշմարիտ հավատը և Տիրոջ երկյուղը», այսինքն՝ մարդուն զրկել իրական կյանքը ճանաչելու և իրական կյանքով ապրելու բնության պարգևած վայելքից: Այդ երկյուղը այսօր մանուկներին ներարկվում է Հայաստանի Հանրապետության նաև պետական կոչված դպրոցներում:

Ինչպես տեսանք, ինկվիզիտորի «ձեռնարկի» հրատարակիչը, եկեղեցու կողմից մարդկանց տառապանքներ մատուցելու զարհուրելի պատկերները նորից հրապարակելը հիմնավորում է այն բանով, որպեսզի դրանք մարդկանց մեջ սարսափ առաջացնեն: Կարծում եմ, Հովհաննեսի հայտնությունը (Յոյտնութիւն Յովհաննու) Նոր կտակարանի վերջում տեղադրելը հենց նույն նպատակն է հետապնդում, որպեսզի ավետարանների ընթերցումը ավարտած հավատացյալի մոտ առավել դաջվի այն նողկալի ահն ու սարսափը, ինչը ներկայացված է մահաբեր այս վիրուսում՝ Հայտնության մեջ:

Ավետարաններում Հիսուս Քրիստոսի կերպարում առանձնապես մեծ սարսափ առաջացնող համարյա ոչինչ չկա: Ըստ ավետարանների, նա ծնվել է ոչ հարուստ ընտանիքում (երբեմն ապրել է ուրիշների կանանց «աշխատանքի» հաշվին), եղել է անհամարձակ, համեստ (Երուսաղեմ է մտել ընդամենը էշին հեծած, երբ իր, այսպես ասած, կարգավիճակում կարող էր թամբել հրեղեն ձի կամ աշխարհի ամենահզոր առյուծը), երբեմն ծեծվել է, ի վերջո արժանացել է անարգ մահվան՝ խաչվել է, ասվում է նաև, որ նրան սպանել են քարկոծելով: Սակայն Հայտնությունում (ճիշտ է, սա ներկայացվում է որպես տեսիլք, սակայն ավետարաններում նկարագրվածները տեսիլքից ինչո՞վ են տարբերվում, չէ՞ որ դրանց մեջ նույնպես ճիշտը բացակայում է) ասպարեզ է բերվում ավետարաններում նկարագրված Հիսուս Քրիստոսի հետ ընդհանրություն չունեցող մեկ այլ հրեա: Նա այստեղ արդեն իր ֆիզիկական ուժով ու կարողություններով գերբնական զորության տեր է: Իբր՝ ոտքերը որպես հնոցի մեջ կրակ դարձած ոսկեպղնձի նման, դեմքը որպես արև, աչքերը կրակի բոցի պես, ձայնը՝ հորդառատ գետերի շառաչ, բերանի մեջ՝ երկբերան սուր... Պակաս սարսափազդու չեն նաև Քրիստոսի կամակատարները՝ առյուծի մռնչյունով աղաղակող, ամպ հագած, գլխի վրա ծիածան ունեցող, մի ոտը ծովի մեջ, մյուսը՝ ցամաքին դրած հրեշտակը... Մորեխներին խայթիչ ու թույն պարգևելով, Քրիստոսը կարգադրում է, որ նրանք մարդկանց միանգամից չսպանեն, այլ հինգ ամիս շարունակ տառապանք պատճառեն, որից հետո միայն նրանց մի մասին կսպանեն առյուծի գլխով, երախներից ծուխ, կրակ ու ծծումբ արտանետող ձիերը, իսկ մահվան վերջին խոսքն արդեն կասի սպիտակ ձի հեծած, հանդերձը արյունով ներկած, կրակ սփռող աչքերով,

բերանում սուր ունեցող Գառնուկը, այսինքն՝ բարության խորհրդանիշ ու փրկիչ ներկայացվող Հիսուս Քրիստոսը: Նա իր հարսանիքի՝ ժողովուրդների ոչնչացման օրը թռչունների կեր է դարձնում թագավորներին, իշխաններին և ընդհանրապես բոլոր այն ժողովուրդներին, որոնք քրիստոնեական կրոն չեն ընդունել, այսինքն՝ հրաժարվում են աշխարհը հրեաներին հանձնելու սիոնիստական ծրագրի իրականացմանը մասնակից լինելուց:

Հայտնությունից վերը բերված քաղվածքներին որոշ բացատրություններ տալու փոխարեն, նպատակահարմար եմ համարում որոշ հատվածներ մեջբերել հռչակավոր գիտնական Ֆրիդրիխ Նիցշեի ստեղծագործությունից, ինչը առավել հասկանալի կդարձնի նշված քաղվածքների բովանդակությունը և, ընդհանրապես, քրիստոնեական կրոնի իրական նպատակը. «Մեղքի պատճառականությունը, ինքնաքննադատությունը, խղճի ինկվիզիցիան այստեղ գործարկվում են որպես զբաղմունք, որպես թախիծի դեմ միջոցի. այստեղ աղոթքների միջոցով մշտապես պահպանվում է ջերմեռանդությունը «Աստված» կոչված հզորագույն գոյի նկատմամբ: **Այստեղ մարմինը արհամարհվում է, հիգիենան որպես ցանկասիրություն՝ մերժվում է**: **Եկեղեցին զզվում է նույնիսկ մաքրասիրությունից**: **Քրիստոնեությունը,** հայտնի իմաստով, **դաժանություն է իր և ուրիշների հանդեպ**, ատելություն է այլախոհության նկատմամբ: **Այն հետապնդման ազատություն է**: **Այստեղ պատվավոր տեղում են մռայլ և հուզիչ պատկերացումները:** Այն վիճակը, որը շահախնդրորեն հետամտվում և բարձր անուններով է նշանավորվում՝ դա ընկնավորության վիճակն է: **Դիետան հարմարեցված է այն բանին, որպեսզի հովանավորվեն հիվանդագին երևույթները և նյարդերը ծայր աստիճան գրգռվեն**: Քրիստոնեությունը մահաբեր թշնամանք է երկրի տերերի, «երևելիների» հանդեպ, դրա հետ մեկտեղ, **քրիստոնեությունն ատելություն է խելքի, հպարտության, առնականության, ազատության նկատմամբ**: Քրիստոնեությունը **ատելություն է զգացմունքի, երջանկության զգացողության և, ընդհանրապես, երջանկության նկատմամբ**: Քրիստոնեությանը անհրաժեշտ էին բարբարոսական հասկացություններ ու գնահատանք, որպեսզի իշխի բարբարոսներին: **Քրիստոնեությունը ցանկանում է *վայրի գազաների* վրա իշխանություն ունենալ, դրան հասնելու նրա միջոցը նրանց հիվանդացնելն է: Դարձնել թույլ՝ սա է**

ձեռնասուն և «քաղաքակիրթ» դարձնելու քրիստոնեության դեղատոմսը» (Ф. Ницше, Сочинения, Москва, 1990, т. 2, стр. 646-647):

Նիցշեն նույն աշխատության մեջ շարունակում է. «Ես դատավճիռ եմ կայացնում: Ես դատապարտում եմ քրիստոնեությունը: Քրիստոնեական եկեղեցու դեմ ես այնպիսի ահավոր մեղադրանք եմ ներկայացնում, որը երբևէ չի հնչել մյուս բոլոր մեղադրողների շուրթերից: **Նա ինձ համար բոլոր հնարավոր այլասերումներից ամենավատթարագույնն է, ամենածայրահեղ այլասերությունը**: **Քրիստոնեական եկեղեցին ոչ մի բանի չի խնայել և ամեն ինչ փչացրել է: Նա ամեն արժեք արժեզրկել է, ամեն ճշմարտություն դարձրել է սուտ, ամեն կարգի շիտակություն դարձրել է հոգեկան ստորություն:** Համարձակվում են ինձ ասել նրա «մարդասիրական» փառաբանումների մասին: **Փորձանքներից հեռու պահելը խորապես հակասում է նրա շահին**: **Նա գոյություն ունի փորձանքների-դժբախտությունների շնորհիվ**: Նա աղետներ-փորձանքներ է ստեղծել, **որպեսզի իրեն հավերժացնի**... Օրինակ, մեղքերի որդը և հենց այդ փորձանքներով էլ եկեղեցին հարստացրել է մարդկությանը՝ «աստծու առջև հոգիների հավասարությունը» խաբեություն է...Դա մտքի պայթուցիկ նյութ է, որը վերջապես վերածվել է հեղափոխության՝ հասարակական ամբողջ իրավակարգի կործանման ժամանակակից գաղափարն ու սկզբունքը: **Այդպիսին է քրիստոնեական պայթուցիկ նյութը (դինամիտ)** ...Քրիստոնեական «մարդասիրական» առաքելությունը՝ մարդկությունից աճեցնել ինքն իրեն հակասող, ինքնապղծման արվեստ, ինչ գնով էլ լինի՝ **խաբեության կամք**, **արհամարհանք ու զզվանք՝ ամեն կարգի բարու և վայելուչ բնազդի նկատմամբ**: Ըստ իս, քրիստոնեական օրհնանքը տգրուկայնությունն է՝ որպես եկեղեցու վարմունքի միակ գործելաձև՝ «սրբությունների» թոքախտավոր իդեալն է և արյան մինչև վերջին կաթիլը ծծելը, որի հետ հեռանում է ամբողջ սերը, ամբողջ հույսը. «խաղաղ»՝ ամբողջ իրականության ժխտման կամք, խաչ՝ տարբերանշան ընդհատակյա, ամենաընդհատակյա դավադրության, որը երբևէ գոյություն է ունեցել, **դավադրություն՝ ընդդեմ առողջության, գեղեցկության, հաջողակության, համարձակության, ոգու, հոգեկան բարության, ընդդեմ հենց կյանքի**... Քրիստոնեության

դեմ այս հավերժ մեղադրանքը ես ցանկանում եմ գրել բոլոր պատերի վրա, որտեղ էլ որ լինեն: Իմ տառերն այնպիսին են, որ նրանցով կույրերը կսկսեն տեսնել: Ես քրիստոնեությունը անվանում եմ մի *կուռ* **մեծ անեծք**, մի *կուռ* մեծ ներքին փչացում, մի *կուռ* մեծ վրիժառության բնազդ... **Ես քրիստոնեությունը կանվանեմ մարդկության վրա մի ամոթալի բիծ:** Իսկ մենք թվագրությունը հաշվում ենք այդ ոչ բարի օրվանից, որից սկսվեց ամբողջ ճակատագրականը՝ քրիստոնեության առաջին օրվանից: Իսկ ինչո՞ւ չենք հաշվարկում նրա վերջին օրվանից... Ինչո՞ւ ոչ հենց այսօրվանից» (Նույն տեղ, էջ 691-692):

Այս հատվածում նույնպես, ինչպես նախորդներում, քրիստոնյաները եբրայեցիների-հրեաների նկատմամբ որևէ գերակայություն չունեն:

Ընդհանրացնելով նշեմ, որ այս բաժնի հենց սկզբում դրված էր այն հարցը, թե քրիստոնեական ուսմունքը իր հետևորդներին ի՞նչ գերակայություններ ու արտոնություններ է սահմանում՝ հրեաների-հուդայականների նկատմամբ: Սակայն ինձ չհաջողվեց Նոր կտակարանում գտնել քրիստոնյաների համար սահմանված որևէ գերակայություն կամ արտոնություն. դրանց հետքն անգամ չկա: Բացի նշված գերակայությունների բացակայությունից, այդ կրոնը անհատին շեղում է բնությունից օժտված հատկանիշների բնականոն դրսևորումներից, այդ թվում՝ ազգայինի գիտակցումից: Ավելին, Նոր կտակարանը նույնիսկ կյանքն անիմաստ է համարում և նահանջի-կորստի ու մահվան հետ հաշտեցման գաղափարախոսություն է քարոզվում: Քրիստոնեական կրոնը անշեղորեն որդեգրած երկրներին կարելի է համեմատել թավշյա թակարդում հայտնվածների հետ, որոնց համար դեպի կորուստ ու մահ տանող ճանապարհը այնպես է քողարկված, որ նրանց թվում է, թե իրենք նախանձելի վիճակում են և իրենց երանելի ապագա է սպասվում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աստվածաշնչի բովանդակությունից պարզ երևում է, որ այն մարդկությունը բաժանում է երկու դասի, որից մեկին (հրեա ժողովրդին) տալիս է աշխարհին տիրանալու, լիարժեք կյանքով ապրելու և ապագա ունենալու իրավունք, իսկ մյուսին (օտար ժողովուրդներին)՝ ստորադասի, տառապալի ու թշվառ կյանքով գոյատևելու և ոչնչացման ենթակայի կարգավիճակ: Սա թույլ է տալիս ենթադրել, որ Աստվածաշունչը գրելուց առաջ հրեաները իրենց մտքում արդեն ունեցել են աշխարհը գրավելու ծրագիրը, որը այժմ հայտնի է սիոնիզմի ծրագիր անվամբ:

Հայտնի է, որ Աստվածաշունչը (Հին և Նոր կտակարաններ) գրել են հրեաները: Ըստ մասնագետների, Աստվածաշունչը կազմող հրեա հեղինակները իրենց ձեռքի տակ ունեցել են բազում ժողովուրդների բանահյուսության, գրականության, արվեստի, իրավագիտության, պատմության վերաբերյալ նյութեր, որոնք վերաձևելով, հիմնականում կեղծելով, հարմարեցրել են իրենց մարդակուլ նպատակներին և դարձրել կրոնական դոգմաներ: Նրանք Հին կտակարանում արտացոլել են սիոնիզմի ծրագիրը, իսկ Նոր կտակարանում՝ այդ ծրագրի իրականացման մեխանիզմները: Հրեաները աշխարհին տիրանալու նպատակ հետապնդող իրենց ծրագիրը միաձուլել-բաղեղել են դիցառասպելներին, հեքիաթներին, իրական ու հորինված պատմություններին, գրականությանը, իրավունքի և այլ ոլորտներին և ամփոփել Աստվածաշնչի մեջ՝ ներկայացնելով որպես աստծո խոսքով գրված բացարձակ ճշմարտություններ: Այսինքն, հրեա հեղինակները սիոնիզմի գաղափարախոսությունն ու ծրագիրը դարձրել են կրոնական դոգմա:

Փաստորեն, հրեաները կրոն են ստեղծել թե՛ իրենց, թե՛ օտար ժողովուրդների համար: Իրենց ազգային կրոնի՝ հուդայականության հիմքում դրել են լիարժեք կյանքը, նորանոր ձեռքբերումների հասնելու գաղափարը, հրեաների նպատակներն ու իղձերը: Իսկ օտար ազգերի համար նախատեսված հեզություն, խոնարհում, նահանջ, կյանքի արհամարհում քարոզող քրիստոնեական կրոնում քարոզվում-պարտադրվում է, որ նաև պաշտվեն հրեաների աստվածները, հրեաների առասպելներն ու պատմությունը համարվեն իրականություն: Այսինքն՝ հրեաները

աշխարհին տիրանալու իրենց ծրագրի իրականացման գործում ներգրավել են քրիստոնյա ժողովուրդներին, որոնք կրոնական պարտադրանքով դարձել են հրեաների հլու ծառաները և, փաստորեն, կերտում են իրենց ինքնառչնչացումը:

Հրեաների կողմից Նոր կտակարանի մերժումը և սուրբ գիրք չհամարելը կարելի է միայն դիվանագիտական նուրբ քայլ համարել, քանզի Նոր կտակարանում է, որ դրված են աշխարհին տիրելու իրենց ծրագրի իրականացման մեխանիզմները: Հետևաբար, հրեաների սուրբ գիրքը Հին և Նոր կտակարաններն են, այսինքն՝ Աստվածաշունչն ամբողջությամբ: Ուրեմն, հատուկ նպատակով է արվում այն կեղծ քարոզը, թե իբր հուդայականությունը թշնամորեն է տրամադրված քրիստոնեության նկատմամբ, երբ այդ երկու կրոնների նպատակները լիովին համընկնում են. քրիստոնյաներն աստիճանաբար պետք է նվազեն, իսկ հրեաները պետք է բազմանան ու տիրանան աշխարհին:

Աստվածաշնչում հրեաները ներկայացված են զավթողի, տիրողի, սպանողի, իսկ քրիստոնյա ժողովուրդները՝ նահանջողի, ծառայի, նահատակվողի կարգավիճակում: Այդտեղ կարմիր թելի պես ձգվում է գիշատչի և զոհի (տեր-ստրուկ, հարձակվող-նահանջող, գրավող-զիջող, սպանող-սպանվող) միջև հոգեբանական հաշտեցման պարտադրանքը, ինչը հանգեցնում է նրան, երբ թե՛ գիշատիչը, թե՛ զոհը իրենց դերակատարումներն աստվածատուր են համարում:

Չնայած հուդայականների և քրիստոնյաների աստվածը նույն Եհովան է, սակայն հուդայականությունն իր հետևորդներին մղում է աշխարհին տիրանալուն, իսկ քրիստոնեությունն իր հետևորդներին մղում է դեպի աշխարհից հրաժարվելը: Ելնելով այս հանգամանքից, կարելի է մտածել, թե այս երկու կրոնների նպատակները միմյանցից տրամագծորեն տարբեր են և միմյանց հակադիր, սակայն դժվար չէ ցույց տալ, որ հուդայականության և քրիստոնեության նպատակները համընկնում են, և այդ կրոնները մեկ ամբողջություն են կազմում: Հուդայական՝ հրեաների կրոնի և քրիստոնեության ծառերը նույն արմատն ունեն, որոնց միավորմամբ ձևավորվում է Ընդհանուր հուդայականություն կրոնի (ծառի) սաղարթը: Ընդհանուր հուդայականություն կրոնի մեջ ներառված այս երկու կրոնների նպատակը նույնն է՝ իրականացնել աշխարհը սիոնիստներին հանձնելու ծրագիրը: Այսինքն, հրեա հեղինակներն իրենց նպատակների

իրականացման համար գտել են հանճարեղ լուծում՝ կրոնի միջոցով օտար ազգերի ոչնչացումն իրականացնել հենց այդ նույն ազգերի ձեռքով:

Պատմության մեջ աննախադեպ երևույթ: Երբ մի ժողովուրդ, չունենալով տնտեսական ու ռազմական հզորություն, անգամ՝ չունենալով հայրենիք ու աշխարհով մեկ ցրված լինելով, կարողանում է ստեղծել իր նպատակներին ենթակա յուրօրինակ, այսպես ասած, «կրոնագաղափարական կայսրություն» և այդ «կայսրության» մեջ ներառված ազգերի՝ ֆինանսական, տնտեսական և մտավոր ներուժը ծառայեցնել աշխարհին տիրանալու իր ծրագրին:

Հակաբնական այս ժանտախտի տարածման ու առաջընթացի ամբողջ մեղքը պատկանում է Աստվածաշնչին: Ահա թե ինչ է ուսուցանում Աստվածաշունչը (Հին կտակարանը) հուդայականության հետևորդներին՝ հրեաներին: Դուք՝ հրեաներդ, աստծուն հաճո ու սիրելի եք, նրա զրուցակիցը, խորհրդատուն ու գործընկերը: Դուք տիեզերքը կառավարողին՝ Քրիստոսին ծնող ժողովուրդն եք և ձեր ուժով ու իմաստությամբ ոչ միայն գերազանցում եք բոլոր ժողովուրդներին, այլ երբեմն նաև՝ աստծուն. հրեա Հակոբը գոտեմարտում հաղթեց աստծուն, իսկ հրեա Սողոմոնն այնպիսի իմաստություն ուներ, ինչպիսին չէր եղել մինչ ինքը և չի լինելու իրենից հետո: Միայն հրեա կանայք են, որ կարող են գրավել աստծո ուշադրությունը. Սառան հղիացավ աստծուց և ծնեց Իսահակին, իսկ կույս Մարիամը՝ Քրիստոսին: Երկնքում է ոչ միայն հրեաների հավերժ թագավոր Քրիստոսը, այլև հրեաներ՝ Աբրահամը, Սառան, Իսահակը, Հակոբը, Մովսեսը, Սողոմոնը, կույս Մարիամը... Աստվածաշնչի տառից ու բովանդակությունից հասկացվում է այն, որ դուք՝ հրեաներդ, բոլոր ժողովուրդներից վեր եք: Միայն դուք ունեք աստծո սեփական, սուրբ ու ընտրյալ ժողովրդի կարգավիճակ: Ձեր օրենքները գրված են աստծո ձեռքով: Աստված աշխարհի մյուս ժողովուրդներին ստեղծել է միմիայն նրա համար, որպեսզի նրանք ծառայեն ու երկրպագեն ձեզ, ապա ոչնչացվեն աստծո կամոք և ձեր ձեռքով: Այդ ծրագրի իրականացման համար աստծո և հրեաների միջև ռազմական դաշինք է կնքված: Աստվածն իր զորքը միացրել է հրեական զորքին և այդ միացյալ բանակի գերագույն-գլխավոր հրամանատարը հենց ինքն է՝ Եհովան, հետևաբար, կռվել հրեաներիդ դեմ նշանակում է՝ կռվել

աստծո դեմ: Աստվածը մեկ ամբողջ օր կասեցրեց արևի և լուսնի ընթացքը, որպեսզի ձեր հակառակորդները կամ նրանք՝ որոնց դուք կամենում էիք ոչնչացնել, չկարողանային մթության մեջ թաքնվել ու փրկվել: Աստծո հրամանով ձեր թշնամիների դեմ են կռվում հիվանդությունները, ջրերը, միջատները, աստղերը, բնական երևույթները: Անողոք եղեք ձեր հակառակորդների և, ընդհանրապես, ուրիշ ժողովուրդների նկատմամբ. սպանեցեք նույնիսկ նորածիններին, ոչնչացրեք ուրիշ ժողովուրդներին և նրանց մշակույթը: Աստված հրեաներիդ իրավունք է վերապահում, և նույնիսկ պարտադրում է՝ ուրիշ ազգերին հիմարացրեք, խաբեք, գողացեք ու կողոպտեք նրանց ունեցվածքը, ստրկացրեք նրանց՝ ծառայեցրեք ձեզ և ապա անողոքաբար ոչնչացրեք ու տիրացեք նրանց բոլոր հարստություններին: Այս ամենի համար դուք՝ հրեաներդ, մեղքի, խղճմտանքի, զղջման զգացողություն չպետք է ունենաք, քանզի դուք միայն աստծո կամքն եք կատարում, հակառակը, դուք կպատժվեք, եթե այդպես չվարվեք: Հրեաներիդ հիվանդությունները բաժին են հասնելու աշխարհի մյուս ժողովուրդներին: Հրեան պարտադրաբար պետք է սիրի և աջակցի հրեային, ինչպես նաև ների նրա թերությունները: Հարստացեք ուրիշների աշխատանքով, ուրախ ու զվարթ՝ լիարժեք կյանք վայելեք և հոգացեք, որպեսզի ձեր սերունդները նույնպես փառավոր կյանքով ապրեն: Ձեր, ձեր անասունների, հասկերի, այգիների սերմերի մեջ ամլություն չպիտի լինի: Բազմացեք և ձեզնով ծածկեք աշխարհը:

Նույն Աստվածաշնչում (Նոր կտակարան) քրիստոնեական կրոնի հետևորդներին ուսուցանվում է՝ ապրեցեք հեզ ու հնազանդ, խոնարհ, տխուր, թախծոտ ու կիսասոված կյանքով՝ ուրիշներին ծառայելով: Սգացեք, տառապանք ու չարչարանք կրեք: Ձեր հագուստի, մարմնի, կենցաղի մաքրության մասին հոգ մի՛ տարեք: Մերժեցեք բանականությունը և ձեր գիտակցությանը մի՛ վստահեք: Սիրեցեք ձեր թշնամիներին և մի՛ հակառակվեք նրանց: Հարստություն մի՛ կուտակեք, իսկ ունեցածն էլ՝ բաժանեք: Քիչ աշխատեք, վաղվա ապրուստի մասին հոգ մի՛ տարեք: Հրաժարվեք ձեր զավակներից, ծնողներից, հարազատներից, որպեսզի մեռնելուց հետո դրանց հարյուրապատիկը ստանաք: Մի՛ օգնեք ձեր հարազատներին, ընկերներին և օգնողներին, այլ օգնեք ձեր թշնամիներին և ձեզ

զրկանք ու տառապանք պատճառողներին: Մահը գերադասեք կյանքից և ապավինեք անդրշիրիմյան կյանքին: Մի՛ սիրեք իրական աշխարհը՝ բնությունն իր հարստություններով, դրանց պահպանության մասին հոգ մի՛ տարեք: Իմացե՛ք, ձեր տունն ու հայրենիքը երկնքում է: Հնարավորինս շուտ հրաժարվեք կյանքից, որպեսզի մեռնելուց հետո արժանանաք Քրիստոսի երկնային արքայությանը և հավիտյանս ապրեք ուրախ ու երջանիկ կյանքով: Ձեր ցանկություններից ու կրքերից զերծ մնացեք: Սերնդատվության դեպքում եկեղեցին պետք է նորածնի մեղքերին թողություն տա, քանզի նա ծնվել է մեղք գործելու միջոցով: Ցմահ պահպանեցեք ձեր կուսությունը, որպեսզի երկնքում Քրիստոսի և նրա հոր՝ Եհովայի զավակները լինեք:

Փաստորեն Աստվածաշունչը Երկիրը՝ իրական ֆիզիկական աշխարհը հանձնում է հրեաներին, իսկ երկինքը՝ քրիստոնյաներին: Սա տեսությունն է: Պարզվում է, որ այս խնդրում գործնականը լիովին համապատասխանում է տեսությանը: Հրեաների և քրիստոնյաների բազմադարյան երկխոսությունում մշտապես առկա է եղել հրեաների հետևյալ առաջարկը՝ «**Երկիրը՝ մեզ, երկինքը՝ ձեզ**», ինչին քրիստոնյաները ո՛չ միայն համաձայնել են, այլև եռանդուն լծված են դրա իրականացման գործին:

Պետք է փակվի ցանկացած հանցագործության ճանապարհը: Այս առումով, անհրաժեշտ է Աստվածաշունչը էկոլոգիական, այսինքն՝ բազմակողմանի փորձաքննության ենթարկել և ցույց տալ նրա մեջ ամփոփված վտանգածին գաղափարները և նրա կողմից մարդկությանը հասցրած անասելի վնասներն ու ավերածությունները: Աստվածաշունչը պետք է նաև քրեագիտական փորձաքննության ենթարկվի...

Վերջաբանի փոխարեն

ԺԱՄՆ Է ՍԹԱՓՎԵԼՈՒ
«ՄՐԲԱԶԱՆ» ՊԱՏԵՐԱԶՄ՝ ԾՐԱԳՐՎԱԾ ԱՎԱՐՏՈՎ

Միմյանց դեմ կանգնած են մարտի պատրաստ հուդայականության ու քրիստոնեության սպառազինված զորքերը, իրենց աստվածների՝ Եհովայի և Հիսուս Քրիստոսի գլխավորությամբ: Մարտն սկսելուց առաջ զորահրամանատարները ոգեշնչման խոսք են ուղղում իրենց զինվորներին:

Եհովան դիմում է իր զորքին.

-Իմ սիրելի զինվորնե՛ր, աստվածային կյանքս անմնացորդ նվիրել եմ ձեզ և ամբողջ գոյությանս ընթացքում միայն մեկ նպատակ եմ հետապնդել. թե ինչ հնարքով Երկրագունդը դարձնեմ ձեր սեփականությունը: Այս նպատակ-ծրագիրը իրականացնելու համար է, որ ձեզ դարձրել եմ կեղծ, վաշխառու, ուխտանենգ, օտար ժողովուրդներին չհանդուրժող, նրանց նկատմամբ անմար ատելություն ու թշնամանք ունեցող, նրանց սպանելուց հաճույք և ծիսական բավարարվածություն ստացող և ամենագլխավորը՝ ծայր աստիճան դաժան:

Դուք մի փոքրաթիվ, այս տասը միլիոնանոց բանակով ելել եք ավելի քան երկու միլիարդանոց գերհզոր մի բանակի դեմ և, հավանաբար, ձեզնից շատերը տեսնելով այս երկու բանակների ուժերի անհամեմատելիությունը, կարող են մտածել, որ ես չկշռադատված քայլ եմ կատարել և ձեզ այստեղ եմ բերել միայն գլխովին կոտորելու նպատակով: Եվ իրոք, եթե ձեր թշնամի բանակի զինվորներն առողջ բանականություն ունենային, մտախեղված չլինեին, ապա ձեզնից անգամ մեկը փրկվելու հնարավորություն չէր ունենա: Սակայն, քսանմեկերորդ դարի գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումների արդյունքում ստեղծված զինատեսակներով սպառազինված այդ բանակը միայն հեռվից է հզոր ու անսասան թվում: Իրականում այն

կազմալուծված է, քանզի այդտեղ ներգրավված են հարյուրավոր պետություններ և հազարավոր փոքրաքանակ ժողովուրդներ, այսինքն՝ ամբողջ քրիստոնյա աշխարհը, որոնք, մեղմ ասած, միմյանց հետ այնքան էլ համերաշխ չեն և ինչպես ասացի՝ արդեն դարձել են մտախեղ: Բացի այդ, իմ կազմած ծրագրով դուք նրանցից խլել եք մարդկային բանականությունը և նրանց մտքում դաջել եք աշխարհի կեղծ պատկերը: Այս մեծագույն հաջողությանը հասել եք դիվանագիտական ու հոգեբանական մի նրբագույն զենքի՝ քրիստոնեական կրոնի միջոցով:

Իմ ընտրյալնե՛ր, դուք պարտավոր եք իմանալ, որ այդ կրոնի նախագծի մեջ եղած բոլոր դոգմաները, նախապես մանրազնին ու բծախնդրորեն քննարկել եմ ձեր հայրերի հետ և միայն երկկողմանի համաձայնությունից հետո ավետարանիչները գրել են քրիստոնեություն կրոնը, որն ընդհանուր առմամբ, մահվան գաղափարախոսություն է: Այդ կրոնի մեջ ոչ մի օգտակար բան ու իրական փաստ չկա և չէր էլ կարող լինել, քանի որ աշխարհը հրեաներին պատկանելու ծրագիրը դրել եմ ձեր կրոնի (Հին կտակարանի) մեջ, իսկ քրիստոնեական կրոնում (Նոր կտակարանում) դրված է այդ ծրագրի իրականացման մեխանիզմները: Եվ ահա այս սրբազան օրը, Ես պետք է ձեզ հայտնեմ այն գաղտնիքը, որի մասին նախկինում չեմ խոսել: Այդ գաղտնիքը իմացել են միայն ձեր աշխարհիկ ու կրոնական առաջնորդները, և այժմ, երբ սիոնիզմի ծրագիրը մեծ առաջընթաց ունի և նրան որևէ լուրջ խոչընդոտ չկա, արդեն կարող եմ նաև ձեզ հայտնել: Իրականում, հուդայականությունը և քրիստոնեությունը միաձուլված մի կրոն է, որի մի կտորը դուք եք իրականացնում, իսկ մյուս մասը՝ օտար ժողովուրդները: Եթե չլիներ քրիստոնեությունը, և առերես չասվեր, թե իբր դուք՝ հուդայականներդ, ատում եք քրիստոնեությունը և քրիստոնյաներին, ապա ձեր այսօրվա ձեռքբերումները չէին լինի, քանզի այդ կրոնի ուժով է, որ օտար ժողովուրդները ինքնամոռաց ծառայում են ձեզ, փաստորեն հենց իրենք են իրականացնում աշխարհը հրեաներին հանձնելու ծրագիրը: Ահա թե ինչու, քրիստոնեական կրոնում փառաբանվում է աղքատությունը, հեզությունը և մահը, իսկ իրական կյանքն

արհամարհված է: Փաստորեն, քրիստոնեական կրոնի առանցքը մահը որպես փրկություն ընկալելն ու մահը երազելն է, իսկ նահատակվելը՝ աներևակայելի բարձր ու սրբադաս նվաճում է համարվում: Այդ կրոնի հետևորդներին դուք համոզել եք, որ ունեցվածքից, կրքերից, հաճույքներից և ընդհանրապես, նորմալ կյանքից հրաժարվելով, թշնամուն սիրելով ու նրան աջակցելով և շուտափույթ գերեզման մտնելով՝ մեռյալների աշխարհում կապրեն երանելի ու փառավոր կյանքով (հուդայական զորքում՝ ծիծաղ, քրքիջ ու հռհռոց): Ի հակադրություն քրիստոնեությանը, ես ձեզ պարտադրել եմ միայն վայելքներով ապրելը, իսկ անդրշիրիմյան կյանքի առումով ոչ մի խոսք, քանզի մեռնելուց հետո ապրելու այդ հրեշավոր սուտը միայն հիմարացած ժողովուրդների համար է:

Հավատացնում եմ ձեզ, որ եթե դուք երկու միլիարդ ոչխար կոտորելու պարտադրանք ունենայիք, ապա այն իրականացնելը ձեզ համար անհամեմատ ավելի դժվար կլիներ, քան նույն քանակությամբ զինավառ այս զինվորներին, որովհետև ոչխարները, ճիշտ է, կոտորվելիս լուրջ դիմադրություն չեն ցուցանում, սակայն նրանք, ի հակադրություն քրիստոնյաների, հեռու են նահատակվելու մտքից:

Այսօրվա ճակատամարտում ձեր հաղթանակի երաշխիքներից ամենագլխավորն այն է, որ դուք ձեր անկոտրում կամքի և հետևողական աշխատանքի շնորհիվ կարողացել եք քրիստոնեությունը պարտադրել բազում ժողովուրդների, իսկ նրանց ազգային աստվածներին և մյուս սրբերին երկնքից իջեցրել ու պատվազրկել եք, ինչպես նաև նրանց ազգային օրենսդրությունները համապատասխանեցրել եք սիոնիզմի ծրագրին, այսինքն՝ նրանց «շնչառությունը» հարմարեցրել եք հուդայականության նպատակների հետ: Միայն այդ մեծագույն նվաճմամբ՝ քրիստոնեության միջոցով, դուք արդեն ձեզ համար ստեղծել եք կրոնական մի հզոր կայսրություն, որն ընդգրկում է աշխարհի բնակչության գրեթե մեկ երրորդը:

Իմ սիրելի զինվորնե՛ր, եթե ձեր հաղթանակը ինձ համար կասկած հարուցեր, ապա ես չէի համարձակվի ձեզ այստեղ բերել, քանզի գիտեմ, թե ինչ կոշտ բնավորություն ունեք. առ

այսօր հիշում եմ, թե Հակոբը գոտեմարտում ինչ հեշտությամբ հաղթեց ինձ, իսկ զայրացած Մովսեսը հենց իմ ներկայությամբ ջարդուփշուր արեց այն քարե սալիկները, որոնց վրա ես ձեզ համար օրենքներ էի գրել:

Դուք կարող եք հարցնել, թե ի՞նչ իմաստ ունի այս ժողովուրդներին կոտորել-վերացնելը, երբ նրանք արդեն մեր խոնարհ ծառաներն են, իսկ Սուրբ գրքում էլ գրված է, որ հրեան պետք է ծառա ունենա: Հարցը տրամաբանական է, բայց դուք գիտեք, որ այդ գրվածքը ես եմ թելադրել, ուստի հասկացեք. հրեային ծառա ունենալու պարտադրանքը բխում է իմ սահմանած օրենքից, սակայն դուք պետք է հեռատես լինեք և ըմբռնեք, որ մեծաթիվ ծառաներ ունենալը խիստ վտանգավոր է հենց ձեր ապագայի համար, քանզի նրանք նաև բնական չվերականգնվող պաշարներ են սպառում, հետևաբար պետք է փակել այդ բերանները: Չէ՞ որ Երկրագունդն իր բոլոր հարստություններով որպես սեփականություն միայն ձեզ եմ կտակել, ինչից հետևում է, որ նշված բնական պաշարները նույնպես ձեր սեփականությունն են և դուք պարտավոր եք սահմանափակել դրանց սպառումը: Այս հարցում արդեն հսկայական դեր է կատարել քրիստոնեական կրոնը. միայն կուսությունը ցմահ պահպանելու և ծնունդը որպես մեղք հռչակած դոգմաները, երկու հազար տարվա ընթացքում, միլիարդավոր ծնունդներ են կանխել: Իսկ ինչ վերաբերում է ծառաներ ունենալուն, ապա դուք կարող եք չանհանգստանալ, այստեղ բերված ժողովուրդների մնացորդներից անհրաժեշտ քանակություն թողել եմ իրենց ապրելավայրերում, որպեսզի ժառանգաբար ծառայեն ձեզ:

Մարդկային մտքին, սովորույթներին, պատկերացումներին ու ընկալումներին բացարձակորեն անսովոր ու անհարիր ձեր հանդուգն բնավորության, գլխավորապես քարսրտության շնորհիվ, դուք կարողացաք մարդկության մեծամասնության կոկորդն առավել ամուր սեղմել այն ժամանակ, երբ թվում էր, թե դա արդեն անհնար է: Դուք դա արեցիք գիտության ու լուսավորության տարածվածության պայմաններում, երբ պետք է որ քրիստոնյա ժողովուրդները սթափվեին, գիտակցության գային, այսինքն՝ նրանց որպես ձեռնասուն օգտագործելը

պետք է որ անհնարին դառնար: Սակայն պարզվեց, որ դուք կարողանում եք կուռ կապանքներով բարուրել նաև հանճարեղ գիտնականներ, բարձրակարգ տեխնոլոգիաներ, կրթված բնակչություն ունեցող երկրներին: Ինձ նաև զարմացրեց ձեր մտքի ու գործունեության աներևակայելի թափն ու թռիչքը, երբ տեղեկացա, որ աղքատ երկրներին օգնելու և Երկրագնդի էկոլոգիական հրատապ խնդիրների լուծման նպատակով ստեղծել եք աշխարհի բոլոր երկրներն ընդգրկող «Կայուն զարգացում» որոգայթ-հայեցակարգը և ի զարմանս, բոլոր պետությունների ղեկավարները, նույնն է, թե բոլոր պետությունները հոժարակամ ընկել են ձեր մահաբեր թակարդը: Սրանով ձեր հուդայաքրիստոնեական կրոնական կայսրությունը կլանեց նաև մյուս կրոնների հետևորդ ժողովուրդներին: Եվ դրանից քսան տարի չանցած, աշխարհի գրեթե բոլոր պետությունները ձեր պարտապանները դարձան, իրենց տարածքների 30 տոկոսի գրավով, քանի որ դուք «Կայուն զարգացում» խաբկանք-ուտոպիային վարպետորեն կցել եք ձեր գլխավոր դրամատներն ու ֆոնդերը և գլխավորապես Գլոբալ էկոլոգիական ֆոնդի (GEF) և վարկատու կազմակերպությունների դրամաշնորհների ու կաշառքների ուղեկցությամբ աղքատ երկրներին օգնելու, ինչպես նաև էկոլոգիական հրատապ խնդիրները լուծելու ակնհայտ կեղծ քարոզչությամբ, բոլոր պետություններին առատորեն վարկեր տվեցիք, իսկ առածն ասում է. «հիմարի գլուխը գայլի փորումն է»:

Մեծ գոհունակություն և փառավորվածություն եմ ապրում, երբ տեսնում եմ ձեր կատարած աներևակայելի գործերը և հպարտ եմ, որ հենց ձեզ եմ ընտրել որպես սեփական ու սուրբ ժողովուրդ:

Եվ ահա այսօր, այս սրբազան ու բախտորոշ ճակատամարտն սկսելուց առաջ, ձեզ քաջալերող նաև այլ տեղեկություններ պիտի հաղորդեմ: Ձեր դեմ ճակատամարտող բանակի գերագույն գլխավոր հրամանատարը թլփատվելուց զատ, Հորդանան գետում հատուկ նպատակով մկրտված, ռաբբիական հմտությունների գիտակ հրեա է, և կարծիք կա, որ նա իմ որդին է: Այդ բանակում հենց այժմ գործում են մեր քարոզիչները,

որոնք տարածում են, թե զենք վերցնելը, մարդ սպանելը, թշնամուն ատելը և նրան չօգնելը մեծագույն մեղքեր են: Այս քարոզիչների կյանքի ապահովության համար ստեղծված են կարգապահական հատուկ ջոկատներ, որոնց գլխավորում են պետությունների նախագահները, գլխավոր ոստիկանապետերը և մյուս բարձրաստիճան պաշտոնյաները: Կարգապահական այս ջոկատների առաքելություններից է՝ բացահայտել և տեղում մահապատժի ենթարկել բոլոր նրանց, ովքեր իրենց սրտում դեռևս պահպանել են ընտանիք, ազգ, հայրենիք, ազգային պետություն, ազգային բանակ անօգուտ ու աստվածամերժ, այսինքն՝ եհովայամերժ գաղափարները, չեն ղեկավարվում «Կայուն զարգացում» հայեցակարգով, արհամարհում են այլընտրանքային զինվորական ծառայությունը և լիովին չեն հավատում ինձ՝ Եհովա աստծուս: Նաև կարգադրել եմ, որ պատժիչ ջոկատները առավել դաժանությամբ վարվեն իրենց ազգային աստվածներին հիշողների հետ, քանզի այդ հիշողությունը կարող է հիմք հանդիսանալ ազգային վերածննդի և աշխարհասիրության վերականգնման համար: Քրիստոնեական կրոնի հոգևոր հայրերն իրենց եպիսկոպոսների, վարդապետների և մյուս հոգևորականների հետ, միլիոնավոր խմբերի բաժանված, շրջում են բանակով մեկ՝ խնկարկելով, զինվորների վրա անուշահոտ օծանելիքներ սփռելով, նահատակման նախապատրաստելու համար անհրաժեշտ քարոզներ ու ոգեկոչող խոսքեր ասելով, հոգեթովիչ երգեր երգելով, պատարագներ մատուցելով՝ Վերին Սիոնի համար անխոտոր ճանապարհ են հարթում: Հոգևորականների խմբերին նաև հանձնարարված է հենց ճակատամարտի ընթացքում յուրաքանչյուր նահատակի համար ծիսական թաղում կազմակերպել և չմոռանալ հոգեհացը:

Իմ սեփական ժողովո՛ւրդ, իմ քաջ զինվորնե՛ր, վստահ եղեք, որ նրանց թնդանոթներից և մարտական ինքնաթիռներից ձեր վրա եկող արկերն ու ռումբերը սովորական հրավառության համար են նախատեսված, ուստի մնում է, որ դուք հավատարիմ մնաք ձեր բնավորությանը: Հիշեցեք, որ ձեր ծննդյան ութերորդ օրն արդեն դուք համտեսել եք նրանց արյունը: Նաև ճակատամարտի ընթացքում ձեր մտքում անընդհատ կրկնեք Թվոցում գրված իմ

խոսքը՝ «Ահա այս ժողովուրդը մատակ առիւծի պէս պիտի ելլէ ու առիւծի պէս պիտի բարձրանայ ու պիտի չպառկի մինչեւ որ որսը չուտէ ու սպանուածներուն արիւնը չխմէ»: Ի զե՛ն: Մաղթում եմ ձեզ դաժանություն ու քարսրտություն:

Զինվորները միաբերան ու ոգեշունչ գոչեցին. «Եղիցե՛ կամքը Քո»:

Քրիստոնեական բանակի գերագույն գլխավոր հրամանատարը՝ Հիսուս Քրիստոսը իր զինվորներին հորդորում է.

-Իմ սիրելի զավակներ, իմ հոգնած ու տառապած ոչխարներ, եկեք ինձ մոտ և ես ձեզ կպարգևեմ սփոփանք ու հավերժական հանգստություն: Շուրջ երկու հազար տարի է, ինչ սերնդեսերունդ հավատարմորեն ծառայել եք Ինձ և իմ Հորը: Վերջապես եկել է աստվածային այն պահը, երբ յուրաքանչյուր ոք, ով աստծո արքայության հասնելու համար զրկանք ու տառապանք է կրել և մոլեռանդ նվիրում է ցուցաբերել, պետք է փոխհատուցում ստանա: Հայրս արդեն ընդունել է իմ խնդրանքն ու պաղատանքը. Նա համաձայնեց, որ բոլորիդ երկինք՝ Վերին Սիոն բարձրացնեմ, որպեսզի դուք ձեր սեփական աչքերով տեսնեք, թե Ես ինչ արքայության մեջ եմ ապրում: Այս երանելի նպատակին հասնելու համար ձեզնից պահանջվում է միայն նահատակվել, և ուրիշ ոչինչ, մնացած բոլոր հարցերը, այդ թվում և ձեզ երկինք բարձրացնելը, արդեն Իմ և Հորս գործն է: Դուք Իմ կրոնի դոգմաները լավագույնս գիտեք: Ուրեմն եղեք համբերատար, հավաքվեք հոծ բազմությամբ, որպեսզի ձեզ աստծո արքայություն պարգևող թշնամի կոչվածների նետած ռումբերն ու արկերը առավել արդյունավետություն ունենան:

Նաև պետք է սահմանեմ հետևյալը, ով սիրահոժար ու ջերմեռանդորեն չի գնալու նահատակման և նահատակվելիս էլ իրեն սպանողին չի օգնելու, ուրեմն թող Գեհենի բաժին դառնա և հավերժորեն տառապի այդ դժոխքի անմար կրակների և փոշիացած ու ջրիկացրած հանքարդյունաբերական թափոնների մեջ...

Նահատակության արժեքը չգիտակցելը մեղք գործելուց զատ նաև անխղճություն է Իմ կրոնի գաղափարախոսությունը

ձևավորողների և դրա տարածման համար անասելի գումարներ ծախսողների հանդեպ:

Իսկ այժմ, իմ սիրելի ու հեզ զավակներ, այս սուրբ ճակատամարտն սկսելուց առաջ և ամբողջ մարտի ընթացքում ջերմեռանդ ու ինքնամոռաց աղոթեք, աղոթեք ծնկաչոք՝ ձեռքերն ու հայացքը երկինք հառնած:

Զինվորները հիացած ու ոգեշնչված գոչում են՝ «Մենք բոլորս, մեր որդիների և բոլոր սիրելիների հետ արդեն դրված ենք սուրբ զոհասեղանի վրա. ընդունի՛ր, Տե՛ր, մեր այս կամավոր նվերը, միայն թե անդրշիրիմում Քո սեղանակիցը դառնանք»:

-Խորաթափանց, հեռատես ու հեզ իմ սիրելի զավակներ, ընդունում եմ այդ հաճելի նվերը: Վստահ եղեք, որ ձեզ համար մեռյալների աշխարհում անհոգ ու լիառատ հավիտենական կյանքն ապահովված է: Ուրեմն, ի զեն՝ ի փառս Ինձ և իմ հայր Եհովա աստծու, դարձեք երանելի նահատակներ:

Ճակատամարտն ավարտված է: Քրիստոնյաների բանակից ողջ է մնացել միայն գերագույն գլխավոր հրամանատարը, իսկ հուդայական բանակում՝ բացարձակորեն ոչ մի զոհ: Միայն մի արտակարգ դեպք է տեղի ունեցել. հակառակորդի զոհերի արյան մեջ լողացող զինվորներից մեկը հանկարծակի և անհասկանալի պատճառով ուշաթափվել է, ինչը սիոնական մամուլը տարածում է որպես հակասեմիտների կողմից խորամանկորեն կազմակերպված ահաբեկչության հետևանք:

Պատերազմի ելքից ու միմյանցից գոհ Եհովան և Հիսուսը որոշում են երկու միլիարդ նահատակներին թաղել նույն գերեզմանում և այն անվանել «Նահատակյաց սրբազան գերեզման», այդտեղ թանկարժեք ու կայուն հուշակոթող կառուցել և վրան ոսկե տառերով գրել նահատակված երկրների ու ժողովուրդների անունները, իսկ տարածքը անտառապատել, ապա անտառի կենտրոնական մասում կառուցել Սողոմոնի տաճարի կեսը, որը պետք է ամբողջանա միայն այն ժամանակ, երբ նույն քրիստոնեության կամ նմանատիպ այլ կրոնի կամ կրոնների միջոցով նահատակման կգնան հնդիկները, չիները, կորեացիները, ճապոնացիները և դեռևս չոչնչացված այլ ազգերը, որից հետո աշխարհի բնական պաշարներն արդեն

կգտնեն իրենց օրինական տիրոջը՝ արյունարբու Եհովա աստծո ընտրյալ ժողովրդին (http://bnaban.am/2015/12/30):

Հավելված

ՔԱՐԱՆՁԱՎԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Մարդկության պատմության վաղնջական շրջանից մեզ են հասել տեղեկություններ՝ վախի, սարսափի և այլ միջոցով մարդկանց վրա ազդելու, նրանց կառավարելի դարձնելու մասին: Համեմատաբար, ոչ հեռու անցյալի հեղինակ Պլատոնի (427-3.. մ.թ.ա.) երևակայական կիրճի բնակիչների մղձավանջային կենսակերպը նկարագրող «Քարանձավի խորհրդանիշը» աշխատությունում հստակ ու համապարփակ ներկայացված է, թե մարդու համար ինչ կործանարար հետևանք կարող է ունենալ այն, երբ նրան զրկում են ֆիզիկական աշխարհի՝ իրական կյանքի ընկալումից և նրա մտածելակերպում ամրագրում են կեղծ գաղափարներ, որի համար կեղծիքն ու երևակայականն է իրական համարվում: Այդ աշխատությունից պարզորոշ հասկացվում է, որ մարդկանց իրական կյանքից մեկուսացնելը և ձեռնասուն դարձնելը կարող է անշրջելի լինել, եթե աշխարհի կեղծ պատկերի քարոզը մատուցվում է մանկության տարիներից:

Ահա այդ աշխատությունից մի հատված, որտեղ Սոկրատեսը (469-399 թթ. մ.թ.ա.) զրուցում է իր աշակերտներից մեկի հետ:

«-Դրանից հետո,- ասացի ես (այսինքն՝ Սոկրատեսը,- Հ.Ս.),- դու կարող ես կրթվածության և անկրթության վերաբերյալ մեր մարդկային բնույթը նմանեցնել, մի այսպիսի կացության... Պատկերացրու, որ մարդիկ գտնվում են քարանձավանման մի ստորգետնյա կացարանում, որի ողջ երկարությամբ լայն բացվածք է ձգվում: **Եվ փոքրուց նրանց ոտքերին ու պարանոցին կապանք է դրված, այնպես, որ մարդիկ չեն շարժվում և տեսնում են միայն այն, ինչը ուղիղ նրանց աչքերի առջևումն է** (ընդգծումը,- Հ.Ս.), քանի որ այդ շղթաների պատճառով նրանք չեն կարող գլուխը շրջել: Այդ մարդիկ մեջքով շրջված են հեռու բարձունքում վառվող կրակից դուրս եկող (հառնող) լույսի կողմը, իսկ կրակի և բանտարկյալների արանքով անցնում է վերևի ճանապարհը՝ անջրպետված ոչ բարձր պատով՝ նման այն վարագույրին, որի հետևում աճպարարներն իրենց օգնականներին են տեղավորում, երբ վարագույրի վերևում տիկնիկներ են ցուցադրում:

- Դա ես պատկերացնում եմ,- ասաց Գլավկոնը:

- Ուրեմն, պատկերացրու նաև այն, որ ուրիշ մարդիկ, այդ պատից այնկողմ այլևայլ կահկարասիք են տեղափոխում՝ դրանք պահելով այնպես, որ պատի վերևից տեսանելի լինեն: Նրանք տեղափոխում են քարից ու փայտից պատրաստված արձաններ և կենդանի արարածների այլևայլ պատկերներ: Այդ ընթացքում, ինչպես պատահում է (լինում է), տեղափոխողներից ոմանք խոսում են, իսկ մյուսները՝ լուռ են:

- Տարօրինակ պատկեր ես նկարագրում և տարօրինակ կալանավորներ:

- Մեզպես: Նախ, արդյոք դու կարծում ես, որ այդպիսի վիճակում գտնվող մարդիկ, բացի իրենց առջևում եղած քարանձավի պատի վրա կրակի գցած, իրենցը լինի, թե ուրիշներինը, ստվերներից այլ բան տեսնո՞ւմ են:

-Ինչպե՞ս նրանք մեկ ուրիշ բան տեսնեն, երբ իրենց ամբողջ կյանքի ընթացքում ստիպված են գլուխը անշարժ պահել:

- Իսկ պատից այնկողմ, տեղափոխվող առարկանե՞րը: Արդյո՞ք այդ նույն բանը տեղի չի ունենում և նրանց հետ:

- Ա՛յսինքն:

- Եթե կալանավորները ի վիճակի լինեին միմյանց հետ զրուցել, ապա դու չես կարծում, որ նրանք չէին համարի, որ անվանում են այն, ինչ տեսնում են:

- Անպայման, այդպես:

- Հետո: Եթե նրանց զնդանում արձագանքեր այն ամենը, ինչ ասում է մոտակայքով անցնող ամեն ոք, ապա կարծո՞ւմ ես, որ այդ ձայները նրանք կվերագրեին ոչ որևէ այլ բանի, այլ անցնող ստվերներին:

- Ձևսը վկա, ես այդպես չեմ մտածում:

- Այդպիսի բանտարկյալները մոտակայքով տեղափոխվող առարկաների ստվերները լիովին ու ամբողջությամբ կընդունեին որպես իսկություն:

- Դա բացարձակորեն անխուսափելի է:

- Այժմ, դիտարկենք անբանականության շղթաներից նրանց ազատվելը և դրանից բուժվելը: Այլ կերպ ասած, թե այդ ամենը ինչպես կընթանար, եթե նրանց հետ բնականորեն պատահեր նման մի բան:

Երբ նրանցից որևէ մեկին ազատում են շղթաներից և նրան հանկարծ ստիպեն՝ կանգնել, պարանոցը շրջել, քայլել, վերև նայել՝ դեպի լույս: Նրա համար տառապալի կլինի կատարել այդ

ամենը: Նա անկարող կլինի լույսի պայծառ ճառագման տակ նայել այն առարկաներին, որոնց ստվերներն էր տեսել նախկինում: Եվ ի՞նչ ես կարծում, նա ինչ կասի, երբ նրան ասեն, որ նախկինում նա դատարկ բաներ է տեսել, իսկ այժմ՝ մոտենալով կեցությանը և գալով դեպի իրականը, նա կարող է ճիշտ տեսակետ ձեռք բերել: Իսկ եթե նրան մատնացույց անեն իր առջևով անցնող այս կամ այն առարկաներ և ստիպեն, որ պատասխանի այն հարցին, թե սա ի՞նչ է: Արդյոք, դու չես կարծում, որ դա նրան ծայր աստիճան դժվարություններ կպատճառի և նա կմտածի, որ իր նախկինում տեսածի մեջ ավելի շատ ճշմարտություն կա, քան նրանում՝ ինչը այժմ են ցույց տալիս:

- Իհարկե, նա այդպես կմտածի:

Իսկ եթե նրան ստիպեն ուղիղ նայել հենց լույսին, ապա արդյոք չե՞ն ցավի նրա աչքերը և նա շտապ չի՞ շրջվի դեպի այն, ինչն ի վիճակի է տեսնել, համարելով, որ դա իրականում ավելի հավաստի է, քան այն առարկաները, որ այժմ իրեն ցույց են տալիս:

- Այո, այդպես է:

- Եթե մեկն ու մեկը նրան բռնությամբ զառիթափով քարշ տա վերև՝ սար բարձրացնի և նրան բաց չթողնի մինչև նրան արևի լույսի տակ չհանի, այդպիսի բռնության համար արդյո՞ք նա չի տառապի և չի զայրանա: Իսկ երբ նա լույսի տակ դուրս գա, պետք է որ նրա աչքերը այնքան ախտահարված լինեն արևի լույսի փայլատակումից, որ նա չի կարողանա տեսնել այն առարկաներից և ոչ մեկը, որոնց իրական լինելու մասին այժմ նրան ասում են:

- Այո, հենց միանգամից նա չէր կարող:

- Այստեղ սովորություն է պետք, եթե նա ստիպված է տեսնել այն ամենը, ինչը վերևումն է: Պետք է սկսել ամենահեշտից՝ նախ, պետք է նայել ստվերին, որից հետո՝ մարդկանց և այլ առարկաների ջրի մեջ արտացոլմանը և միայն դրանից հետո՝ իրական առարկաներին: Ընդ որում, այն ինչ երկնքումն է և հենց երկինքը, նրան ավելի հեշտ կլիներ տեսնել ոչ թե ցերեկը, այլ՝ գիշերը, այսինքն, նայել աստղերի լույսին և լուսնին, այլ ոչ արևին ու նրա լույսին:

- Անտարակույս:

- Եվ վերջապես, ես կարծում եմ, որ այդ մարդը արդեն ի վիճակի կլիներ նայել արևին, իր սեփական ոլորտում և հասկանալ նրա հատկությունները, չսահմանափակելով ջրում

կամ այլ օտար միջավայրերում նրա խափուսիկ արտացոլման դիտարկումով:

- Իհարկե, այդ դրան մատչելի կդառնա:

- Եվ այդ ժամանակ, նա արդեն կեզրակացնի, որ Արևից է կախված և տարվա եղանակները, և տարիների ընթացքը և տեսանելի տարածությունում եղածներին Արևն է կառավարում, և նա է ինչ-որ ձևով հանդիսանում պատճառն այն ամենի, որ այդ մարդը և մյուս բանտարկյալները նախկինում տեսել են քարանձավում:

- Պարզ է, որ այդ դիտարկումներից հետո նա կգա այդպիսի եզրակացության:

- Ինչպես և, հիշելով իր նախկին կացարանը, այնտեղի խորիմաստությունը և համաբանտարկյալներին, արդյո՞ք նա իր վիճակի փոփոխությունը երանություն չի համարի, և արդյոք չի խղճա իր ընկերներին:

- Եվ նույնիսկ, շատ:

- Իսկ եթե բանտարկյալները միմյանց ինչ-որ պատիվ ու գովեստ էին տալիս՝ մեծարելով նրան, ով մոտակայքում շարժվող առարկաների ստվերները դիտելիս առանձնանում էր առավել սուր տեսողությամբ և մյուսներից ավելի լավ էր հիշում, թե սովորաբար, ինչն է առաջինը երևում, և ինչը՝ հետո, ինչը՝ միաժամանակ և դրա հիման վրա կանխագուշակում էր ապագան: Ապա, ի՞նչ ես կարծում, այն մարդը, ով արդեն կապանքներից ազատվել է, կփափագեր այդ ամենը և կնախանձեր նրան, ով նրանց մեջ ազդեցիկ էր և ումը կալանավորները երկրպագում են: Թե, նա կզգար այն, ինչի մասին ասում է Հոմերոսը, այսինքն, ուժեղագույն կերպով կցանկանար... աղքատ երկրագործի օրավարձու մշակ լինելով՝ համապազօրյա հաց հայթայթել և ավելի շուտ կտանի ամեն ինչ, միայն թե չկիսի կալանավորների պատկերացումները և չապրի այնպես, ինչպես նրանք:

- Ես կարծում եմ, որ նա կնախընտրի տանել ամեն ինչ, միայն թե նրանց պես չապրի:

- Քննության ենթարկիր նաև հետևյալը: Եթե այդպիսի մարդը նորից այնտեղ իջներ և նույն իր տեղը նստեր, արևի լույսից այդքան հանկարծակի հեռանալը, արդյո՞ք նրա աչքերը չեն համակի խավարով:

- Իհարկե:

- Իսկ եթե նա այդ հավերժ բանտարկյալների հետ, այն ստվերների նշանակությունը պարզաբանելու առումով, ստիպված լիներ նորից մրցակցե՞լ: Քանի դեռ նրա տեսողությունը չի բթացել և աչքերը այդ միջավայրին չեն հարմարվել, իսկ դրա համար շատ ժամանակ է պահանջվում, արդյո՞ք նա ծիծաղելի չէր թվա: Նրա մասին կասեին, թե վերև բարձրանալուց հետո վերադարձել է խաթարված տեսողությամբ, ուրեմն, չարժե անգամ ձգտել դեպի վեր: Իսկ նրան, ով կփորձեր կալանավորներին ազատել, որպեսզի նրանց տանի դեպի վեր, միթե՞ կալանավորները նրան չէին սպանի, եթե նրանց ձեռքն ընկներ:

- Անմիջապես կսպանեին» (Платон, Собрание сочинений, Москва, 1994, т. 3, стр. 295-298):

Գուցե այս և նմանատիպ ստեղծագործություններնի պատճառով էր, որ Աթենքի կրոնական և աշխարհիկ իշխանությունները Սոկրատեսի հետ դաժան հաշվեհարդար տեսան: Դժվար է պատկերացնել, որ մանավանդ կրոնական-եկեղեցական հայրերը կարողանային հանդուրժել մի մարդու, ով նրբագույն ու տպավորիչ օրինակներով կարողանում էր աղբակալումից մաքրել մարդկանց բանականությունը և պայմաններ ստեղծել բանական գաղափարների ծլարձակման ու զարգացման համար, մարդկանց մոտ հաստատել վերլուծական մտքի գերակայությունը և նրանց մոլորություններից հետ բերել ու հեռու պահել: Մ.թ.ա. 399 թ. իրականացվեց քաղաքական աղմկահարույց պատվեր. Սոկրատեսի դեմ քրեական հայց ներկայացրին՝ նրան մեղադրելով Աթենքում պաշտված աստվածներին չհավատալու, ուրիշ աստվածներին պաշտելու և երիտասարդությանը բարոյապես քայքայելու և փչացնելու մեջ, երբ թվարկած երեք մեղադրանքն էլ համարվում էին պետության դեմ ուղղված հանցագործություն:

Ինչպես տեսնում ենք, ներկայացված երեք մեղադրանքներից երկուսը կրոնական են, սակայն պարզվում է, որ երրորդ մեղադրանքը նույնպես կրոնական բնույթի է, քանզի դատարանը «երիտասարդությանը փչացնել, բարոյապես քայքայել» ասելով նկատի է ունեցել այն, որ Սոկրատեսը զրույցներում երիտասարդությանը իբր քարոզել է իր պաշտած աստվածներին: Փաստորեն, Սոկրատեսի դեմ հարուցված բոլոր մեղադրանքները զուտ կրոնական բնույթի էին: Ըստ

Սոկրատեսի աշակերտների և նրա մյուս ժամանակակիցների, նա հիմնավորապես ապացուցել է իր անմեղ լինելը, այդուհանդերձ Աթենքի դատարանը, 501 դատավորների մասնակցությամբ, կայացրել է մահվան դատավճիռ՝ Սոկրատեսին պարտադրել է թույն խմել:

Երիտասարդներին սխալ ճանապարհ ցուցանելու մեղադրանքի առումով Սոկրատեսը ասել է, որ ինքը նույն գործն է կատարում, ինչ անում էր իր տատմեր մայրը. եթե իր մայրը օգնում էր երեխաների ծնվելուն, ապա ինքը՝ փիլիսոփայական զրույցների միջոցով օգնում է, որպեսզի երիտասարդության մոտ ճշմարտությունը ծնվի, այսինքն՝ նույնպես տատմոր առաքելություն է իրականացնում: Ելնելով եկեղեցու հայրերի բազմադարյան գործելակերպից և ժողովրդին միշտ ստրկական վիճակում տեսնել ցանկացողների շահերից, չպետք է զարմանանք, որ հանճարեղ մտքի և քաղաքացիական պարտքի բարձր գիտակցման տեր անհատականությանը թույն է մատուցվել: Օրինակ, կրոնական հայրերը ինչո՞ւ պետք է ներեին մի մարդու, ով հասարակության մեջ մեծ հեղինակություն ուներ և ի չիք էր դարձնում մարդկանց մոլորեցնողների կատարած աշխատանքը: Իսկ այդ աշխատանքը բոլորին է հայտնի՝ երևակայական պատժիչ էակների սպառնալիքով սարսափի մեջ պահել մարդկանց և նրանց մեջ ամրագրել այդ սարսափը, ինչը նշանակում է մարդուն զրկել լիարժեք կյանք վայելելու բնատուր պարգևից: Իսկ Սոկրատեսի նշած «ճշմարտության ծնունդը» հնարավորություն է տալիս մարդուն ձերբազատել նպատակայնորեն նրա մտքում մատուցված ու ամրագրված սարսափից, վերակենդանացնել նրա խաթարված ու կենսունակությունը կորցրած բանականությունը և ճանաչել իրական կյանքն ու վայելել այն: Արդյո՞ք պարզ չէ, որ դա նշանակում է՝ մահացու հարված հասցնել մոլորեցնողներին՝ կրոնի սպասավորներին և նրանց գործունեությունից օգտվող անձնական շահ հետապնդող իշխանավորներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք..... 3

Նախաբան..... 5

Հուդայականություն՝ հրեականություն..... 17

1. Հրեան հաղթել է աստծուն 17

2. Հրեաները հանդիպում են աստծուն և զրուցում նրա հետ..... 24

3. Հրեան զայրացել ու ոչնչացրել է աստծո գրած օրենքը..... 24

4. Աստվածը հրեաներին համարում է իր սեփական ժողովուրդը 29

5. Աստվածը երկնային մարմիններին հանում է հրեաների թշնամու դեմ 34

6. Եհովան հրեաների ռազմական դաշնակիցն է..... 39

7. Աստված հրեաներին օգնում է գողություն կատարելիս..... 53

8. Հրեան աստծուն զգուշացնում է, որ երդմնազանց չլինի..... 37

9. Աստված հրեային գերիմաստություն է շնորհել 61

10. Աստվածը խոստացել է հրեաների թիվը դարձնել անհամար. 67

11. Աստվածը աշխարհը կտակել է հրեաներին 72

12. Աստվածը հրեաներին թույլատրել է ապրել ծառայի աշխատանքով 79

13. Աստվածաշունչը՝ մարդկային մտքի խեղման ակունք..... 82

Քրիստոնեություն 113

1. Քրիստոսը հորդորում է՝ ծառայել օտարներին, տառապել..... 113

2. Ինքնախարազանում, աղքատություն, տխրություն, վիշտ, 119

3. Տգիտություն, թուլամտություն 124

4. Բուժվել աղոթքով, աղոթելիս իրական կյանքից անջատվել... 130

5. Հրաժարվել աշխատանքից, իրական կյանքը չկարևորել 141

6. Ուրանալ սեփական անձը, մահը բարիք համարել..... 150

7. Չարին չհակառակվել, սիրել թշնամուն, մի դատիր, որ չդատվես 163

8. Հրաժարվել մարմնավոր ցանկություններից, չսիրել իրական աշխարհը 167

9. Ցմահ պահպանել կուսությունը..... 173

10. Վախ, տագնապ, սարսափ..... 183

Ամփոփում 195

Վերջաբանի փոխարեն. Ժամն է սթափվելու 200

Հավելված . Քարանձավի խորհրդանիշը..... 209

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աստուածաշունչ, Պէյրութ, 1985 թ.

Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990 թ.

Հայոց լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004 թ.

Ղ. Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982 թ.

Գ. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 2015 թ.

Մ. Շախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմը, Երևան, 1979 թ.

Աթեիզմ և կրոն, Երևան, 1988 թ.

Кровь в верованиях и суевериях человечества, Санкт-Петербург, София, 1995 թ.

Ա. Ռոբերտսոն, Քրիստոնեության ծագումը, Երևան, 1965 թ.

Հին արևելքի պոեզիա, Երևան, 1982 թ.

Спиноза, Богословско-политический трактат, Москва, 2003 թ.

Л. Н. Великович, Религия и церковь в США, Москва, «Наука», 1978 թ.

М. С. Беленький, Иудаизм, Москва, 1966 թ.

Գ. Տաթևացի, Սողոմոնի գրքի մեկնությունը, Երևան, Անկյունաքար, 2009 թ.

Б. В.Якушин, Гипотезы о происхождения языка, Москва, «Наука», 1985 թ.

Լեո, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1962 թ.

К. Маркс, К еврейскому вопросу, Москва, 2001 թ.

Г. Климов, Божий народ, лекции по высшей социологии, Краснодар, 1999 թ.

Мухамед, Минск, 2004 թ.

С. М. Дубнов, Краткая история евреев, Ростов-на-Дону, 1997 թ.

Ա. Ղանալանյան, Ավանդապատում, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969 թ.

Международный сионизм, история и политика, Москва, «Наука», 1977 թ.

Ч. Ломброзо - Антисемитизм и современная наука,

Г. Державин - Мнение об отвращении в Белоруссии голода и устройстве быта евреев, Москва 2003 թ.

Զրույցներ կրոնի և գիտության մասին, Երևան, 1965 թ.

Ս. Նեղոս Սինայեցի, Աղօթքի մասին, Գանձասար, հ. Ա, Երևան, 1992 թ.

Աղոթագիրք, Երևան, 1991թ.

Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989 թ.

Ջ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1989 թ

Սերինե, Իմ երկրային ուղին, Երևան, 2005 թ.

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» կրոնական, մշակութային, լրատվական պաշտոնաթերթի (2004 թ. մայիս Ա, թիվ 9, 173

Мифы и легенды Австралии, Москва, «Наука», 1976 թ.

Կ. Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982 թ.

Корнелий Тацит, Сочинения (в двух томах), Ленинград, Наука, 1969 թ.

Сочинения святого Иустиана философа и мученика, Разговор с Трифоном Иудеем, М., 1864 թ.

(http://mamul.am/am/news/88494/, 2016.07.28

Ռ. Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, մ.թ.ա. IX դ- մ.թ.XIX դ, Երևան, 2001 թ.

Д. Робинсон, Масонство, Забытые тайны, Москва, 2000 թ.

Ксенофонт, Киропедия, Москва, «Наука», 1976 թ.

Спиноза, Богословско-политический трактат, Москва, 2003, стр. 4-9

И.Р. Григулевич, Инквизиция, Москва, 1985թ.

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981 թ

Ф. Ницше, Сочинения, Москва, 1990 թ.

http://bnaban.am/2015/12/30

Платон, Собрание сочинений, Москва, 1994 թ.

АКОП АРБАКОВИЧ САСНАСАРЯН

БАРХАТНАЯ СМЕРТЕЛЬНАЯ ЛОВУШКА

Анализ посвящен регулирующей роли Библии в мировоззрении последователей иудейской и христианской религий. Библия через религию примиряет иудеев (евреев) со статусом властителей мира, а христианские народы - со статусом слуг. Сопоставлением фактов показано, что иудаизм (религия евреев) и христианство преследуют одну и ту же цель, и что эти две религии на самом деле едины и представляют одну религию. В данной книге единство религий евреев и христиан называется Всеобщим иудаизмом.

HAKOB SANASARYAN

VELVET DEATH TRAP

The analysis is dedicated to the regulatory role of the Bible in the worldview of the followers of the Jewish and Christian religions. Bible is a religious duty reconciling Jews (Jews) with the status of the rulers of the world, and the Christian people with the status servitors. Juxtaposition of the facts shows that Judaism (the religion of the Jews) and Christianity are pursuing the same goal and that the two religions are actually united and represent the same religion. In this book, the unity of the Jewish and Christian religions is called the Universal Judaism.

Հակոբ Արբակի Սանասարյան

ՄԱՀՎԱՆ ԹԱՎՇՅԱ ԹԱԿԱՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄ ԱՌ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ

Թուղթը՝ կավճապատ
Տպագրությունը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 13.75 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ :

Տպագրված է «**Նոյյան Տապան**» տպագրատանը:
«ՆՏ Հոլդինգ» ՍՊԸ
ՀՀ Երևան 009, Իսահակյան 28
Հեռ.՝ (060) 351122
Էլ. վոստ՝ contact@nt.am
Կայք՝ http:\www.nt.am